



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7-11
378

2812

1374
85

0-50



2016

85
0-505

№ 9387
Յ. ԳԱԼԻ ՕՅՏԱՐՈ

ՕՅՏԱՐՈ

ՃԵՐՄԱԿ ՎԱՐԴԸ

ԹԱՐԴԱՐԱՆԵՆՆԵՍ

Ե. Մ. Ս.



ՏԵՐ ԵՆ ՀՐԱՏԱՐԱԿԻ

ՏԻՐԱՆ ՍԱՐԴՐՈՒՐՆ ՏԵՏԵՆԱՆ

1002
6365
91



2003

Զվիռնիս

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՏԵՆԱՆ

1874



Ա. Անգլոյ Քրօֆֆէրիոյ,

Այս տողերը՝ որոնք բու շինիոյ հիւրընկալ շուրին մէջ հիստուած եւ զանի պատող դառն լուծերէն ներշնչուած են, այս տողերը տխուր՝ իրրեւ հրաժեշտ, մոռտանջ՝ իրրեւ տարագրութիւն, րեզ կու գան:

Ի նչպէս որ ալ ըլլան, ներքէ որ իրենց հակտին վրայ կրեն բու անունդ, եւ բու գեղեցիկ հողիդ վրայ առանձնանալու թուականը, զի ժամանակաց տառապանացն ու մարդոց վատութեանը շնորհիւ՝ իմ վերջին ապաստանարանս այն եղած է Իտալական երկրին վրայ:

Ո՛վ որ րեզ հարցնէ, թէ ո՞րչափ հշմարտութիւն կայ այս պատմութեանս մէջ, պատասխանէ՛ իմ կողմէս. րիչ հշմարտութիւն կայ այն մարդուն համար, որ հարեանցի կը նայի. շատ՝ անոր համար, որ խորը կը թափանցէ, եւ շինծու անուանց ներքեւ՝ իրողութեանց պատմութեանը միտ կը դնէ:

Մնաս բարո՛վ, սիրելի Քրօֆֆէրիոյ. երբ այն խնդիրները զորս հիմա բաական համարեցայ ստուերագրել, երկամով կարտին կամ վիճարանութեան լուսով լուծուին, — այն ատեն նորէն կը տեսնուինք:

Ք. ԴԱԼԼ՝ ՕՆԳԱՐՈ

Ի Ճրակիլէ 1858

ՃԵՐՄԱԿ ՎԱՐԴԸ

© 1925

Ա.

ՀՈԳՍԻՈՐ ԲՃՅՈՒՆ



ՎԵՐՑՍՈՒԹԱՅԻ բարձր Հորին վերայ Հարիւրի
չափ բնակարան կայ ցրուած, այս մրտտ
խրճիթներէն մէկուն մէջ՝ իրր երեսուն տարե-
կան մէկը պառկած էր խեղճ անկողնոյ մը վե-
րայ, մաղերը՝ և երկայն ու անզարդ մծրուքը
դրն թէ վայրենիի մը տեսք կու տային անոր, մթնշաղին գողցօջ
լուսովն անոր սոճոյն և սուր դէմքին վերայ նայած ժամանակդ
կրնայիր հասկընալ թէ անոր մտքն՝ ինչպէս նաև մարմինը ծանր
աշխատութեամբ յողնած էր :

Մերթ ընդ մերթ իր տխուր թմրութենէն սթափելով՝ աչքերը
կը դարձունէր դէպ ՚ի սենեկին գուռը, որն որ բնակարանին ալ
գուռն էր, և մտադիր կը կենար, որպէս թէ կըլսպատէր որ կեն-
դանի էակ մը՝ Հողեվաբքի գառն վայրկեաններն սփոփելու գայ :

Յիրաւի այն կողմի բժշկին կըլսպատէր, զոր իր գրայիններէն բա-
րեսիրտ պատաւ մը դացեր էր կանչելու, երկու օրէ ՚ի վեր անոր

կըստասէր, բայց 'ի զուր: Այս գիւղակը ձորին ամենէն ամոյսի բու-
 շիղիւնուն մէջ կորսուած էր, և չեմ կրնար բնել թէ երբէք ջորի
 մը հոն ոտք կոխած ըլլար. ուրեմն կարելի՞ էր փութածան սոյն-
 լուծիւն յուսալ բժշկէ՞ մը: Այս խեղճ լիւնարնակնքն ըստ
 մեծի մասին առանց բժշկի՞ սոյնութեան կը ծնանին, կ'ապրին ա. կը
 մեռնին:

Այլ սակայն Ալլոյ — այս էր հիւանդին անունը — յոյս դրած
 էր այնպիսի անձի մը բարեսիրութեանը վերայ զոր կը ճանչնար,
 և որուն հրակէր մ'ալ գրած էր մատիտով այս խեղճ բնակարանին
 միակ զարդարանքն ու իր միակ ընկերն եղող «Տանդէսին» մէջ: Կ'
 վերջին երեւոյն ճերմակ թուղթը փրոյունելով:

Վերջապէս սկսաւ ախանջին ձայն մը համնել որն որ Վէրցաս-
 քայի անընդհատ մըմունջը չէր. իրօք մարդու մը քայլելու ձայնն
 էր, որն որ շատ չանցաւ գրանն առջին եկաւ. բայց հիւանդը տես-
 նելով որ փոխանակ իւր սոյսած բժշկին՝ թեմին քահանայն էր
 ներս մանողը, տխրեցաւ: Պառաւ՝ բժշկին ու քահանայն միկանց
 կանչելու սովորած ըլլալով, նախ և առաջ քահանային դայեր էր
 զոր աւելի կարեւոր կը համարէր: Ալլոյ, ինչպէս որ կ'երեւայ,
 նոյն կարծիքէն չէր. այլ սակայն երկայն առանձնութեանէ մը յե-
 աոյ և յաշխարհէս մեկնելու վեհ վայրկենին՝ ս՛վ որ ալ ըլլայ դէ-
 մերնիս ելլողը, քաղցր կու գայ զայն ընդունել:

Քահանային դէմքը վտտահութիւն գրաւող չէր. տարիքով քա-
 ուստունէն աւելի էր, յաղթանդամ՝ և չէկ, աչքերը խորամանկ և
 ահարկու. հաւատարմին ու լրտես. Տիգլինոյի նահանգին և մաս-
 նաւորապէս անոր ձորերուն մէջ այս տեսակ ապրանք չարակիր:
 Քահանայն՝ քանի մը վայրկեան հիւանդը դիտելէ յետոյ, խօսելու
 մասին ինքն առաջին չըլլալու համար սկսաւ իբրև մեքենայ «Խա-
 զարութիւն տանս այսմիկ» մըմուտով անխոյնոյն մտեռնալ:

— Բարի եկար՝ ս՛վ որ ալ էք, ըսաւ Ալլոյ, յողնութեամբ ել-
 նելով նստելով:

— Չեր հրաւերոյն եկայ:

*Երևուիլի բանաստեղծ Իսապաղի՝ Ժ.Գ. դարու:

— Շիտակը, տէր Հայր, ես զձեզ կանչել չտուի, բայց թէ
 որ բարի սրտով մը կու գար, Հնորհակալ եմ՝ ձեր գլխասրտու-
 թեննէն:

— Այս կողմերը բնակող պատաւ կին մ'եկաւ ինձ խնայոց որ
 ծանր հիւանդ մը կայ. ես ալ ըսելուս պէս վաղեցի եկայ իմ սուրբ
 պաշտօնս կատարելու:

— Այդ ձեր գիտնալու բանն է. ես աւելի կ'ուզէի . . . բժիշ-
 կը տեսնել:

— Թէ որ այն բժիշկը կանչելու մարդ զրկեցիք նէ, չեմ յու-
 սար որ դայ. կարծեմ չէք դիտեր որ քաղաքականութեան պատ-
 ճառաւ բժշկութիւնը ձգեց, հիմա այնպիսի բաներու նայելու ժա-
 մանակ չունի: Քահանայն կ՛ծու և հեղնական եղանակաւ մը կը խօ-
 սէր, և իւր անքաղաքավար խօսքերուն վերայ աւելցոյց «Ըբէ ինչ
 որ կ'ընես» առածը:

— Ինչ, հարցոյց Ալլոյ. բժիշկ Սիլվանին ալ այս կողմերս չէ:

— Երկու ամիսէ աւելի է որ պաշտօնատան մէջ բազմած է,
 ուր հասարակացեալութեան դանձը ծծելու, և երկիրը՝ Տիրոջն
 սոյնոյն միջ աշխատող բարեպաշտ կրօնականներէն մարբելու կ'ըզ-
 բաղի:

— Ինչ կ'ըսէք. հապա ես զանի տեսնել կ'ուզեմ նէ . . . :

— Ինձի նայէ, ինձի. ձեր կեանքն անոր դեղադիրներէն կա-
 խեալ չէ. թէ որ անոր մեռուցած մարդերն ու բժշկածները հա-
 շուելու ըլլանք . . . :

— Բայց ատոր համար չէ որ ես զանի տեսնել կ'ուզեմ. իմ
 հիւանդութիւնս դեղերով բժշկուելիք տեսակէն չէ. իմ ցաւս, տէր
 Հայր, շատ խոր է:

— Հասիլըցայ, հոգւոյդ վերայօք կը խօսիք. շատ աղէկ, դա-
 ւալի. բայէր սիրտերնիդ ինձի. Աստուած իշխանութիւն տուած է
 ինձ կապելու և արձակելու:

Ալլոյ ցաւաղին կերպով գլուխն երեքոց:

— Ինչո՞ւ կը տարակուսիք, զմախս. մեղքերնիդ որչափ ծանր
 ալ ըլլան, սուրբ Հայրը ինձ իշխանութիւն տուած է այսպիսի ստի-
 պողական վայրկենի համար. խօսեցէք:

— Բայց կարծեմ չկրցաք միտքս լաւ հասկընալ. իմ միտքս խոս-
տովանիլ չէ :

— Ինչ, ըսաւ քահանայն զարմացմամբ . խոստովանելու միտք
չունիք . անանկ է նէ ինչո՞ւ զիս կանչել տուիք :

— Գարձեալ կ'ըսեմ, տէր Հայր, ես զձեզ կանչել չտուի . և
շատ ալ կը յաւիմ որ նեղութիւն տուեր են ձեզ :

— Ո՛չ երբէք, ո՛չ . ձեզի համար աւելի դէշ : Դա ի՞նչ գիրք
է այդ տեղ . «Աստուածային կատակերգութիւն» . հա՛ . . . հիմա
հասկըցայ զիմացինիս ինչպէս մարդ ըլլալը . Աստուածային կատա-
կերգութիւն, Աստուածային բաները ձեզի համար կատակերգու-
թիւն են, այո՛, այս գիրքը առաջին կարգի արդիւնալ գիրք մ'է,
և դուք նշովեալ էք :

— Մանաւոր պարագաներու մէջ ալ տրձակումն կրնաք տալ .
անանկ չէ, հարցուց հիւանդը, կատակելով :

— Ատոր կը պատասխանեմ, «Արեամ ալ, չեմ կրնար ալ » . ա-
տի ապաշխարողին տրամագրութենէն կախումն ունի . բայց նախ և
առաջ այս գիրքը այրել պէտք է :

— Աղէկ, բայց ի՞նչպէս ընենք . այս տեղ ասիկայ այրելու հա-
մար ոչ կրակ կայ և ոչ դործիք :

— Այդ ես կը հոգամ, ըսաւ քահանայն, ծոցէն փնջիկ մը ծծմբառ
և ճրագի մը կտոր հանելով :

— Շատ աղէկ, տէր Հայր, անմիջապէս ճրագը վառեցէք, ար-
գէն մտ թը կոխեց :

— Ահա վառեցի :

— Շնորհակալ եմ. զանք իմ Տանդէսիս . որովհետեւ իմ յա-
ռաջիկայ երկար ճանրորգութեանս մէջ հետս չգիտի կրնամ տա-
նիլ, եթէ կը հաճիր, դուք առէք զանի :

— Ինչ, Տանդէսի գիրքն է ատի . անունը լսած եմ . թէպէտ
աշխարհական, սակայն երևելի Աստուածաբան մ'էր . կ'երևայ որ
կարդացած էք . ուրեմն աւելի գիւրաւ զիւրար սիտի հասկընամք :

— Չեմ յուսար թէ կրցաք լաւ դատել . դուք քահանաներ,
միայն պարզ Ժողովրդոց խեղճ ուսմիկներուն հետ կրնաք գիւրաւ
խօսք հասկընալ ու հասկըցունել :

— Հասկըցայ որ դուք ալ քահանաներն իրրև աղիտութեան
սլաշտոյան ամբասանողներէն էք . դուք ալ դարուս զիտականնե-
րէն մէկն ըլլալու էք . աշխարհային գիտութիւնները, զաւակս,
փոխանակ լուսաւորելու կը խաւարեցընեն մարդու միտքը . մահուան
խաւարը փարատող գիրքը մէկ հատիկ է, Աւետարանը :

— Աւետարանն ալ կը ճանչնամ, զանի մեկնելը միայն իրենց
սեպհականողներուն շատերն ալ կը ճանչնամ, ես ալ ձեր . . . ե-
րէն մէկն եմ, կամ լաւ ևս ըսելով, էի :

— Ինչ, սրուայ քահանայն՝ ոտքի վրայ յատկելով, և խոր խո-
րատես գորշ բիբերը հիւանդին վրայ անիկելով :

— Հանդարտեցէք, տէր Հայր . զիս խոստովանողները չէիք ու-
զեր . ահա առաջին մեղքէս կ'ըսկսիմ կոր : Մաւես սուրբ աստի-
ճան և . . . ընդունած եմ :

— Վայ տրայող :

— Աեցէք, տէր Հայր, կեցէք . վանքը թողուն ու հաւաքն ու-
րանան իրարմէ շատ հեռի են . կ'աղաչեմ, նստեցէք . կարելի է
առանց ուրիշ մէկը տեսնելու կը մնանիմ, ո՛վ գիտէ . թերևս դուք
արդարութեան մը գործիք սիտի ըլլաք :

Քահանայն քանի մը վայրկեան վարանեցաւ, բայց մտածելով որ
հիւանդին աղաչանացը զիջանելով բան մը չսկիտի կորսնցունէր,
մտապաւ անոր, և մտիկ ընելու գիրքով մը բարձին քով նստաւ :

Բ

ԱՅՐԳՆԵՆՆԵՑ ԱՌԵՂԱՅԵ

Չուզելով զձեզ ձանձրայրներ, սիրելի ընթերցող, անմիջա-
պէս մեր հիւանդին կենսադրութիւնը սիտի ընեմ՝ համառօտիւ, զոր
ինքը՝ իւր երևակայութիւնը ջերմային հիւանդութեան զրդիւտէն խան-
գարեալ ըլլալուն համար՝ երկայնարանութեամբ և աստանդական
պատմութիւններով նկարագրեց :

Իրօք սուրբ աստիճան ընդունած էր, և Հանդիսաւոր ուխտե՞ր
ըրած էր այն բաղմամբիւ վանքերէն մէկուն մէջ, որք Տիղինոյի կա-
թողիկ ողին կը սնուցանեն: Իւր իսկ ծնողացը վրայօք քիչ բան
կամ բնաւ ոչինչ զիտէր. «Քահանայն ոչ հայր և ոչ մայր ունի»
կ'ըսէր միշտ. «Ով որ ապագայ սերունդէն կը հրաժարի, անցեալը
հոգ ընելու չէ. ծնեալ 'ի կաւոյ ինչպէս առաջին մահկանացուն»,
Աստուած այս հոգին ինձ փչած է՝ մի միայն անօգուտ փափաքնե-
րով զիս չարչարելու համար». խօսքին ոճը տարօրինակ էր, բայց
կեանքը խենդի մը մտաց ծնունդը չէր:

Եւ յիրաւի հաղիւ թէ իւր իսկ ընտանիքը կընար յիշել, և զրե-
թէ ճանչցուած ալ չէր. վասն զի իւր կնքահայրը քահանայ մ'ըլ-
լալով, անոր պաշտպան կեցած և կարգալ ու զրեւ սորվեցուցած
էր, և մինչդեռ հազիւ տասն տարեկան եղած էր, քահանայն զա-
նի Պոլէզզիոյ կղերանոցը դրաւ ձրի: Աշխարհիս անսեղեակի, բոլոր
բնական կապակցութենէ և սիրոյ հեռի՝ նա այն կեղծ մթնոլորտին
մէջ մնացաւ, և դաշխարհ խաբեբայ կերպարանաց ներքև նկատել
ստիբեցաւ:

Վասն այնպիսի պաղ և խորհող ընտ.թեան տէր մարդիկ, որք
կղերանոցի մը սովորութեանց ազդեցութեամբն իսկոյն քահանայ կ'ըլ-
լան. այսինքն՝ աններող, անձնապանձ, և իրենց խօսքին հաւատա-
ցող ռամիկ ժողովրդեան՝ իբրև Աստուածային իրաւամբ տէր և ախ-
րող. քահանայութիւնն՝ այնպիսեաց համար՝ ասպարէզ մը, գործ
մը, շահաւոր՝ հանդիստ և խիստ պատուաւոր արհեստ մ'է. և
այնպիսիները՝ քիչ մը բաղդին՝ քիչ մ'ալ կեղծաւորութեան շնոր-
հիւ՝ կարճ ժամանակի մէջ թողակաւոր, առաջնորդ, եպիսկոպոս
և այլն կ'ըլլան:

Մեր պատանիին երեակայութիւնը չափազանց վառվառն և սիր-
առ չափազանց դորովալիբ և զիւրահաւան ըլլալով, չէր կընար այս
ընտրեալներուն ընդարձակ և արքունի պողոտային մէջ մտնել:

Մեծ պահոց քարոզիչներուն՝ և մարդարէներուն ըրած նկարա-
զրութեանցը համեմատ, աշխարհս՝ ցաւոց և յանցանոց անդունդ
մը, և քահանայութիւնը առջիններուն դառնութիւնը մեղմացընելու
և վերջիններն ուղղելու սահմանուած՝ բարձր և ազնիւ պաշտօն մը

կերեար իրեն, ուստի աշխարհքէ ձեռք քաշելու և իւր օրերը Աե-
զանոցն սպասաւորութեան նուիրելու համար ունեցած դիտաւորու-
թիւնը՝ անձնապանձութեան խորհրդով չէր, այլ հաւատոյ և սիրոյ
ազատ մղում մ'էր:

Սոյն միջոցին Պոլէզզիոյ կղերիկոսաց հոգևոր կրթութիւն տալու
համար քարոզիչ մ'եկած ըլլալով, նա ալ վերջինն եղաւ մերպա-
տանեոցն բանաստեղծական ողին բորբորելու այն սրբութեան դա-
շափարովն, որ Գերտողինոսներ՝ Տրսպոլիստոններ ծնած է. և ա-
հա այն ժամանակէն որոշեց վանքի մը մէջ առանձնանալ, խիստ
կենսը վարել, որով և խիստ արժանաւոր ըլլաւ. քսան տարեկան
էր, նորընծայ եղաւ. և երեք տարիէն Ղուգանոսի մօտ հրեշտա-
կաց վանքին մէջ հանդիսաւոր ուխտերով կապուեցաւ:

Սոյն միջոցիս՝ իբրև սուրբ Ղուգովիկոս մը համարուած էր, ըստ
դրում Յիսուսեանք զանի այնպէս կը նկարագրէին: Ոչ պատիւ կը
իմտուէր և ոչ հանգստութիւն, մանաւանդ թէ ծուլութենէ և ան-
գործութենէ կը խորշէր. արեղայ անուեն իրեն համար կը նշա-
նալէր՝ Տիրոջ այգւոյն սպասաւոր, ուսուցիչ խղճի մտաց, և մա-
տակարար երկնային շնորհաց: Ուստի ուսմամբ և աղօթիւք կը ջա-
նար նոյն պաշտաման արժանաւոր ըլլալու. ամբիւնին մէջ կանգ-
նած ատեն՝ աշխարհիս թաղծութեանցը դէմ կը քարոզէր. և ունկն-
գրաց խղճը զարթոյցանելով, առաքինութեան տուած խաղաղու-
թիւնն ու ուրախութիւնը կ'առեւտէր ապաշխարողաց սրտերուն. մէկ
խօսքով, աւետարանական քահանայից տիպարն էր: Եթէ իւր ըն-
կերներն ալ նմանօրինակ զգացմանց տէր ըլլային, երիտասարդ ա-
րեղայն իւր պաշտաման մէջ յարատեւելով՝ պիտի ըլլար սուրբ մը՝
բառին հին և ազնիւ նշանակութեամբ:

Եւեղճ պատրեար՝ շատ չանցաւ, տեսաւ որ զինքը շրջապատող
խումբը շատ տորբեր էր. այս մաքուրքիտ անձին գանուած վանքը՝
հասարակ վանք մ'էր, հոն բնակող աշխարհական և կրօնական՝
քսան երեսուցի չափ վանականներուն մեծ մասը՝ անգործութեամբ
և տիկաութեամբ ժամանակ կ'անցընէին. ոմանք ալ՝ աւելի խորա-
մանկութեամբ, կեղծաւորութեամբ և նենդութեան ու անձնապան-
ձութեան հնարներով քան թէ ուսմամբ և վարուց սրբութեամբ:

կողմէն ժողովրդեան իշխել : Վանքին մեծաւորը՝ զանոնք ամենա-
կոյր հնազանդութեան մը լուծին տակ բռնելով, զանոնք Ռւստին
միւս ճիւղերուն և անոր զերազոյն իշխանութեանը հետ կատրոջ օ-
ղակն եղած էր :

Երբ ըսի թէ մեծաւոր հայրն իւր ստորակարգեալներն երկաթի
լծով կը կառավարէր, միտքս բարոյականի մասին չէր . վանքին մե-
ջն առաքինութիւնը միայն մէկ հատ էր, կոյր հնազանդութիւն .
անկախութեան ամենաթեթեւ փախար մը՝ վանական յանցանաց ա-
մենամեծն է . այն ամենաչար մարտիւնները զորս պարկէշտ հոյի
մը բերանն առնելէ կամ մտքէն անցունելէ կը խորշի, այն տեղ
ներելի մեղքեր են որք շատ դիւրաւ կը քառուին . հետեւաբար մեր
սուրբը խիստ շատ անգամ կը կարմրէր այս պիղծ միարանութեանը
վերայ որուն մէջ ընկած էր . ինքն որ խոստովանութեան կնիքն ան-
բռնաբարելի կը հաւատար, սորոսափեցաւ՝ ակամայ ներկայ դանուե-
լով այնպիսի ժողովներու, ուր խղճմտանքի գաղանխքն առանց ակն-
ածութեան երևան կը հանէին . այն թաղուն գաղանխքները զորս
կոյս աղջիկներ և ամուսնացեալ կանայք ոչ թէ մարդոյ՝ այլ Աս-
տուծոյ խոստովանելու կու գային, հոյի մը տենչանքը, փափուկ
խղճի մը խայթը, նիւթականէն խոնջեալ սրտի մը վհատութիւնը,
այս ամենը՝ երևան կը հանէին շատ անգամ առանց անուններն խեղ
ծածկելու . և այս զուարճութեան նիւթ մ'էր, երբ բարեպաշտ միա-
բանութիւնն զբոսանքի ելած ատեն աստ և անդ փոքրիկ ժողովակ-
ներու կը բաժնուէր : Այս բարի հայրերը շատ անգամ իրբև ան-
տարբեր վկայ կը խօսէին այս խօսքերը . երբեմն ալ իրբև գերա-
սան կը ներկայացնէին պատմութիւննին, և այն ատեն աւելի զըզե-
լի կերպարանք մը կ'առնէին, վասն զի իրաց տղեղութեանը հետ
կը միանար պատմութեան անձուսի կզանակը, և պատմողին եր-
բեմնական լուծութիւնն աւելի գարշելի կ'ընէր այն գայթակղէլ պատ-
մութիւնները :

Անթիլամ և զորովալի բերտասարդ Փրանկիսկեանը՝ որ վանա-
կան կենաց խոստութիւնը կատարածի ենթարկող այս բաները իբ-
րև զրպարտութիւն մերժած էր երբեմն, տեսաւ որ մտքէն շան-
ցած աշխարհի մը մէջ դահավիժեր է . իր խոցը փախչելով հա-

զիւ կրտար այն չար ժողովներէն պրծիլ, և կը խորհէր որ ըլլայ
թէ չար ողին այսպիսի գարշելի երազներովն զինքը փորձելու ելած
ըլլայ . բայց երբ բանին իրականութիւնն ալ կատարածի տեղ չթո-
ղուց իրեն, այնպիսի բարոյական վհատութեան մը մէջ ընկաւ զոր
միայն անոնք կրնան հասկընալ, որոնք՝ իրենց խարուիլը տեսնե-
լով, այլ ևս մարդուս առաքինութեանը չվտահաճելու կէտին հասած
են :

Իւր առաջին գաղափարն եղաւ վանք փոխել, բայց ո՞վ կ'ապա-
հովէր իրեն թէ միւս վանքերն ալ նմանօրինակ չեն . կոյր վատա-
հովենէ յետին անվտահաճութեան հասած անխորձ մարդոց ինչպէս
որ կը պատահի յաճախ, ասոր ալ նոյնն եղաւ . և երբ իւր մտքն
խոստովանահօրն յայանեց, վանքէն հեռանալ ուղեւուն պատճառը
զուրցելու պարտաւորուելով խոստովանահայրն անոր բերանը դոցեց,
ըսելով թէ «Սրբոց՝ ամենայն ինչ սուրբ է» . և աւետարանին խօս-
քը մէջ բերաւ որ կը հրամայէ աչքերնիս հանել եթէ զմեզ դայ-
թակղեցընէ . և պատուիրեց՝ փոխանակ ուրիշին պակասութիւննե-
րը գիտելու իրենններն ուղղելու աշխատիլ :

Սոյն միջոցիս հատարակապետութեան կառավարութիւնն որ այս
ամեն բաներուն տեղեակ էր, այս սուրբ ժողովներուն բռնական և
օտար ազդեցութեանը սահման մը գնել ուղեւով՝ որոշեց երկրին
վանքերէն մէկ քանին ջնջել, որոց մէջ էր նաև Հրեշտակաց վան-
քը . չճոն բնակող անդամներն՝ անոնք որ, ինչպէս որ տեսանք,
այս անունիս պատիւ չէին բերեր, ազատ ձգուեցան ուրիշ հաս-
տատութեանց մէջ մանելու կամ բոլորովին աշխարհական ըլլա-
լու :

— Ահա ես ալ ճիշդ այս վերջիններէն եմ, ըսաւ Ալոյ, իւր
ցառալի կենաց պատմութիւնը վերջացընելով :

ԱՆՆԱՄԱՅ ԿՈՍՏԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

— Անանկ է նէ ինչո՞ւ երբև աշխարհական քահանայ ձեր պաշտաման մէջ չիեցար, ըստ քահանայն, որուն՝ Ալլոյ ամեն բան պատմելու չափ վստահութիւն բրած էր :

— Ներեցէք պատմութիւնս այս տեղ լմընցունելու . չուզեցի անքաղաքավար ըլլալ այնպիսի անձի մ'որ թերևս իմ տեսնելու վերջին անձս է, մի և նոյն մեղադրանքն ընելով բոլոր այն ճիւղին որուն նա կը վերարերի :

— Ըսել կ'ուզէք որ քահանաները վանականներէն աւելի աղէկ չին երևիր ձեզ . շատ խիստ էք, պարոն :

— Չանց ըրէք երգիծարանութիւննիդ, ինչպէս որ ես ալ պատմութեանս երկրորդ մասը զանց ըրի . ես ոչ քահանաները կ'ամբաստանեմ, ոչ ալ վանականները . ես կ'ամբաստանեմ այն ընկերութիւնն որ այսչափ ժամանակէ ՚ի վեր ողջախոհներու դէմ կը խօսի, և ամենաչարի մ'առջև դուրս կը խոնարհեցնէ : Այն խել մը չարագործ ու կեղծաւոր վանականներն ու քահանաները՝ պարկեշտ այդեգործներ, աշխոյժ փաստաբաններ և ընտանեաց բարի հայրեր կրնային ըլլալ . ինչ յանցանք ունի կաւն իր ընդունած գրողին պատկերը կրելուն համար . յանցանքը աւելի ընկերութեան հաստատութեանն է քան թէ մարդոց :

— Յանցանքը ձեր հպարտութեանն է, ընդմիջեց քահանայն՝ բարկանալով, որ գրեթէ իր հեար խօսողին միաքը չէր հասկըցած . յանցանքը ձեր կարգացած պիղծ գիրքերունն է . կ'ուզէք որ բոլորին պատճառը ձեզ գրուցեմ . պատճառն այն է որ ձեր պաշտամանը վերայ սխալ ըմբռնումն ունեցեր էք :

— Այդ շատ ճշմարիտ է, ըստ երբեմն-արեղայն, և ասոր համար է որ վանքէն դուրս ելնելով ինքզինքս ուղղել ուղեցի՝ պարկեշտ արհեստաւորի մը պէս ապրելով, առանց չունեցած հաւատքս իբրև ունեցող կերպարանելու :

— Հո՛հ հա, ըրաւ քահանայն՝ հեղնութեամբ և յաղթական եղանակաւ կծու կերպիւ մը խնդալով . կը կարծէիք որ աժան ազատեր էք . քահանայական գրողին անջնջելի ըլլալը մոռցեր էք . կամ Սեւքիսեղեկի միւսունն է կամ Այլէնի նշանը . «Միանգամ արբայն ընդ միշտ արբայ», կը կարծէք թէ հաղուստ փոխելու պէս հաւատքն ալ կը փոխուի . ո՞վ ինձի հետ չէ, հակառակ է ինձ, ըսաւ Քրիստոս : Հապա ձեր ուխտագրութիւնը . աղքատութեան՝ ողջախոհութեան՝ հնարանդութեան ուխտերնիդ . Եկեղեցոյ և Աստուծոյ հետ դրուած պայման մը ձեր խելքին աղղեցութեանն են . թակոյն ընել կը յուսաք . կ'երևի թէ ջերմախանութ պատճառաւ խելքերնիդ ցրուած է :

— Քահանայն որ մինչև ցարդ պարզմտութիւն կը կեղծէր, տիրական կերպարանք մ'առաւ որն որ չէր յուսացուեր . Ալլոյ ևս զարմացաւ և ընկճեցաւ . բայց երկու հակառակորդք քիչ մ'ատեն մէկուզմէկու երես յառած նայելէ յետոյ, Ալլոյ սխալ հանդարտութեամբ խօսիլ :

— Չեր գատողութեան և ձեր ընդունած դաստիարակութեան սկզբանց համեմատ կրնաք իրաւունք ունենալ . մարդկորէն պատճառարանելով, ես ալ կրնամ ինքզինքս արձակուած համարիլ այն պարտաւորութենէ, որուն ես դիս կապած էի՝ անխելահաս հասակին մէջ խարուելով : Գահապրութիւն մը կը պահանջէ որ իւր պարունակած պայմանները լիովին հասկըցուած ըլլան, ես՝ ուխտ ըրած ժամանակս այդ հասկըցողութիւնը չունէի, ոչ ալ ուրիշը զայն ինձ գիտցընել ուղեց . եթէ անկեղծաբար խօսիք, թերևս դուք ալ ճիշդ ինձի պէս եղած պիտի գտնուիք . մարդս իր բոլոր կեանքն իբրև դերի անցունել չպարտիր . Աստուած որ զայն ազատ ստեղծած է, այդպիսի զոհողութիւն մը արժան չտեսնէր :

— Ատոնք սկզբունքներ են . . .

— Չորս՝ կ'ընդունիմ որ ազատ էք չընդունելու կամ չհաւանելու . նմանապէս ես ալ չեմ համոզուած թէ ձեզ նմանները կարող են թողութիւն տալ այն բանին, զոր ուրացութիւն կ'անուանէք . ես կը յուսայի որ աշխարհս՝ քաղաքական ընկերութիւնն աւելի անկողմնակալ և արդար պիտի ըլլար . վերջապէս առ իմ նման,

ներս ունեցած պարտականութեանց մէջ սլակասութիւն չէի ունեցած . կտաւարութեան ինձ շնորհելիք ապահարկութենէն կամուզին հրաժարեցայ . ուղածս ուրիշ բան չէր , բայց եթէ քիչ մը արդարութիւն և ներողութիւն :

— Եստ աղէկ :

— Եւ այդ արդարութիւնն՝ այդ ներողութիւնը զլացան ինձի . սրչափ որ պարկեշտութեամբ և ջանիւք իմ նմաններուս համակրութիւնն ու յարգանքն ստանալու աշխատեցայ , չկրցայ ինձ դէմ սերմանուած ատելութեան յաղթել . երկու տարի իբրև բորո՞ւ իբրև անուանարկ՝ իբրև լրտես այրեցայ . անունս արտասանելուս կամ իմ անցեալը իմանալուն պէս՝ քաղցր տրամադրութիւնն ին կը զլանային ինձ . կնոջ ժպիտը մէկ վայրկեանի մէջ նուաստացուցիչ զթութեան և երկչոտ անարդանաց հայեցումքի մը կը փոխուէր . կի՞նն , այն արտաճն որ մարդու և հրեշտակի միանդամայն կը նմանի և բոլոր մարդկային ցաւերն սփոխելու սահմանուած կը թուի , նա՞ ձեր ձեռքին մէջ աններողութեան գործիք մ'անդուծ և անհաշտ հալածանաց զրդիւ մ'եղաւ . մէկ խօսքով այն ատեն առաջին անգամն ըլլալով ճին բանադրանաց իմաստը հասկըցայ . . .

— Է՛հ հա , ընելով քահանայն ժպտեցաւ նորէն :

— Այո՛ , խնդայէք որ իրաւունք ունիք . դուք այնպիսի ընկերութեան մը անդամ էք որ ըստ ձեր պատկերի և նմանութեան՝ կամ լաւ ևս ըստ ձեր շահուց պահանջման կազմած էք . կը սխալին անոնք որ ձեր ազդեցութիւնը կ'ուրանան . աղէտ ամբողջ ձեր աններող և անդուծ ուղովը կը զրդուէք . կնոջ ողին խոստովանաբանին միջոցաւ կտաւարելով , աշխարհի կը հրամայէք , և մարդկային դատողութեան մղած սկիւր պատերազմին վրայ կը ծիծաղիք :

— Այս խորհրդածութիւնները չպիտի կրնան ձեր խօսքուսները ձեզ սովորեցնել , սրտերնուդ գտնել և ձեզ ցուցնել այն ճանաբան որուն հետեիլ կը պարտիք :

— Ենորհ ըրէք , ինչ ճանաբայ է այդ :

— Այն ճանաբան որ խոստովանասօր մ'ոտքին կ'առաջնորդէ , ներողութիւն խնդրելու այն մոլորութեան որուն մէջ կ'իյնայ մարդս երբեմն . մեր մայրը , սուրբ Եկեղեցին՝ չմերժեր մոլորեալ ոչխարը :

1002
6365

— Ո՛չ , թողութիւն խնդրելու համար պէտք է որ զիս յանցաւոր խոստովանիմ . ես ո՛չ իմ՝ աչացս առջև , ո՛չ ալ՝ ինչպէս կը յուսամ , Աստուծոյ առջև յանցաւոր էի :

— Ուրեմն վերջապէս անապաշտ պիտի մեռնիք :

— Այո՛ , այնպէս է :

— Ուրեմն Աստուած պիտի զթայ ձեր հողոյն վրայ , ըսաւ քահանայն ելլելով , այնպիսի յանդիմանական ձայնով մ'որ բողբոլին հակառակ իմաստ մը կուտար իւր խօսքին : Սիրտս կտրեցաւ պարսպ տեղն ելլել մինչև հոս գալուս համար :

— Պարսպ տեղը չէ , տէր Հայր , չէի ուզեր որ իմ խօսքերս իբրև անիրաւութիւն մեկնէիք . արդէն ձեզ ըսի որ աւելի իրերը կը դատապարտեմ քան թէ մարդերը . ինձ ցուցըցած խոստութիւննիդ և դաւնութիւննիդ զիս չպիտի արդելուն ձեզ շնորհակալ ըլլալու այն բարի դիտաւորութեանը համար , որով ելէր մինչև հոս եկեր էք . վայրկեան մի ևս նստեցէք . եթէ նոյն ժամանակէն՝ զթութեան և հաշտութեան պաշտօն մը կատարելու մտքով վազեցիք այս ամայի տեղս եկաք , ըսել է թէ՛ ձեր սիրտը ձեր վիճակէն լաւագոյն է . մտիկ ըրէք ինձի . մեծ ծառայութիւն կրնաք ընել ինձի :

— Խօսեցէք , ըսաւ քահանայն՝ այս խօսքերուն քաղցրութենէն կակուղնալով , բայց շուտ ըրէք , մտքին կը մտամք :

— Բժիշկ Սիլվանիին սպասելս ձեզ զրուցեցի սկիզբէն . իբրև բժիշկ՝ անոր կարօտութիւն չունէի , ինչպէս որ իբրև քահանայ ձեզ կարօտութիւն չունիմ . կարօտ եմ այնպիսի պատուաւոր անձի մ'որուն կարենամ զազանիք մը հաղորդել և մեծ աւանդ մը յանձնել . արդեօք կը սխալիմ զձեզ իմ վստահութեանս արժանի տեսնելով :

— Խնդիրն ինչ է նէ զրուցեցէք :

— Նախ և առաջ ձեր համեստութեանը վերայ երդումս ըրէք , որ ընելու յանձնարարութիւնս թէ՛ ընդունիք և թէ՛ չընդունիք . զազանի պահէք :

— Իբրև խոստովանութեան կնիքը բունբարոյ կ'ամրաստեմ ինչ զմեզ , ու հիմա իմ խօսք տալս կ'ուզէք :



— Մի պնդէք այնպիսի խնդրոյ մը վերայ զոր արդէն թողուցինք, խոստացէք դադարնի պահելու, կամ լաւ եւս՝ եթէ կը հաճիք, ըսելու ժամանակս իբրև խոստովանութիւն ընդունեցէք :

— Խօսեցէք :

— Դա անկիւնը փոքր սնտուկ մը կայ, կը տեսնէք :

— Այո՛, կը տեսնեմ :

— Անոր մէջ մէկ միլիոն դրամ կայ :

— Միլիոն մը, ըսաւ քահանայն՝ ոտքի վերայ ցատկելով և ձեռքով սնտուկին ծանրութիւնը փորձելով :

— Մէկ միլիոն. մաս մը կոխուած մետաղ, մաս մ'ալ դրամ մտնողթ :

— Է այդ գանձն որունն է :

— Ահա ատի չեմ կրնար և պէտք չէ որ ձեզ յայտնեմ. համարեցէք թէ ես իսկ չեմ գիտեր : Պարկեշտ մարդուն մէկն անմիջական հրամանաւ երկրէս հեռանալու ստիպուած ըլլալով իւր դադարիքն ու ինչքը ինձ հաւատայ ու յանձնեց՝ զիս երգուրնցընելով որ տարի մը պահեմ. տարին անցնի ու ինքը չգայ և չառնէ նէ, այս ստակը պիտի տամ . . .

— Անտարակոյս աղքատաց, Եկեղեցւոյ :

— Չէ, տէր Հայր, պիտի տամ . . .

— Տէրութեան սնտուկին :

— Ա՛յ. յեղափոխութեան :

— Յեղափոխութեան : Ինչ ըսել կ'ուզէք. յիշաւի կատակ կ'ընէք :

— Այս գանձուն տիրոջը հրամանն ու կամքն այս է. ես իբրև աւանդապահ՝ զանի գատելու կամ փոխելու իրաւունք չունիմ :

— Յեղափոխութեան՝ կ'ըսէք. եթէ եկեղեցւոյ և ընկերութեան թնամին եղող ազատականներուն չար կառավարութիւնը կործանելու դործածուի :

— Կ'աղաչեմ, ուրիշ ինդիքներու չմտնեք : Այս սնտուկին տիրոջն ըսած յեղափոխութիւնը ձեր ակնարկածը չէ. այս ստակը՝ թէ որ մէկ տարիէն չգայ, չառնէ ու ուրիշ կերպ չկործածէ նէ, այս ստակն՝ այս պաւտին, ինչպէս նաև օտարին երկաթեայ լուծին

տակ հեծող սահմանակից երկիրներուն ազատութեանը պիտի նուիրուի. աւելի խօսք պէտք չէ. կ'ընդունիք այս յանձնարարութիւնը :

— Ինչ յանձնարարութիւն :

— Ինչ որ ինձ յանձնուած է, միայն անի : Եթէ ես մեռնիմ, այս սնտուկը պահելու է մինչև մայիսի հինգը, և սնտուկին մէջն եզող նշանակին կէսն ս'վ որ ձեռքն ունենալով ներկայանայ, անոր յանձնելու է. թէ որ մինչև այն ատեն մարդ չգայ, ամբողջատէս Լծնտրայի յեղափոխական յանձնաժողովին տալու է :

— Բայց դուք իմ հողոյս դատապարտութիւնը կ'ուզէք :

— Մինչև հիմա ձեզմէ միայն ուզեցի որ գադարնիք պահէք. հիմա այս աւանդն իր որոշեալ պարտաւորութիւններովն ընդունիլ կամ, չընդունիլն ձեր կամքէն կախումն ունի :

Քահանայն քանի մը վայրկեան շփոթեալ մնաց. յետոյ՝ ինքնիրենը որոշելով, պատասխանեց թէ կ'ընդունի :

— Ա՛լ կրնաք երթալ. ձեր հաւատարմութեանը կուրօրէն հաւատալով՝ այնպիսի բարձր համարումն ունեցած եղայ ձեր վրայ, որմէ աւելին չկրնար ըլլալ. ալ դործս լինցուցած եմ ես. կարելի է որ երկու երեք օրէն մի և նոյն աղքատիկ պառաւը զձեզ կանչելու կու գայ, այն ատեն ձեզ հեռ խօսելու կարող վիճակի մէջ չգտնուիմ նէ, ինչ ընելիքնիդ հիմակուց զիտցած եղաք. տուէք ձեռքերնիդ ինձի. երթաք բարով :

Պալլացող լուսով այս տարօրինակ տեսարանը լուսաւորող ճրագն արդէն սպառած էր. քահանայն՝ մութ տեղն հիւանդին չոր ու ջուրտ ձեռքը թոթովեց ու մեկնեցաւ :

Գ

ԱՊԱՐԳՈՒՆ ԶԵՂԶ

Թէ արդեօք Ալոյ այսպիսի դաղանիք մ'այս տեսակ քահանայի մը հաղորդելովը խոհեմութիւն ըրած եղաւ . կը պատասխանեմ թէ՛ ոչ : Զերմին սաստկութենէն հարհրկած՝ մէկ խօսքէն ուրիշ խօսքի անցնելով, ինքզինքն այնպէս ձգեր էր որ մինչև այս անխոհեմ առաջարկութիւնն ըրաւ, որն որ թէ՛ զինքն և թէ՛ իւր դաղանիքը խաղալիկ ըրաւ թշնամույ մը ձեռքը : Այսպիսի անխոհեմութիւն մ'ընելու զինքն ստիպող ուրիշ ծանր պատճառ չկար, բայց եթէ տեսակ մը նախապաշարումն, որով խիստ մօտ և անհրաժեշտ կը նկատէր իւր կենաց վախճանը . իւր վիճակը կարծածին չափ ծանր չէր : Անորէն ձանձրացած և վիշտերով խոնջած ըլլալով, մահն իբրև յոյս և իւր վշտացն իբրև սիրտփանր կը ներկայանար իր առջին :

Իրեն գէ՛մ դաւադրող մարդոց հալածանքէն փախչելով այս ամայի ձորին մէջ ապաստանած էր, ուր ոչ իր անունն և ոչ իր պատմութիւնը լսուած էր : Տարիէ մը ՚ի վեր հոն կը բնակէր, և կերակուրն էր միայն արմատներ և տեսակ մը թուշուն, զոր իր շինած տեսակ մը հնաձև գործիքովն երբեմն կարող կ'ըլլար բռնելու . և երբ հովիւներն իրենց հօտերը լերան այս կողմը կը բերէին, կը ջանար անոնց ծառայութիւն մ'ընել . տղայոց կարգաւ կը սորվեցընէր, և խաշնարածներուն հետ՝ անոնց խոկ գատողութեանը յարմար նիւթերու վերայ կը խօսէր . բայց քանի մ'ամիսէ ՚ի վեր խաշնարածներն՝ աւելի ցած արօտներն իջած էին, և մեր անապատականն այս ամայի առանձնութեան մէջ մնացած էր իրեն միակ ընկեր՝ իր դառն յիշատակներն ունենալով :

Չունէր զինքը միտթարող սիրալիք մէկը . կորուսած էր այն հաւատքն որն որ՝ եթէ ուրիշ վիճակի մը մէջ եղած ըլլար, կրնար անոր երկնաւոր յոյսեր տածել . և այնպիսի խորին վհատութեան օ

տխրութեան մէջ ընկած էր, որ կամաց կամաց անոր կենաց աղբիւրներուն փնասելով՝ կործանած էր անոր լաւ կազմութիւնը . հոգւոյն թաղծութիւնը՝ դրեթէ կը սաստկացընէր անոր հիւանդութիւնը . անհասկացաութիւնն ու սնունդի պակասութիւնն անտարակոյս զանի ՚ի դերեզման պիտի տանէին, եթէ մասնաւոր գէպք մը անոր ջղային տկարութեանը գէ՛մ ազդելու չգար :

Միտքն այս վիճակիս մէջ՝ մարդ զրկեր էր այն կողմերն եղող բժշկի մը զոր իր ազատութեան օրերուն մէջ ճանչցած էր . կ'ուզէր իր մեծաղին աւանդն անոր յանձնել, և ապա խաղաղութեամբ զլուխը խոնարհեցընելով՝ խիղճն հանդարտ առանց երազի քուն մը քնանալ : Փոխանակ բժշկին քահանայն գալով, և անկէ իմանալով որ բժիշկն ուրիշ գործերու մէջ մտած և այն կողմերէն հեռացած ըլլալուն համար չափտի կրնար տեսնել, և զգալով որ իւր կենաց վախճանին կ'ընթանար արագութեամբ, լաւագոյն համարեց իւր թանց դաղանիքը կասկածելի մարդու մը հաւատալ, քան թէ թաղել այն ստակն, որ թէ՛ հասարակաց և թէ՛ մասնաւոր մեծ օգուտներ կրնար ընել :

Իսկ հիմա որ մութին մէջ մինաւոր մնացած և ջերմին պատճառած յնորումն անցնելով միտքը հանդարտ խորհրդածութեանց դարձած էր, շատ զղջաց այսպիսի դաղանիք մ'օտար՝ և բնականաբար ամեն յեղափոխութեան թշնամի քահանայի մ'ընտրողութեանը հաւատալուն . առաջին անգամ այն աստիճան սարսափեցաւ որ կ'ուզէր ինքզինքը համոզել, թէ այն ընդունած այցելութիւնը, խօսակցութիւնն և իւր դաղանիք յայտնելն իրօք տեղի ունեցած չէին . այլ կ'ուզէր հաւատալ թէ անոնք՝ իւր ներքին երեւակայութեան պատճառ եղած էր այս գէպքին, շատ չանցաւ՝ եկաւ զանի իւր սխալ խորհուրդներէն ուղղելու . գաւաթ մը տաք զինի և կանաչեղէնի ապուր մը բերաւ խեղճ հիւանդին, ասոնցմէ զատ՝ բերեր էր նաև ձիթենոյ ձիւղ մ'և զանազան գոյներով ներկուած երկու կտոր ճրագ, այն տեսակէն զոր գիւղացիք՝ սովորաբար անկողնոյ վերայ կը կախեն, և ծանր պարագայից կը վերապահեն : Խեղճ կինը չկրնալով բժիշկը գտնել, տեղն այս պաշարները բերեր էր, և եթէ ա-

անցմով հիւանդին մարմնաւոր կենդանութիւնը չէր կրնար նորոգել, կը յուսար՝ քահանային այցելութեամբն և ուրիշ դարմաններով դէթ անոր հոգւոյն յաւիտենական փրկութիւնն ապահովել. բայց հիւանդն՝ անոր այս սիրալիր փութաջանութեանն ու խնամոյցն համար հազիւ թէ կրցաւ շնորհակալութիւն մ'ընել, և իւր կասկածներէն մտատանջ՝ սպառութեամբ մ'անոր հարցոց թէ ինչու քահանայն կանչեր էր :

— Բայց, պարոն, պատասխանեց բարի դրացին՝ վարանելով, բժիշկը չլսանելու համար կարծեցի որ աղէկ կ'ըլլայ . . . չէ թէ ձեզի վտանգաւոր վիճակի մէջ տեսնելու համար, այլ իբրև բարի խորհուրդ մը . . . թէ մարմնոյ և թէ հոգւոյ կրնայ օգուտ ունենալ :

- Անանկ է նէ քահանայն դուք կանչեր էք, հա՞ :
- Այո՛, պարոն, ներեցէք եթէ առանց ձեր հրամանին . . .
- Բան չկայ. արդէն ատոր համար ձեզ դրուցելիք չունիմ, բարի դրացի. միայն թէ ըսէք ինձի, այդ քահանայն ինչպէս մարդ է :

— Սուրբ մարդ մ'է, պարոն. Աստուծոյ մէկ ճշմարիտ պաշտօնեայն, և բոլոր այս ձորաքնակներուն խոստովանահայրն է, մասնաւորապէս ծանր սպարադայնց մէջ :

Ալդոյ հասկըցաւ որ խեղճ պառաւին տեղեկութիւններէն օգուտ մը չպիտի կրնայ քօղել, ուստի լաւ համարեց խօսքը կտրել : Տեսնելով այն ուսելիքները զորս պառաւն իրեն համար պատրաստած էր, և զորս՝ քիչ մ'առաջ չպիտի ուղէր ուսել, մտքին մէջ ուրիշ գաղափար մը ծագեցաւ. նա որ քիչ մ'առաջ իր կեանքը կարձել կ'ուզէր, սկսաւ երկարելու ցանկալ. շնորհակալութեամբ ապուրն առաւ, խմեց նաև համեմեալ գինիէն զոր լեռնաբնակներն ամեն հիւանդութեան դէմ իբրև դեղ կը գործածէն. գթափրոտ պառաւը կ'ուրախանար անտեսելով որ իր պատրաստած դեղն ընդունուեցաւ. Ալդոյ ալ շնորհակալ ըլլալով ըսաւ անոր որ ալ երթայ, և ինքն ալ իւր անկողնին վերայ փռուեցաւ և խորին քնով մը քնոցաւ մինչև առաւօտ :

Արևուն ճառագայթն ու կիտրաց դռնէն ներս մտնող տարտիչ

օղը զանի սթափեց այն քնափութենէն որ յաջորդած էր ջերմին. քիչ քիչ մտաքն եկաւ առջի իրիկուան գէպքերն ու գործած անխոհեմութիւնն ու ըրած կասկածները. աչքը մէկ մը անտուկին վրայ դարձուց և զանի իր տեղը կեցած անտեսելով սիրաբ հանգչեցաւ : — Բայց հիմա պէտք է որ ես ապրիմ, պտուայ, պէտք է որ ապրիմ մինչև տարին լրանայ, և այս առանգէն ազատիմ. պէտք է որ ապրիմ, և պիտի ապրիմ. երբ մարդս պարտք մը՝ մեծ պարտք մը ունի կատարելիք, չլրնար և պէտք չէ որ մահուան վերայ մտածէ :

Համարէ թէ այս մտածութիւնն անոր ոգւոյն նոր կենդանութիւն ստաւ, կամ թէ՛ առջի իրիկուան առած տարօրինակ դեղն իր ջիւղերը զօրացուց, կամ թէ իր վախցածին կամ յուսացածին չափ ծանր հիւանդ չէր, վերջապէս՝ նա այն վայրկեանէն փոխուած և զօրացած կ'ըզգար զինքը : Բարեսիրտ պառաւն իւր տեղի աղբ դեցութիւնը վերայ ուրախացած՝ հեռեկալ օրերն ալ նոյնը շարունակեց, և կը կրկնապատկէր իւր խնամքն այնպիսի գթութեամբ մը որ կնոջ յատուկ է, և ոչ ծանր պարագայից մէջ և ոչ ալ ծերութեան վրայ հասնելովը կը նուազի : Ալդոյ տեսաւ որ իրեն մայրութիւն կ'ընէր այս խեղճ պառաւն, որ տարիքով ծերացած էր և ընկճեալ այն տաժանի լի աշխատութեան ներքև, որուն դատապարտուած է զեղեցիկ և փափուկ սեռն՝ այս երկիրներուն բարբառոսական սովորութեանց շնորհիւ :

Քահանային այցելութեանը վերայ ութն օր անցեր էր. և եթէ իւր առողջութիւնն ու փափաքները փոխուած չըլլային. պիտի մտնար այն տեսակցութիւնը. ՚ի սկզբան կը զարմանար թէ ինչու քահանայն անգամ մ'ալ չեկաւ իր խրճիթը, բայց ինչպէս որ սովորած էր, այսպիսի վարմունք մը ՚ի բարին մեկնելով զանի կ'արդարացընէր, մինչդեռ առաջ կասկած ըրած էր անոր հաւատարմութեանը վերայ : Բայց և այնպէս, այն ծանրադին արկղինն որ իբր չէր, աւելի ապահով տեղ մը պահելու զանց չըրաւ : Խրճիթէն քիչ մը հեռուն հին շագանակենի մը տեսած էր, որ շատ տարեւոր ըլլալով բունին մէջ խոռոչ մը բացուած էր, որն որ իւր պահելու գանձին յարմար ընդունարան մը կրնար ըլլալ. ուստի սնտուկը բացաւ և մէջէն հանեց քանի մը կաշի քսակներ և ծոցի քսակ

մ'ալ, որ կ'երևէր թէ գրամամբղները կը պարունակէր, և ամենը մէկանց գրաւ մամագատ կտաւէ վերարկուի մը մէջ, զոր ինքն իբրև հազուատ կը դործածէր, և տարաւ հին ծառին խոռոչին մէջ պահեց. իսկ սնտուկը խրճիթին մէջ մնաց, ըստ որում ծառին խոռոչին մէջ չէր սեղմեր :

Ըրած անխոհեմութեանը գարմանը դտած ըլլալուն վերայ սիրտը հանդիւրը շատ չաւեաց, և ահա իրիկուն մը (կարծեմ տաններորդ օրն էր, յորմէ հեռէ կենաց և մարդոց հետ հաշտուած կ'երևէր) չորս զինուոր և ոստիկան մը խրճիթէն ներս մտան՝ զինքը բռնելու և սնտուկն առնելու արածնութեամբ : Այսպիսի դէպք մը թէ և շատ խոռովեց զինքը, բայց կրցածին չափ անտարբերութեամբ հարցոց մեծերնուն թէ ո՞վ է զինքն ամբաստանողը, և թէ՛ սխալ մամբ ուրիշ մէկուն սեղ զինքը չբռնեն :

— 2է՛, պատասխանեց ոստիկանը, Հրեշտակաց վանքին Բ. Ռոմուալդոն դուք չէք. ես զձեզ շատ լաւ ճանչցայ դէմքերնուդ, և ճիշդ մեր ընդունած տեղեկութեանց համաձայն կը գտնեմ. ահա հոս է սնտուկն ալ, զոր հրաման ընդունած եմք հետերնիս առնելու. դուք ամբաստանեալ էք իբրև գործակից խումբ մը գրամաններեղերու, որոց հետքը դեռ նոր կրցաւ գտնել արդարութիւնը. քայլէ, նայինք :

Ալդոյ տեսնելով սր ամեն ընդդիմութիւն անօգուտ է, ստակները չզանուելու կերպով պահած ըլլալուն վերայ ուրախանալով թողուց որ ձեռքերը կապելով տեղական իշխանութեան կեդրոնատեղին տանին զինքը, իբ կարծեցեալ յանցանացը նիւթն ալ մէկտեղ :

Ե

ԱՆՍՏՐԻՈՅ ՏԵՂԵԿՎԵՐՆԵՐ

Աւստրիոյ կողմանէ դանդաւտ մ'եկած ըլլալուն համար էր միայն

որ այսպէս գրամաններեղերու իրողութիւն մը կամ խօսքը կը պտըտէր :

Աւստրիան ժամանակէ մ'ի վեր այնպէս կը կարծէր որ գաղտնի ժողովներ և դաւաճանութիւններ կան, և բոլոր խորհրդարաններն, ոստիկանութիւններն ու գաշնակցեալ պահապանները տակնուվերայ կ'ընէր, որպէս զի գտնէ այն թաղուն տեղերն ու գաղտնի գործարաններն, որք՝ ըստ իւր բանից, իւր խաղաղ երկիրները կը վրդովէին :

Այս նոր Արդոսն* իւր պոչին հարիւր աչքերուն մէկովը գտեր էր դժոխային մեքենայ մը՝ չեմ գիտեր ինչ տեսակ Գերմանական մասնաժողովէ մը յօրինուած, որն որ որպէս թէ շատ մը կեղծ գրամ և գրամամբուղթ հանելով և ցրուելով անոր ելեմտական համարումը կործանել կ'ուզէր : Այս գաղտնի գործարանին գլխաւոր գարբնոցն էր Ջուիցէրիա, և մասնաւորապէս Տիլինոյի նահանգը՝ այս պատճառաւ կայսերական կառավարութիւնը՝ շէլուետական գաշնակցութեան և Բէրնայի Արիտպագոսին** կծու յանդիմանութիւններ ըրած էր, իբրև թէ մեղադրելի անհոգութեամբ կամ չտեսնելու զարնելով կը խրախուսէին այն չարադոյն ոճիրներն, որք ժողովրդոց իրաւունքն և չէղբութեան ու բարի դրացութեան սպառնքերը միանգամայն վտանդի կենթարկէին :

Գաշնակցութեան խորհրդարանը՝ ըստ կանոնի, շատ մը կասկածելի երկիրներու կառավարութեանց զրկած էր այն շանթարձակ տեղեկագիրը, և մասնաւորապէս Տիլինոյի նահանգին, ուր կը բնակէին քանի մը տարբէ՛ի վեր կայսերական՝ թաղաւորական և առաքելական խորհրդարանին քունը վրդովող երեակայական ճիւղերն ու ողին :

Տիլինոյի նահանգին կառավարութիւնն ամէջաւ այնպիսի բանի մը համար, որուն վրայ ամեն հասարակացեալական կառավարու-

*Ըստ առաւելագ իշխան հարխրացեաց, որոց քնացած ատեն միայն յիսուն աչքերը կը գոցուէին, և միւս յիսուանց կը հսկէին :

**Տերակոյոյ, մասնաւորապէս յԵՔԵՆԱ՝ ի հնումն : 4

Թիւն պարծենալ պէտք է . քիթը՝ հարիւր հաղար կառավարելոցը սնտուկներուն , դրասենեակներուն և բնակութեանցը մէջ խոթած չքլլալուն վերայ ամէջաւ . ուստի խելքը գլուխն եկողի մը պէս իւր նախանձախնդրութեան առաջին աշխուժովն սխառ քննութիւններ և խողարիութիւններ ընել , և փողոցները լսուած ամեն խօսքերու միտ գնել : Եթէ այսպիսի դաւաճանութեան մը նշան չդանուէր , և եթէ «Տեսէք՝ ինչպէս լաւ կը լրտեսեմք , և կրօնքի , ստացուածոց , ընտանեաց ու աշխարհի խողարութեանն սպառնացող դարձելի դաւակցութիւնները՝ տեսէք ինչպէս իրենց որջերուն մէջ կը խելգեմք» ըսելով՝ դաշնակցական և Աւստրիական կառավարութեանց առջին պարծենալ կարենալու համար՝ խելմը դաղթական չհալածէին , և քաղաքացի կամ ազնուական՝ մէկը ձերբակալ չընէին նէ , հայրենիքը վտանգի մէջ պիտի ըլլար :

Ըստ գիպաց այս անդամ՝ Աւստրիական տեղեկագրին նայելով , Գերմանական մասնաժողովի մը վերայ էր խնդիրը . ուստի բարեկարգութեան նոր պաշտպաններուն որոշած ծանր պայմանները շատ աղմուկ չհանեցին : Ազատն Հէլուէտիոյ այս մէկ եղբրքին վերայ ապաստանած քանի մը Գերմանացիները՝ յատկապէս զրկուած ուսիկաններու ձեռք արդէն բանտարկուած ու տարալրուած էին . հաւանական էր որ այս գարն ջրոյ մալիներն ու յեղափոխական մորձ ծխողները՝ Ղէվէնտինիոյ և Վէրցասքայի գինետուններէն ոմանց մէջ ծածկաբար դործող աշկերաններ թողուցած ըլլային :

Տիգինոցիք հասարակօրէն լրտեսութիւն չեն ընէր , բայց և այնպէս՝ այս տեսակ ավրանքի պակասութիւն չկայ , անոր համար որ Աւստրիա կրնայ իր դաղտնի զեսպանները հոն զրկել , և դարձեալ Միլանոյի և Գօմոյի առաջնորդներն ալ իրբև իրենց վիճակն՝ այս թեմին պաշտօնական կղերին հետ յարաբերութեան մէջ են : Ուստի կառավարութիւնն վեր ՚ի վերոյ տեղեկութիւն ունենալով ըստ բաւականին , իւր փոքրիկ խմբին ձեռք կրցաւ մեր ակնարկած ձեռքակալութիւնն ընել :

Ար կարծէին թէ յանցաւորը յանցանաց մէջ՝ և յանցանքն ալ ՚ի միասին ձեռք անցուցած են . բայց ձեռքերնին անցածն էր մարդ մ'որ և ոչ դաւաճանութեան մը տեղեակ էր , և սնտուկ մ'որ

Թէպէտ կրնար մեծ դուժար մը պարունակել , սակայն քննուելով տեսնուեցաւ որ մէջը տեսակ մը նշանակ և զանազան գոյներով Գերմաներէն դրութիւն մը կար միայն :

Յիրաւի՝ ասոնք շատ թեթեւ ասպոցոյցներ էին . սակայն՝ որովհետև կասկածներ կը պտրտէր և Միլանոյէն հրահանգներ կու գային և Տիգինոյի կառավարութիւնն ալ նախանձախնդրութիւն ցուցնել կ'ուզէր , ուստի և հրապարակային և հանդիսաւոր դատաստան ընելու բաւական փաստ կրնային համարուիլ : Բարեբաղդաբար՝ ամբաստանութեան տակ ընկնող անձն երկրին մէջ ոչ շահ , ոչ կիսպակցութիւն և ոչ կարեկից ունէր , որով և կարելի էր զանի հասարակաց բարւոյն զոհել առանց երկիւղի :

Ար մնար գտնել այնպիսի քննիչ դատաւոր մ'որ երկրին պատիւը փրկելու կարեորութիւնն զգար , և եղած կասկածներուն հաստատութիւն տալով , իրբև ըստ գիպաց՝ ոճիրը չյուսացուած տեղէ մ'երևան հանէր : Ամենէն աւելի՝ պէտք էր որ այս խնդիրը՝ թէպէտ և բոլորովին քաղաքական էր , հասարակ դատաստանի մը սահմանէն դուրս չենէր . ըստ որում կառավարութիւնը կ'ուզէր իրաց երեւոյթներն ուղիղ հանել , և ռամկավարական կուսակցութեան գիւրդազածութեանը չգպչիլ , որովհետև անիւ ընդունած էր իր իշխանութիւնը :

Ինչպէս որ կ'երևի , այս խորհուրդը նոյն ժամանակին յարմարելին էր , և ասի գլուխ հանելու մարդն ալ գտան :

Այս անձը թէ ատենաբանութեան և թէ արհեստին բոլոր նբրութեանցը մէջ հինցած վաթմնամեայ փաստաբան մ'էր . ամեն բան կարելի նկատելուն համար ստորասելու և բացասելու սովորութիւնը կորուսած էր , և իւր խիղճն ըստ պարագայից այսպէս կամ այնպէս զգալու ենթակայ էր : Ճշմարիտ՝ բարի՝ արդար ըսուած քաներն այս մարդու համար՝ մարդկային գատողութեան կարեւոր և ներքին սկզբունք չէին , այլ առ առաւելն՝ տրամաբանական յուսալազրութիւններէ ելած հետեւութիւններ : Տեսականէն աւելի գործնականին մէջ սկիստիկեան մը ըլլալով՝ կը կասկածէր ամեն բանի վերայ , բայց ՚ի այն ոսկիներէն զորս՝ աղքատ և հարուստ , ազնուական և ռամիկ , ազատամիտ և յետադէմ , բոլոր իւր պաշտպանեալ-

ներէն ժողոված էր : Զէր պարծենար՝ ինչպէս ուրիշները կ'ընեն , իբրև հետևող քաղաքական կուսակցութեան մը , այլ ասան խօսքին անդամ մը կ'ըսէր թէ ինքը կուսակցութեան մարդ չէ . և իւր չէղբօթիւնը սա առավական առածին պատրուակուր կը ծածկէր , թէ՛ արդարութիւնը մի է և միայն մէկ կշիւ և մէկ չափ պէտք է ունենայ : Այս սրբազան սկզբունքն իբրև անցադիր մ'եղած էր մեր նորամիտ փաստարանին սկզբանց պակասութեանը և անտարբերութեանը , որով կատուի պէս միշտ չորս ոտքի վերայ կ'իջնար : Հին ժամանակի Սողոմոն³ այսպիսի դատարար մ'իբ հասարակապետութենէն դուրս կը վճռէր , բայց արդի Սողոմոններն աւելի խորագէտ են , և ըստ պիտոյից օգուտ կը քաղեն այսպէս ինքզինքնին փորձառու և հաստատական կոչող անձանց զիւրադարձութենէն :

Արդ՝ այս անձն ուրախութեամբ յանձն առաւ դատաքննութեան պաշտօնը , տեսնելով որ իւր ձեռնարկելիք դատը՝ առանց այս կամ այն կուսակցութիւնն իրեն հետ սրբողէցընելու , կրնար ոչ միայն նոյն երկրին մէջ , այլ գուրտերն անդամ մեծ համբաւ մը վաստկընել իրեն :

Սկիզբէն միտքը դբաւ որ ձեռքակալն անպատճառ յանցաւոր է , և սխաւ փաստերն ու սպալոյցները այնպէս կրկտել որ հասարակաց դաղափարն օրինաւորապէս յայտնուած համարի զայն :

Ամբաստանեալին վարքն ու անցեալն իրեննորաստար չէին կրնար ըլլալ . վեղարը ձգող և սուրբ Եկեղեցւոյ ծոցէն դուրս ելնող արեղայ մը՝ հարկաւ յեղափոխական և չարացործ մ'եղած ըլլալու էր . ինքզինքը հողեօր դատապարտութեան ներքև ձգողը՝ դրամնց օրէնքն ալ կրնար խորգտեսել :

Ուրիշ պարազայ մ'ալ կար որ Ալբոյի դատապարտութեանը կը նոյատուէր , գաշակցական բղեշխները խել մը Գերմանացի յԱմբերիկա քարտերէ տուած էին անցթաբար . Ալբոյ ասոնց մէկուն հետ սերտ առնակցութիւն ունեցած էր :

Աթենացի երեսելի խմատուն մը , որ օրէնքներ դրաւ Աթինայ երբ սա քաղաքական պատերազմներով պառակտեալ էր :

Քննիչը նախ այս պարազայէս սկտաւ , և ամբաստանեալը զայն չուրացաւ : Տարադիր փախտականն հետ ինչպիսի յարարերութեան մէջ դտնուիլը հարցուած ատեն՝ անմիջապէս պատասխանեց թէ՛ նոյն ժամանակները՝ թէ՛ յիշեալին և թէ՛ ուրիշ դերմանացիներու իտալերէն դաս կու տար . խոստովանեցաւ որ յիշեալ անձին վերայ մասնաւոր համակրութիւն ունեցած էր , վասն զի արտաքոյ կարդի հանձարոյ և աղիւ զյայմանց տէր էր նա , աւելցոյց նաև , թէ՛ անոր ձեռքակալութեանը ներկայ գտնուելով , փոխանակ զանի մեղադրելու՝ լայեր էր այնպիսի ընթացքի մը վերայ , որ աղաս երկրի մը՝ և հասարակապետական կառավարութեան մը չէր վայելեր :

Այս խօսքերը՝ քննիչ դատարրին փնտուածէն աւելի էր հետևցընելու համար թէ՛ աքսորեալը դաղանի դաւակցութեանց գլուխներէն մէկն էր և անուանեալ դասախօսն՝ անոր մեղակից :

Բայց երբ գործը մտուկին՝ աւանդին եկաւ , և ճարտար հարցաքննիչն այս իրաց կարծեցեալ կապակցութիւնը հաստատել կը յուտար , բոլոր իր խնդիրներն ու առարկութիւնները խորտակեցան անցալթելի և անակնկալ բացասութեան մ'առջև : Ալբոյ տեսաւ այն թակարդն ուր ինչալու վերայ էր արդէն , և զինեցաւ իր բոլոր զօրութեամբն ամեն յարձակում վանելու և դաւն 'ի դերև հանելու . առաջին անխոհեմութիւն մ'իբրեն շատ սուղի նստած էր , պէտք էր զգուշանալ երկրորդէ մը : Խօսելիքին համար սահման մը դրած էր ինքն իրեն , ուսկից դուրս չպիտի ելնէր . և քննիչն ոչ բռնութեամբ և ոչ համոզողութեամբ կրցաւ զանի խախտել :

Զէր կրնար իբրև աւանդ դումար մը իրեն տրուած ըլլալն ուրանալ , սպալոյցները շատ էին , մասնուած ըլլալը յայտնի էր , և մասնիչն ալ իր վկայութիւնն ընելու պատրաստ . ուտոի պատասխանեց թէ՛ յիրաւի պահելու համար իրեն աւանդ մը յանձնուած էր , և ժամանակ մը զանի իր քովը պահած էր . բայց յետոյ պարտք համարեր էր ձեռք չանցնելու տեղ մը պահել զայն . թէ՛ չէր կրնար տիրոջն անունը յայտնել և ոչ այն գումարն իրենց յանձնելու հաճիլ . թէ՛ գաղանիքը պահելու երգում՝ ըրած էր , և ոչ բռնութիւն մը կրնար զանի իր սրտէն դուրս քարշել :

Ալբոյ իր ջերմ հատարմութեամբը կը կարծէր թէ գատարանին հարցմանցը սահման մը դրած եղաւ, և չէր տեսներ որ նոր ամբաստանութեան առիթ և կասկածից հաստատութեան տեղի տուաւ. քննիչ գատարն ապահով էր գատաքննութիւնը յառաջ վարելով՝ աճիրն ՚ի լոյս հանել:

Խնդրոյն տարօրինակ բան մ'ըլլալը, ձերբակալին վրայօք պտտած դանազան զրոյցներն, և որպէս թէ՛ բանին մէջ դետպանագիտական դադանիք մ'ըլլալը, այս ամենը բոլոր շրջաքնակաց խիստ հետաքրքրութիւն պատճառած էին, ուստի և ամենքն ալ միտքեր֊ շին դրեր էին որ տեղի ունենալիք քննութեանց ներկայ դանուին:

9

ՆԱԽԱՊԱՏԲԱՍ ՊԱՏԱՐԿՆՆՈՒԹՅՈՒՆ

Ալբոյ պիտի ներկայանար գատարանի մ'ը հասարակութեան մը առջև որոնք իրեն գէմ՝ խիստ նախապաշարեալ էին: Վանական հաղուստը հանելով, և եկեղեցական պաշտօնը ձգելովն անստոյգ գիւրքի մը մէջ կը գտնուէր, որն որ խորին և ընդհանուր թշնամութիւն մը յարուցած էր իրեն գէմ:

Քիչ մարդ կամ ոչ որ կ'ուզէր ճանչնալ այս որոշմանն կատարեալ օրինաւորութիւնը. վանքն ըստ ամենայնի ջնջուած էր, և անոր անդամներն աշխարհականութեան գառնալու արտօնութիւն ընդունած էին. խոհոն գատողութեամբ մտածելով, ո՞վ կրնար զանի ամբաստանել՝ արուած արտօնութիւնն իր ընդարձակ տարածութեամբը գործածած ըլլալուն համար. բայց իրաւախնդրութենէ աւելի սովորութիւնն է որ կ'առաջնորդէ ժողովրդեան՝ իր գատողութեանցը մէջ. ուստի Ալբոյին ըրածը միշտ ապօրինաւոր և յանցաւոր կը դատէին. անս՝ որչափ խոր արմատայած է կաթողիկ հասարակութեան մէջ սա նախապաշարումը, թէ՛ ամեն գաշնադրութիւն կրնայ լուծուիլ բայց ՚ի յայս մէկ հասիկէն, որն որ լուծ

ուելովը՝ երբէք մնաս մը չպատճառեր գաշնադրութենէ գուրջ գանուողներուն:

Ասիէ աւելին կար. Տիգրնոյի ժողովուրդն ՚ի վաղուց հետէ իրբև երկու բանակ՝ երկու քաղաքական կուսակցութեանց բաժնուած ըլլալով, մէկ մասն որ աղտոտական կը կոչուէր, ամբաստանեալին հակառակ էր անոր համար որ՝ արեղայութիւն ըրած էր նա. միւս մասն որ պահպանողական անունով կը պարծենար, չէր կրնար ներել որ նա յարեղայութենէ դադրի. այնպէս որ վանքերուն ձեռքէն աղատող խեղճը՝ գատարանին մէջ՝ իրեն թշնամի չեղող մը չունէր: Ազատականները կ'ուրախանային որ այսպիսի ծանր աճրի մը յանցաւոր երևայ Փրանկիսիեան մը, որով կը յուսային բոլոր ուխտն անոր բարոյական մեղրակիցն է բսելու յաջողիլ: Պահպանողականներն ալ ուրաջողութիւն կոչածին պաշտպանողի պէս չեքնալու համար աւելի անհաշտ կ'երեւային այս անձին գէմ, որ շատ յարմար կու գար ամեն կասկած փարատելու, մինչդեռ ուխտին կողմը բռնելով, կամ իրենց խօսքին նայելով՝ Եկեղեցուց շահուն համար անձնական յանցանքներն անտես ընելու էին:

Խուռն բազմութեան մը առջև ատեանը բացուելով, քննիչ գատարն իր տեղեկադրութիւնը կարգաց, որուն մէջ օրէնսդէտի մը նրբութիւններն ու Յիսուսեանի մը խորամանկութիւնները լաւ շարած էր: Փոխանակ վկայեալ իրողութիւնները կարգաւ քննելով՝ ինչպէս որ կը պարտէր, ամբաստանելոյն խոստովանութիւնը ճարտարութեամբ կը շփոթէր իր երբեմնական լուծութիւններովն, այնպէս որ չըսածն ըսածէն աւելի հաստատուած կը ցուցնէր: Տարադրեալ Գերմանացուց հետ անոր ունեցած յարաբերութիւնները, անոնց համար գաշնակից իշխանութեանց գէմ բռնած ընթացքը, սնտուկին մէջ դտնուած դրութիւնն որ ինչպէս յիշեցինք՝ Գերմաներէն էր, աւանդին՝ մտտուկին մէջէն վերցուիլը, պարունակած դրամոյցը վերայօք եղած հարցաքննութեանց պատասխանել չուզելը, Վէրցաքայի հեռաւոր ձորին մէջ բնակիլը կասկածայարոյց ըլլալն, այս ամենը՝ գրեթէ անոր յանցանացը նշանակ և փաստ մը կը մատակարարէին: Ապա ընդհանուր փաստաբանը խօսքի սխաւ, և անոր յանցաւոր ըլլալուն վերայ յայնի գատաստան մ'ընելով խնդրեց ատեանէն որ արժանաւոր պատիժը անօրինուի:

Պաշտպանող փաստաբանն արդարեւ իրաւունք փնտռող է քաջ ճարտարարան էր, բայց քաղաքականութեան և կուսակցական մարդ էր, և չէր կրնար այն աստիճան արդարութիւնը պաշտպանել, ինչպէս որ հաւատարիմ ատենակից մը՝ ինչ կուսակցութենէ ալ ըլլայ, տարբեր կուսակցութենէ եղող հակառակորդի մ'իրաւունքն ազատօրէն կը պաշտպանէ: Փոխանակ ամբաստանութեան հակասականութիւնը ցուցնելու՝ կը ջանար պատճառանքով արդարացունել ամբաստանեալը. փոխանակ ազատ և կտրուկ կերպով մը բանին ստուծիւնը ցուցնելու՝ հակառակող նախապաշարմանց դէմ խոյս տուող փաստեր կը բերէր: Անոր նախկին արեղայական վարքէն՝ աղքատութեան համար ըրած ուխտէն՝ լերանց վերայ վարած խեղճ կեանքէն՝ նպատաւոր փաստեր կը մտրար. բայց չկրցաւ պէտք եղածին չափ կարեորութիւն տալով ցուցնել թէ ինչ էին իրաց պարպանքը, թէ ինչ վստահութեամբ ամբաստանեալը զինքն օրինաց յանձներ էր, և ինչ վեհանձն դէմք մ'ունէր և ինչպէս պատասխաններն իրարու կը համաձայնէին. վերջապէս չկրցաւ հասկըցնել ատենակալաց թէ ինչ մեծ համարում ունենալու է այնպիսի անձի մը վերայ, որ իւր երգուած դաղանիքը կը սահէ ամեն վտանդի առջև: Եկեղեցիէն զատուելու համար ըրած հաստատ դիտաւորութիւնը պէտք էր անոր հաստատամտութեանն ասպացոյց մը համարել, իսկ նա՝ վանական կենաց դէմ անկարեւոր որոշում մը ըրած ըլլալէն ուրիշ բան չէր կրնար տեսնել. վերջապէս եթէ իւր ընտրած ասպարէզին մէջ հակառակորդին յաղթել անկարելի կ'երևէր, պէտք էր կառավարութեան կեղծաորութիւնը յայտնել, ըսել թէ՛ այս դատը թէպէտ և ելեմտական դործոյ մը կերպաբանաց ներքեւ կը ներկայանար, այլ սակայն ուրիշ բան չէր, բայց եթէ երկրին համար օտար եղող շահերու ծառայելու նպատակաւ հնարուած քաղաքական դատ մը, և պէտք էր բողոքել ատենակալաց այն մասին, որ Աւստրիոյ համազմանքը ծառայելու պիտի կարմրէին: Բայց պաշտպանող փաստաբանը չկրցաւ ձայնը բարձրացնել այնպիսի կառավարութեան մը դէմ որ ազատական անուանը կը կրէր, որպէս զի վտանգի չենթարկէ իր բոլոր կուսակցութիւնն, որմէ ինքն երեսփոխան ընտրուած էր. և փոխանակ դատա-

բանին արդարութեանն՝ անաչառութեանն ու ազատութեանը բողոքելով խօսքը վերջացնելու, դատաւորաց ներողութիւնը խնդրեց այնպիսի անձի մը համար, որ աւելի դժբաղդ էր քան թէ շարագործ:

Այս խօսքն ոչ դատաւորաց և ոչ անհամբեր ունկնդրաց վերայ կըցաւ ազդեցութիւն ընել. միտքերը կասկածով դաւեալ մնացին, մինչդեռ ուսմական նախապաշարմամբք զրդուեալ կիրքերն արդարին և ուղիղին դէմ կը դարանէին:

Ատենին նախադահն 'ի նպատ և ընդդէմ բերուած փաստերը համառօտիւ ամփոփելով՝ յայտնապէս ցուցուց թէ Աստրիոյ* կշիռն որ կողմ կը հակէր: Շատերուն մտքին մէջ ամբաստանելոյն յանցաւոր ըլլալուն կասկած տուողն՝ ըստ իւրեանց բանի, յանցանաց մարմինն ու մեղսակիցներուն անուններն արդարութեան առջև ծածկելու համար հաստատամտ կենալն էր. եթէ անմեղ եղած ըլլար, ըստ նոցա դատողութեան՝ ամէն բան սխտի յայտնէր և ասանկով իւր կրելիք պատիժէն ու անուանարկութենէն պիտի ազատէր. ուստի հարցաբնութիւնը շարունակելու պէտք զգալով՝ նախադահը դարձաւ յամառողին ըսաւ որ յանուն արդարութեան խղճութիւնը, որ կասկածէ մ'աւելի զօրութիւն ունէր, այս խօսքերն այսպիսի ընդհանուր աղաղակով ընդունուեցան որ կ'երևէր թէ հասարակաց ձայնը կ'ըստիպէր զամբաստանեալն որ օրէնքն ու ամենուն արդար ակնկալութիւնը դժ ընէ:

Արդոյ սխաւ վարանիլ թէ արդեօք խօսի՞. ներկայ եղողներն ու դատաւորները սրտէն մը կարծեցին թէ անոր կամակորութեանը յաղթելու վերայ են. բայց դարձեալ սխալեցան. յիրաւի խօսեցաւ, բայց միայն այնպիսի բարոյական բռնութեան մը դէմ բողոքելու համար, որով զինքը երգմնազանցութեան կ'ըստիպէին:

— Ոչ, քաղաքացիք, ըսաւ. տուած խօսքս չպիտի զրժեմ, կրնաք զիս դատապարտել, կրնաք զիս հասարակաց անարդանաց ներքև ընկճել. բայց և ոչ մէկ բառ մ'աւելի կրնաք իմ շրթունքներէս զուրս քարշել. յուսով եմ որ պիտի կրնայի համբերել ամենա-

*ըստ առասպելաց, դիցուհի արդարութեան: 3

դառն չարչարանայ տանջանքներուն, եթէ ժամանակն զանոնք չնջած չըլլար: Աը հասկընամ որ իմ անցեալս ինձի դէմ կասկածներ յաբուցած է. կը հասկնամ որ զլլուս վրայ ծանրացող ճակատադրէն չլիտի կրնամ ազատիլ: Չեր արդարութիւն կոչածը՝ ինչպէս որ կ'ըսէք, իր ցատուը թափելու տեղ մը՝ զո՛հ մը կը փնտռէ, իմ արեանս ու անպատուութեանս ծարուած է. յանցանք գտնելու համար ցուցուցած փափաքնիդ այնպիսի դործ մ'է որ կ'ընդդիմամարտի մարդկութեան սրբազան օրէնքներուն՝ այն ընկերական բարձր իրաւանց, որով չէ թէ ամբաստանելոյն կարծեցեալ յանցանքն, այլ անմեղութիւնը փնտռել պէտք է, եթէ զիս յանցաւոր ընել կ'ուզէք, պիտի դատաւարտուիմ. բայց թէ որ Աստուած մարդուս խօսքին զօրութիւն մը տուած ըլլար ուղիղը յայտնելու, և անոր ճակտին ու կերտարանացը վերայ սրտին նմանութիւնը դրէր նէ, զիս՝ ամեն դատաւարտութենէ ազատ պիտի արձակէիք. ես անմեղ եմ, ո՛ր դատաւորներ, իմ խղճիս առջև, Աստուծոյ առջև: Այս խօսքն որ թերես զիս ազատելու պիտի ծառայէր, իմ իսկ աչացս առջև զիս յանցաւոր կ'ընէ. լուսդոյն կը համարիմ՝ անմեղ ըլլալով դատաւարտուիլ, քան թէ ազատելու համար՝ վատութեամբ արատաւորիլ:

Այս վեհանձն խօսքերն որ դատարաններու մէջ յանցանք երեւան հանելու համար դատաւորաց ցուցուցած ջանքին՝ իբրև խոցի մը կարեվեր կը հարուածեն, այս խօսքերն՝ փոխանակ անոնց սիրտը շարժելու, անձնասիրութիւննին զրդուեցին և սրտերնուն մէջ անաչառութեան և պաշտպանողութեան վերջին հետք մը չթողուցին: Ընդհանուր փաստաբանը խօսքերն ամփոփելով կ'ուզէր առանց յայտադրելոյ քուէ առաջարկել. բայց պաշտպանող փաստաբանն իւր պաշտպանեալին անմեղութեանը համոզուած ըլլալով, և միտքը դրած ըլլալով որ եթէ կարելի է՝ տրուելիք անբարոյական և անխրաւ վճիռն արդելու, խնդրեց որ ուրիշ ժամանակի ձգուի. ըսելով որ 'ի նպաստ ամբաստանելոյն ուրիշ փաստեր ունէր յառաջ բերելիք:

Ատեանը չկրցաւ խնդրքը մերժել, և վճիռն յառաջիկայ նիստին ձգուեցաւ:

Ալբոյի պաշտպան փաստաբանը դատին ինչ վախճան ունենալիքը զիտէր. դատաւորաց կերպարանքէն և ունիդրաց ըրած ցոյցէն հասկըցած էր որ նա՝ ընկերական նախապաշարմանց և քաղաքական դաշանի նպատակի մը զո՛հ եղած էր: 'Նորէն՝ ի նպաստ անոր խօսելու ժամանակ վաստիկելով՝ ուրիշ յոյս չունէր, բայց եթէ համոզել որ լուութիւնը խղէ, և անանկով պաշտպանութեան նոր միջոցներ գտնէ. ուստի վերջին խորհրդակցութիւն մ'ընելով հետը, դատին վիճակն ու յառաջիկայ վտանգն անոր աչքին առջև գրաւ:

— Անկարելի է, պատասխանեց Ալբոյ. երբէք չպիտի զիջանիմ երբումս դրժելու, ո՛չ ալ ազատութեան խնդիրը մասնելու:

— Միտքդ կը հասկընամ, ըսաւ փաստաբանն՝ աչքն անոր վրայ անկելով:

— Ես ալ՝ ո՛չ ևս կ'ուզեմ զիս այնպիսի ընթացքի մը ստիպող պատճառները ձեզմէ գաղտնի պահել. դուք համեստ մէկն էք, և միայն ձեզ ընելիք վտահութիւնս չէք բռնաբարեր. կ'ըզգամ թէ պէտք է որ իմ պաշտպանս լաւ մը զիս ճանչնայ և ըստ այնմ դատէ. մտիկ ըրէք:

«Պատէնի յեղափոխական բանակէն կամաւոր զինուոր մը յաջողեցաւ հրաշխք իմն ազատելու պատերազմական դանձն, որն որ յաղթողաց ձեռքը պիտի ինկնար, գրամաթուղթ և ոսկի՝ ընդ ամենը մէկ միլիոնի չափ էր. հասարակապետական զօրքն թէև կոտորած մը կրեց, սակայն տակաւին մօտակայ յաջողութեան մը յոյս ունէր. ուստի այս գումարն որ յեղափոխութեան դանձն է, պահելով նա կը յուսար և կը խորհէր՝ նմանօրինակ անյաջող չըլլալու նոր փորձի մը համար պէտք եղած միջոցներուն մէկը փրկել:

«Զուկցերիոյ մէջ ասպատանելով, իր սրբազան աւանդին սուբի

հոգ կը տանէր քան թէ իր անձին . թշուառութեան և անօթու թեան կը համբերէր ու այն ստակին չէր դպչեր . երկրէ երկիր՝ լեռնէ լեռ՝ փախտական , քիչ մը ժամանակ մեր քովը խաղաղ և չճանչցուած ապրեցաւ . բայց հոս ալ յայտնուեցաւ դարձեալ և դաշնակցական գործակատարներն անոր ետեւէն ինկան , յանկարծակիի բերելով բռնեցին տարին , այնպէս որ ինձմէ ուրիշ մէկու մը չկրցաւ խօսիլ . նա զիս ճանչցած ու սիրտս քննած էր : Այն թանկագին արկղը դառն աքսորանացը մէջ հետը պտոցընելու չհամարձակելով , այնչափ վտառահալութիւն ունեցաւ իմ պատուոյս վերայ , որ չլարանեցաւ իր գաղտնիքն ինձ յանձնելու , և այն դումարին զիս աւանդապաճ ընելու . ինձի ըսաւ թէ տարիէ մը պիտի դայ ու առնէ . եթէ չդայ , այն ստակն Եւրոպական յեղափոխական յանձնաժողովին յանձնեմ , որն որ այն ժամանակ Ղծնորայի մէջ հաստատուած էր : Ահա հիմա ամեն բան զիտէք . բռէք ինձի , որ և է վտանգի կամ բռնութեան համար՝ ապագայ յեղափոխութեան գանձը ձգեմ՝ այնպիսի մարդոց ձեռքը , որոնք անշուշտ ՚ի նպաստ վերահաստատեալ իշխանին պիտի դործածեն զանի :»

Փաստաբանը վայրկի մը մտախոհ մնաց . բայց այնպիսի վառ գործ մ՝ ընելու խրատել չհամարձակեցաւ :

— Ահա ձեռքս ձեզ կ'երկնցընեմ , ըսաւ . հասկցայ որ ալ իմ պաշտպանողի պաշտօնս լմնցած է . բայց այս վայրկեանէս դուք իմ համարումս ու բարեկամութիւնս վասակեցաք . մեր դատապարտութիւնը պիտի կրենք , բայց ապագային նկատմամբ անդրդուելի պիտի մնամք :

Ալղոյ այս խօսքերէս շարժեալ փաստաբանին ձեռքն ընդունեց , և զանի թոթվեց այնպիսի վեհանձնութեամբ մը որ միայն պարկեշտ անձի մը արժանիքն է :

— Ուրախ եմ որ ձեր զգայմանցը վերայ չեմ սխալած , ըսաւ . ձեր բարեկամութիւնը՝ զլիուս դալիք դժբաղդութեան մէկ ազնիւ փոխառնութիւնն է . կը կարծէք որ այդ դժբաղդութիւնն անհրաժեշտ է :

— Այո , միայն քուէին մնացած է բանը . անոր վերայ ալ երբէք չէք կրնար յոյս դնել . հասարակաց գաղափարը՝ կամ լաւ ևս

կրօնական նախապաշարումը զոր զրդուած էք , ձեր կորստեանը հետամուտ է :

— Ի՞նչ պիտի ըլլայ պատիժս :

— Ի տես հասարակութեան , և վեց տարի թիարան :

— Ըսել է՝ վատ անուն և ծանր մահ . հոգ չէ . դատապարտեալը դատաւորներուն վերայ չնախանձիր . ապագային արդարութեանը զիս կը յանձնեմ . ժամանակը՝ այս քողը կը վերցընէ և աւելի արդարութեամբ կը բաշխէ նախատինքն ու պատիւը :

Փաստաբանը՝ սիրաբը լալու չափ շարժելով , կրկին ձեռքը թոթվեց և դուրս ելաւ :

Ալղոյ խորին տրամութեան մէջ ընկղմեալ մնաց . իւր կրեւիք պատիժն ու ՚ի տես հասարակութեան կենալու խայտառակութիւնը կը մտածէր . բայց զանի աւելի տանջողը սա գաղափարն էր , թէ ինչո՞ւ մարդս չէր կրնար յաղթել այն ընկերական նախապաշարման որուն խոնարհիլ պարտաւորած էր . — Ար ճանչնամ , կ'լսէր , կը ճանչնամ իմ գեւիս ձեռքը . . .

Մինչդեռ այս տխուր մտածման մէջն էր , և ահա իր բանտին դուռը բացուեցաւ , և մէկը ներս մտաւ . առջի բերան իր երեւակայութենէն յառաջ եկած տեսիլ մը կարծեց զայն . սակայն Աերցաորայի ձորին քահանայն էր ներս մանողը :

— Ի՞նչ կը փնտռէք հոս , ըսաւ բանտարկեալը՝ սաստկութեամբ մը :

— Ձեզ սպասող դատապարտութենէն զձեզ ազատելու կու գամ , ըսաւ քահանայն՝ ծանրութեամբ մը :

— Այնպիսի դատապարտութենէ մը , զոր դուք զրդուեցիք ամենավատ մասնութեամբ . . .

— Կարելի է , ըսաւ քահանայն՝ առանց խռովելոյ :

— Շիտակ է՝ հա՛ , ուրեմն . դուք ի՞նքն կը խոստովանիք , բոռաց բանտարկեալը . և այն գաղտնիքը զոր ինձ երդուաք . և խոստովանութեան կնիքը . և պատուոյ վրայ երդուիլը :

— Ես զձեզ իբրև գանձու մը աւանդապաճ չմտանկցի . ո՛չ տիպտոյն անունը յայտնած եմ , ո՛չ ալ այդ ստակներուն ինչ բանի ծառայելիքը . . .

— Ա՛հ . քահանայ , դուչեց Ալբրոյ՝ արհամարհական ձայնիւ մը . ճիղլլիթական փաստով մը և հուետորական իմաստակութեամբ մը կը բաւականանաք՝ մասնինչ և լրտես անունը ջրի պէս խմելու :

— Հանդարտեցէք , սրտասխանեց , ուղեղնիդ բարկութեամբ կամ վերմիւ խռոված է . հեռաբար չէք կրնար հանդարտ մտօք ինձ մտիկ ընել այն ամեն սպարողաները յիշելու , յորս՝ մարդուս խօսքը պէտք է երկնից աղբեցութեանցը և օրինաց կամքին առջև խոնարհի . ասոր վերայ յարմար ժամանակին կը խօսինք . հիմա աւելի կարևորին նայինք . զիս կ'ամբաստանէք , որպէս թէ ձեր դատաւարտութեանը սլաճառն եմ . ես ասի ոչ կը հաստատեմ , ոչ ալ կ'որանամ . սա միայն կ'ըսեմ , որ ձեզ աղատութեան միջոցմը ցոյցնելու համար միտն եկայ :

— Ո՞րն է ատի :

— Ձեզ համար մնացած միակ միջոցը :

— Ո՛հ , ըսաւ Ալբրոյ՝ ախուր կասկած մ'ալ միտքը դալով . ժահ . . .

— Ո՛չ մահ . մահն Աստուծոյ ձեռքն է , զոր յարմար ժամանակի կ'աղարկէ . և թէ մեղաւորին կը խնայէ , որպէս զի պատասանայ , ես՝ կեանք և աղատութիւն կը բերեմ ձեզ :

— Գո՞ք . բայց ի՞նչպէս . միթէ դատարանին մէկ գործակատարն էք :

— Ես դատարանէն աւելի եմ . վասն զի վճիռը կախակայելու և անոր սարունակութիւնը փոխելու կարող եմ :

— Գո՞ք :

— Ե՛ս , հարկաւ մինակ չեմ , այլ Աստուծոյ զօրութեամբ , և այն օրինաւոր ազգեցութեամբ , որ մեզ արուած է ունենալ կաթմոլիկ երկրի մը մէջ : Մենք «Աէդէովն» կ'ըսուինք :

— Այո՛ , ճիշդ այն չար ողիներուն պէս , զորս Քրիստոս պիղծ երամակի մը մէջ մանել տուաւ :

Քահանայն՝ այս թշնամանաց վերայ լռեց . և քանի մը վայրկեան յետոյ ըսաւ .

— Յնորեալի մը թշնամանքը կը ներեմ , ըսածնիդ չէք դիտեր , վերջապէս ձեզ սպասող նախատալից սրտիժէն ազատիլ կ'ուզէք :

— Ամեն մարդ իր ազատութիւնը կ'ուզէ , մանաւանդ՝ եթէ իւր վերայ ձգուած յանցանքէն անմեղ է :

— Շատ աղէկ . դուք կրնաք ազատիլ պայմանով մը . . .

— Այո՛ . իմ մեղսակցիս անձնը կ'ուզէք :

— Ո՛չ , ատի ինձ պէտք չէ . եթէ այդ միտքն ունենայի , թերևս հիմա կրնայի հասկնալ . դարձեալ՝ ո՞վ կրնայ ըսել թէ արդէն չեմ դիտեր . բայց ձեր հաւատքին վերայ բռնանալ չեմ ուզեր . ուզած պայմանս ծանր է :

— Ա՛րդուհիմ , միտն թէ ստատոյս գպշիլէք կամ ուրիշի փեսաւիլք բան մը չըլլայ , որ և է զոհողութիւն թեթև պիտի երևայ ինձ , եթէ զիս ուրիշ բանտէ մը՝ ամբարիշտներու և չարապործներու ուրիշ ընկերութենէ մը ազատէ :

— Պահանջած պայմանս . ըսաւ քահանայն՝ այս ակնարկութիւնը չհասկցածի պէս , ձեր աղատութեանը համար գրած պայմանս՝ արտաքոյ կարդի բան մը չէ . նա մանաւանդ՝ իրաց դասաւորութեան մէջն է . . .

— Միթէ Գանձապետներուն խուզարկութիւններէն ծածկած ստակիս մէկ մասը կ'ուզէք :

— Ստակ . ըսինք թէ այն ստակը կեղծ ալ չըլլայ . դարձեալ ինչո՞ւս պէտք . ստակէ շատ աւելի է ուզածս . հողուոյդ փրկութիւնը կ'ուզեմ :

— Ո՛հ :

— Ահա պայմանս . հանդիսիւ պէտք է ձեր մոլորութիւններէն հրաժարիք , կրեթական հանդերձն զղենուք և վանքի մը մէջ մտնէք :

— Բանտի տեղ բանտ . ո՛չ , ո՛չ երբէք :

— Մտիկ ըրէք . հաւնած մէկ քահանանուդ քով հողեոր ապաշխարանքնիդ կը քաշէք . և երբ նա ձեր զղջման վկայելու յարմար դատի , նորէն քահանայական սուրբ պաշտաման կ'ընդունուիք :

— Ո՛չ , ո՛չ երբէք , չեմ ուզեր որ աշխարհ կարծէ թէ փոփոխական և անցաւոր պատճառի մը համար զայն ձգեր եմ . չեմ ուզեր խղճի դէմ զործել :

— Այս կէտիս վերայ ես ներող կ'ըլլամ , այն ժամանակ կրօ

նական պաշտամունքն ընդունեցէք, երբ Աստուծոյ շնորհքը ձեր սիրտը թափանցէ և զձեզ նոր Ագամ մ'ընէ . . .

— Առաջարկած պայմաննուդ բովանդակութիւնն ի՞նչ պիտի ըլլայ :

— Պայմաննիս պիտի ըլլայ, ձեր մտլորութիւններէն հրաժարիլն, մեր մօր սուրբ Եկեղեցոյ ծոցը ապրիլ ու մեռնելու խօսք տալ և ձեր աստիճանին զպետաները հագնիլ :

— Բայց միթէ ասի Աստուծոյ և իմ իսկ առջևս ստեղ չէ՞ :

— Ոչ, դայթակղութենէ մը խորշիլ է, և սրտերնիդ պատրաստել այն կոչման զոր Աստուած իւր զթութեամբը չպիտի մերժէ ձեզ շնորհելու :

— Բայց իմ խիղճս :

— Անձնական խղճի ձայնը՝ Եկեղեցոյ անսխալական իշխանութեան առջև պէտք է լռէ :

— Է այն աստն ի՞նչ պիտի ընէք դուք, ի՞նչպէս զիս դատարանին դատաստանէն պիտի ազատէք :

— Իբրև եկեղեցական զձեզ առանձնաշնորհեալ աստնին յանձնելնին պիտի օգնիմ :

— Բայց ասի ջնջուած է մեր մէջ :

— Արդեամբ առկախեալ է բայց ոչ ջնջուած . Եկեղեցոյ առանձնաշնորհութիւնները մարդոց օրէնքով ոչ կը ջնջուին, ոչ ալ կը տարազին . առաջարկածներս ընդունեցէք, մնացածը՝ մեզ թողէք հոգալ :

Ալլոյ քանի մը վայրկեան մտածմունքի մէջ մնայ . բայց քիչ մը յետոյ ՚ի մեծ զարմանս քահանային՝ պատասխանեց թէ չլինար առաջարկութիւնը ընդունիլ :

— Մերժէ՛լ . ուրեմն դուք մտաւոր մտլորութեան մէջ էք :

— Չէ, տէր, ընդհակառակն հիմա աւելի առողջ և խաղաղ եմ ձեր ներկայութիւնն ուրիշ անգամ մը՝ զիս բժշկելու զարմանալի զօրութիւնն ունեցաւ . ահա միայն այս բարիքն ինձ ըրիք, և ասի միայն կրնամ ընդունիլ ձեզմէ :

— Բայց ինչո՞ւ . դո՞ւք բացատրեցէք . . .

— Վասն զի լաւապէս կը համարիմ՝ իմ բնական դատաւորնե՛ս

ընս մինչև իսկ յանիրաւի դատապարտութիւն գտնել, քան թէ ձեզմով ազատիլ ստախօտութեան մը շնորհիւ, որուն հետեանքը չեմ կրնար գուշակիլ . ալ կրնաք դուրս ելնել :

— «Գարմանեցաք զՖարիլըն և ոչ բժշկեցաւ . լըցուք զգա՞» այս խօսքերն լսելով, քահանայն անարդուած և անյաջող դուրս ելաւ . բանտէն, զինքը պարտողին վերայ բարկութեան և վրէժխնդրութեան նայուածք մը ձգելով :

Հետեւեալ օրն իմացուցին Ալլոյին թէ ընդդէմ իւր պաշտպանողին քաջ պատասխանոյն, դատարանը վճռած էր իր դատապարտութիւնը . վեց տարի թիարան և ՚ի տես հասարակութեան կեցընել :



ԱՆՈՒՐԵ ԿԵՄՐ Ի ՏԵՍ ՀԱՍԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԱՏԻԺԸ

Կեանքն ու պատիւը մարդուս այն ամենասիրելի երկու բաներն են, զորս ոչ օրէնք մը կրնայ տալ և ոչ օրէնք մը պէտք է որ առնելու կարող ըլլայ . կեանքն ու պատիւն ամեն պայմաններէ դերազանց՝ անբռնաբարելի և սրբազան են :

Այս սրբազան սկզբունքներն՝ թէև բնութեան մէջ իրենց հիմնունին և բանականութիւնը զանոնք նուիրողորձած է, այլ սակայն՝ կեանքն ու պատիւը գեւ դատաւորաց և աստնակալաց խաղալիկ եղած են, որոնք կը կարծեն թէ առանց զանոնք բռնաբարելու չեն կրնար մարդկային ընկերութիւնը կառավարել, և ՚ի նախատխտ մարդկութեան՝ մինչև ցարդ կը պահեն երկաթի անուրբ և կախազան :

Ճշմարիտը սա է, որ մարդկային օրէնքները գեւ մարդուս չեն այն հին բարբարոսութենէն, որ վրէժխնդիր արդարութիւն՝ քառու-

Թեան օրէնք և մասնաւոր մը հասարակաց շահուն զոհեցող կարեւորութիւն կ'ընդունէր. քրիստոնէութիւնն որ ոչ վրէժխնդրութիւն, ոչ քաւութիւն և ոչ ընկերական պաշտպանութիւնն իբրև սկզբունք ընդունած է իւր սուրբինած պատիժներուն, 'ի զուր ջնջեց այս վայրենի օրէնսդրութիւնը: Անոր սկզբունքն է զգաստութիւն:

Երբ այս սկզբունքն օրինաց զըբերուն գլուխը դուռէէ զատ՝ անոր համաձայն յօրինուին անոնց պատուէրներն ալ, այն ժամանակ կեանքն ու պատիւը սրբազործեալ պիտի ըլլան, և կախաղանն ու երկաթի անուրջն պիտի վերնան մեր մէջէն. բանսն իսկ պէտք չէ նկատել իբրև տեղի պատժոյ, այլ իբրև տեղի փորձոյ, որ մարդուս ազատութիւնը պիտի արդելու միայն անոր համար որ զայն զօրծածելու եղանակը սովորեցնէ:

Երկաթի անուրջն հնարող և զայն պահպանող զաղտփարը՝ անպատեհ և մարդատեաց է աւելի քան զկայինը. կեանքն անպատիւ ընելը՝ սպաննելէն աւելի է. և երկաթի անուրջն ուրիշ բանի չծառայեր, բայց եթէ մարդկային ընկերութեան առջև յանցաւորն անպատիւ ընելու:

Մտ ժամանակներս և մեզի մօտ երկիրներու մէջ անուրբի գատաւարուած անձին վերայ նշան մ'ալ կը գնէին. հրաշքի երկաթով մը կը գործէին յանցաւորը ճակտին կամ ուսին վերայ կամ կունակը, և այս՝ որպէս զի մինչև իր կենաց վախճանը մարդկային ընկերութեան նորմքին գործը կրէ Ապէնի նման, որպէս զի յանցաւորն ուզէ ալ նէ, շկարենայ զգաստանալու միտիլ և ինքզինքը փրկելու յոյս ունենալ: Գատատանաց այսպէս սխալական ըլլալովն և իրաց ու զխաւածոյ այսպէս փոփոխական ըլլալովն հանդերձ, գատաւոր մը կը կարծէ թէ կրնայ ապագային իշխել և մարդկային հոգեոյն կամքն ու զօրութիւնը կանխապէս դատել: Այն զիբքն որուն վերայ գատաւորք ձեռքերնին գնելով կ'երդնուն, կ'ըսէ, «Մեզաւորին մեռնիլը չեմ ուզեր, այլ կ'ուզեմ՝ որ ապրի ու զգաստանայ»: Իսկ գատաւորները կ'ըսեն. «Չենք ուզեր որ յանցաւորն զգաստանալու կարող ըլլայ, այլ կ'ուզենք որ մեռնի և յախտեան անարդուի»:

Յիշած գատարաննիս՝ չկրնալով կարծեցեալ զբամանեղը մա-

հուն գատաւորութիւն, իսկոյն անուանարկութեան գատաւարտեցէրեք օր՝ քաղաքին ամենէն բազմամարդ տեղը կայնեցուցին Ալլոն, ոտքը կոճեղ անցուցած, և քովը քարող մը կեցուցած, կուրծքն ալ թուղթ մը կախուած որուն վերայ դրուած էր «Գրամանենդ»:

Հիմաիւ ժամանակս հասարակաց կարծիքն այս տեսակ յանցանոց դէմ այնչափ անհաշտ չէ. փոխանադիրն ու գեւոր՝ Պօրսան հնարութէն 'ի վեր բոլոր սեղանաւորք և իրենց աշխերաները քիչ շատ այս տեսակ նենդութեանց մանասկցութիւն ունին. իրական և ենթադրեալ արժէքին մէջ տեղ եղած տարբերութիւնն է կեղծ դրամը՝ կառավարութիւններն ու մեծ զբամատէրերն առանձնաշնորհեալ զբամանեղեր են. և թէպէտ այս ընդարձակ դրութիւնը շքեղ անուններով զարդարուած է, սակայն ժողովուրդն հասկցած է զանի, և հրապարակաւ նենդողներն անմեղ, և առանձնականները մեղաւարտ չդատեր անիրաւարք:

Ժողովուրդն այս տխուր և նախատական տեսարանին այնչափ բազմութեամբ չպիտի վաղէր, եթէ ուրիշ պատճառներով զրդուած չըլլար. պատճառներ՝ որ արդէն զանի անհաշտ և ոխերիմ բրածէին գատաւարտեալին դէմ. ժողովուրդը՝ Հրեշտակաց վանքին Բոնոնուալլոն տեսնելու կը վաղէր, մարդ մ'որ ժամանակ մը սուրբի տեղ անցած էր, և հիմա յօրինաց գատաւարտեալ՝ չարագործի և վատանունի մը կերպարանօք կը ներկայանար:

Ալլոյ անմեղութեան շուքին տակ ապահով կը կարծէր թէ պիտի կարենար հասարակաց անարգանացը դէմ գնել վեհ ճակտով մը և սրբող նայուածքով մը, որով պահ մ'իր գատաւորները շփոթած էր, եթէ մարդկային բնութեան տկարութիւնն անոր ստոյիլեան հաստատամտութեանը յաղթէր, դարձեալ միտքը կրնար փոփոխիլ՝ խորհելով թէ ապագային մէջ թէպէտ ուշ, բայց անտարակոյս պիտի արդարանար:

Այլ սակայն իր կրելիք պատիժն ինչ պիտի ըլլար նէ, առաջուց գուշակած չէր. իր գէմը խոնուած բազմութիւնն որ վայելչութեան ամեն կտակերն, ակնածութեան ամեն օրէնքներն ու մարդկութեան ամեն բնական ազգումները բռնաբարելու արտօնութիւն

առած էր, այս սղէտ և խառնիճաղանճ՝ բաղմով թխելը՝ խորին կո-
րեկցութիւն մը կ'ազդէին իրեն, որով՝ այսօրիս անուանարի գործի
մը զրդիւ եղողները դառնապէս կ'արհամարհէր :

Հասարակաց կատակներն երբեմն մծ արդարութիւն կրնայ հա-
մարուիլ, երբ օրինաց իշխանութենէն փախչիլ ուղղորդուող վերայ
ըլլայ. Հռովմայեցի յաղթանակողները ծաղրող և բաղդին յաջող-
եալներն արհամարհող ժողովուրդը՝ կրնայ արդարութեան և սրամտու-
թեան ազդումով մը շարժեալ ըլլալ, որն որ դանի կ'արդարացնէ .
քայց ռամիկ ժողովուրդ մ'երբ զլուխն ու պատիւը կորսնցնելու դա-
տապարտեալ մէկը թշնամանելու կը վաղէ, վատ և դաղանական
ուղի մը կրելը կը յայտնէ :

Ձեմք ուղեր յիշել, թէ խեղճ գատապարտեալը շրջապատող
թշուառականներն ինչէր կ'ըսէին կամ կ'ընէին. բայց 'ի խրատ գատա-
բանաց՝ միայն սա կ'ըսեմք որ, չիար մէկն որ դանի իր ենթագրեալ
յանցանացը համար նախատելու նպատակաւ վաղած եկած ըլլար :
Ոմանք դանի կը ծաղրէին իրրև արեղայ և կեղծաւոր . այլք՝ իրրև
կարգընկէց և ուրացող, իրրև թշնամի կրօնից և մերժեալ 'ի քա-
հանայութենէ . մէջերնին կային նաև մուլեռանդ պառաւներ և ման-
կամարդ կիներ, որք բնական ամօթխածութեամբ կամ զթութեամբ
պէտք էր այս տխուր անտարանէն հեռանային . բայց ասնք ալ՝
թերևս խոստովանահայրերէն խաբուած և նախապաշարմամբ մնլո-
րեալ, իրենց արհամարհանքը հասարակաց անէճքին վերայ աւելցնե-
լովնին՝ հաւատոյ գործ մը տօնախմբել կը կարծէին : Բոլոր այս
տարբեր կիրքերն ու ներքին ազդումներն՝ այս հակառակ բնութիւն-
ները կը միաբանէին՝ գատապարտելոյն վերայ արդէն ծանրացող
նախատալից վերարկուն ևս առաւել ծանրաբեռնելու . բոլոր այս
տարբեր ձայներն՝ արհամարհանաց և կատականաց ներդաշնակու-
թիւն մը, ձայն մը կ'արտադրէին, որն որ աւելի քան զՄլղոյ՝
մարդկային բնութիւնն ու ժամանակին մարդավարութիւնն անսրատիւ
կ'ընէր :

Մլղոյ այս երեք օրուանս մէջ տեսաւ թէ ժողովուրդն որ աս-
տիճան կրնայ մնլորիլ սովորութեամբ և նախապաշարմամբ, և դա-
նի անմեղադրութեան և կարեկցութեան արժանի ընէլ կրցող պատ-

ճառները մտայն մէջ պարզելով, այն այս սղէտ և մոլորեալ
ամբօրիսն վերայ կ'ուզէր դարձնել այն անարդանքն, որուն ինքն
առակ նշառակի եղած էր : Այո՛, այս ժողովուրդն, այս խուժանն
որ դանի կը նախատէր, նոյն խիկ ինքզինքը նշառակութեան և ա-
նուանարիութեան կ'ենթարկէր . պահ մը ճակատը սրաղեց, բայց
նչ անձնատու անմեղի մը հանդարտութեամբ, այլ սա զիտակցու-
թեամբ, թէ ինքն այնքան անոնցմէ վեհագոյն էր որ անոնց նա-
խատինքն իր սրամտութեան վեհութեանը չէր կրնար հաւատարիլ .
քիչ մ'առաջ մարդկային արդարութեանը վրայէն իր վտահա-
թիւնը կորուսած էր, և հիմա՝ ալ մարդկային բնութիւնն իսպառ
ուրանալու մօտ էր և բոլոր մարդկային ընկերութիւնը կ'ուզէր իր
վեհ արհամարհանացը ներքև ձգել : Յակայն յետոյ զղջաց, որով-
հետև լաւ հասկըցաւ, որ չէ թէ բնական ազգամամբ, այլ չար սո-
վորութեանց և վատ գատապարտութեան պատճառաւ միայն կրնար
այսօրիս խուռն բաղմով թխել մը յուսացուիլ : Մինչև որ յանցանք
ու պատիժ բառերն աւելի ուղիւ գաղափար մը շնչանակեն, ժողո-
վուրդն իր զզացմանցն ու անկէ ծաղած իրողութեանց համար պա-
տասխանատու չէ :

Այս խորհրդածութեամբ Մլղոյի միտքը կ'ըստիտի՛ւր, վասն զի
չարիքն անդամանելի չէին երևար իրեն, բայց անոր դժուարութիւնն
ու ներկայ սովորութեանց առթիւ՝ տակաւին քանի սերունդ մնլո-
րութեան գատապարտուած ըլլալը խորհեցելով, խորին վհասութեան
մէջ ինկաւ, և եթէ մարդկութեան վրայէն վտահաթիւնն իսպառ
չվերցուց, դէթ իր դարուն համար յոյսը կարեց :

Ի տես հասարակութեան կենալէն յետոյ, 'ի թիարան տարին :

Թխարան :

Ահա տեղ մ'ուր կը դումարուին ամեն չարիք , ամեն ոճիրներ , որոնք ժամանակին չեն կրցած կեղծաւորութեան քողին տակ ծածկուելով օրինաց ձեռքէն փախչիլ կամ զայն օտնակոխ ընել անպատիժ :

Այս տեղին անունն է բանտ , զնգան , արդեւանոց , Թխարան . տեսակ մ'արդեւանոց , ուր կը փակուին ամեն տնօնք , զորս մարդկային ընկերութեան առողջ և զօրաւոր մասը կը մերժէ իրրև տաքափոխիկ հիւանդութեամբ ախտացեալներ , առանց խորհելու թէ այն տարափոխիկ ախտը՝ շատ անդամ՝ ուրիշներու նկատմամբ նեքելի՝ գովելի և օրինաւոր համարուած շատ մը զեղծումներու հետեանքն է :

Այս գարշելի փոխն մէջ յանցաւորը՝ դրոշմաւ թէ ոչ , օր ըստ օրէ ծայրագոյն վատթարութեան մը մէջ դատարարակուելով , մինչև իսկ զգատանալու կամքը՝ յոյսն և կարելիութիւնը կը կորսնցնուի :

Մեր օրէնսդրութիւնը կամ լաւ ևս հասարակաց խիղճը՝ դրեթէ իրօք մահու պատիժը ջնջած է . բայց ինչ օգուտ : Թխարանի բանտարկեալը՝ երկու երեք տարի իր պատժոյ ընկերներուն հետ փակուած մնալէ յետոյ՝ արդէն հօգուով մեռածէ մը աւելի է . այն պաշարիւն շնականութիւնը՝ որով նա առաքինութիւնն ու մոլութիւնը կ'ուրանայ , այն խիստ արհամարհանքը՝ որով իրմէ վեր եղողներուն նայելով՝ ՚ի զօր կը նախանձի , այն կեղծաւորութեան սովորոյթը՝ որով իր պահպանը պատրելու ստիպեալ է , այն վայրագութիւնը՝ որով իւր մնացեալ բոլոր կեանքը միայն անարգ ազդումներ գոհ ընելու կը յատկացնէ , այս ամենը յիրաւի շատ ամօթ կը բերեն թէ մեր մարդավարութեանը և թէ մարդկային բնութեան :

պատիժն որ նախ վրէժ , յետոյ ընկերական պաշտպանութիւն :

յետոյ ապաշխարանք անունն առած է , մինչև որ բոլորովին յանցաւորին զգատութեանը չյատկացուի , ամեն դատապարտութիւն՝ անիրաւութիւն , և ամեն բանտ՝ դժոխք մը պիտի համարուի :

Խեղճ Ալբոյ անուններուն անբարոյական տեսարանը կրելէ յետոյ էրբ եղեւնադործաց բանտը տարուեցաւ , տեսաւ որ իւր Տանդէսին մէջ կարգացած որջերուն մէկին մէջ ինկած է , և հաւատաց թէ զիւր հար արեղայից դժոխային նկարագրութիւնները՝ բանտին և թիաբանին նկարագրութիւններէն յօրինուած էին : Մեր քարոզիչները զԱստուած իրրև եղեւնական գատաւոր և կալանաւորապետ կը ներկայացնեն մեզ . ինչպէս կարելի է յուսալ որ հասարակաց դաղափորը՝ բանտերը բարեկարգելու և անոնց մէջէն նախապաշարուածները ջնջելու նայի , մինչդեռ այս իրերը՝ կարծեցեալ աստուածային արդարութեան մէջ օրինակ մը կը գտնեն :

Թխարան . սոսկալի՝ գլորոց անամօթութեան , ուր փոքրագոյն յանցաւորն իբրև նորընծայ կ'անարգուի . ուր ամենէն մեծ յանցաւորը կ'ողջունուի իբրև թաղաւոր բոլոր խմբին . այն տեղ՝ ամօթխածութիւնը , խիղճը , մեր նմանեաց յարգանքը նորէն վասակելու յոյսը՝ յիմարութիւն և խենդութիւն կը նշանակեն . բռնի աշխատութիւնը բաւական չէ համարուած , տեղոյն վատառողջ զիբքը , կերակրոց նուազութիւնը , դատապարտեալի հաղուստը , կոճիկերը , փակեալ մնալն՝ ամենաթեթեւ չարիքն են . առանձնութիւնն որ թէ չարագործին և թէ ապուշին համար անտանելի է , ինքզինքը զիտոյողի մը համար հաղարապատիկ լաւագոյն է քան այն շարեւուն ընկերութիւնն , որ ոչ ամօթ գիտեն և ոչ զրպուիլ :

Արդէն երկու շաբաթ եղած էր որ մեր բանտարկեալը բերդին մէջն էր . իր հիւընդփաղութիւնը պատճառ բունելով մէկդի քաշուեր է մինաւոր . բայց իր յանցանքն ու վաքքն արդէն իմացուեր էին : Այս տխուր բնակարանին մէջ՝ ամեն նոր եկող զուարճութեան և տեսակ մը հանդէսի առարկայ կ'ըլլայ : Բանտին մէջ եղողներուն զլխաւորը տեսնելով որ Ալբոյ իրենց ժողովքին չէր գտնուեր , զանի գտնելու համար ելաւ բանտին հիւանդանոցը դնաց , և զանի ոտքի վերայ և զբաղեալ տեսնելով սկսաւ վայրենի եղանակաւ մը հարցունել :

— Հա՛, ըստ այս մտադն՝ որ տեղւոյն ամենէն հին բնակիչն էք, կերելի որ դու մեր ընկերակիւնութիւնը չես սիրեր, հա՛, ինքզինքդ մեզմէ ազէկի մը տեղ ես գրեր, անանկ չէ՛. արեղայն ըլլալուդ համար միթէ. քու արժանապատուութիւնդ մեզի պէս ռամիկ մեղաւորներուն հետ այսպէս ծանր պէտք չէ վարուի. զիտնալու է որ քրիստոս մաքսաւորները կը փնտռէր զանոնք շահելու համար. կերելի թէ այն սուրբ կենաց արժանաւորացիս կոչուած չես. կը լո՛ւէք, արժանապատու հայր. իմ մեծանձնութեանս վրայ կերպնում որ կը սխալիք. պէտք է մեզի հետ դա՛ս գալիթը դալ, ձեզմէ քարոզութիւն մը կ'ուզենք մտիկ բնել. քարոզ մը դու գուք միայն կրնաք տալ. դու օրինակ, գրամանենդերու դէմ քարոզ մը. օն՝ բնակակից ընկեր, զիս մի՛ ստիպեր քեզ աղաչելու. որովհետեւ Աստուծոյ վերայ կերպնում, որ մեր խմբեակին այգոյսի անիրաւութիւն մ'ընել չվայլեր:

Այս յտաշարանութենէն Ալգոյ հասկցաւ թէ որքան դառն տանջանայ տոկալու ստիպուած էր. իր թշնամի՛ չար ողին մինչև այս տեղ հետն եկած էր. Արեղայ անունը Նեոյի՞ արխաններկ պատմութեանին պէս իր մտքին վերայ փակեր մնացեր էր. ինքզինքն աղատելու ջանան անօգուտ էր. պէտք էր չար հովին դէմ քաղցր դէմքով կենալ և անխուսափելի չարեաց առջև խոնարհիլ: Աստի ինքզինքը բռնելով առանց պատասխանելու բանտարկելոց զլսուորին ետէն շխտակ ախրձներուն դուրը գնաց:

Չորս կողմէն ընդհանուր ծափահարութեան ձայն մ'է փրթաւ, ոչ թէ նորեկին, այլ զանի առաջնորդողին համար:

— Վեցէ՛ քաջը, պոռացին ամենքը. մեզ միայն անի պէտք է: Եւ մէկզմէկու ետնէ սկսան նորեկին մօտենալ, և կատակելու համար՝ սրը ձեռքը, որն ալ քղանցքը պագնել կ'ուզէին:

— Ինչպէս է ձեր արժանապատուութիւնը. մուրալ գայիք այս տասնութինոց օրս. վանքն ինչպէս է. քանի աղջիկ սրբազորու-

*Առասպելեաց հրէշ, որ Հերքիւզէնին կնոջ ցանկամալուն համար պրաննուեցաւ Հերքիւզէսէն. վերարկուն զոր Հերքիւզէս առաւ հագաւ, անոր մահուան պատճառն եղաւ:

ցիք. տասուերկու հատ մը ըրիք. է՛հ, դէ՛ չէ՛՛ այդչափ ժամանակի մէջ:

Եւ այսպէս կը շարունակէին, և ահա բանտապանը հեռուէն դալով ամեն մէկն իր դործարանը փախաւ: Ամենքն ալ խոժոռ. դիմօք հեռացան շարժելով շղթաներն, որով սրունքնին կապուած էին:

Ալգոյ մինչև այն օր այս պատժական վերջին պատիւը չէր ընդունած՝ հիւանդ ըլլալուն պատճառաւ. ոչ ալ մասնաւոր աշխատութիւն մ'ընտրած էր իրեն համար. բանտապանը հարցոյց թէ ինչո՛ւ առանց հարցունելու և առանց հրամանի հիւանդանոցէն դուրս ելեր է:

Առաջին անգամին համար՝ ըսաւ, կը ներեմ. բայց եթէ կրօնական ըլլալուդ համար օրէնքէն ազատ ըլլալ կը կարծէքնէ, կը սխալիք. օրինաց առջև ամենքը հաւատար են. եկէք ձեր համազգեստն ու շղթայն առէք. թէպէտ և ձեզ քիչ մը քաղցր նայելու պատուէր ընդունած եմ, բայց պէտք չէ որ չարաչար վարեմ, այդ պատուէրը:

— Ինչ, ըսաւ Ալգոյ, չեմ ուզեր, պէտք չէ. դուք ձեր պարտքը կատարեցէք. ես ամեն բանի յանձնաւոր եմ:

— Շատ աղէկ, ինչ արհեստ կրնաք գործել:

— Ինչ արհեստ:

— Ա՛հ, ինչ անխելք եմ ես ալ. արեղայից արհեստն ինչ ըլլալը մոռցեր էի. հոյ չէ. այս տեղ պէտք է արհեստ մ'ընտրել ու գործել. օրը տասը ժամը խիտ շատ չէ. աղքատ ժողովրդեան շատը՝ ալ տեղի կ'աշխատին, և կեղծ՝ դրամ ալ չեն շիներ: Նրբ կը մտածեմ որ ձեռքերնիդ միլիոն մը ստակունեցերէք ու ինքզինքնիդ այսպէս ձգեր էք. . . հա՛ հա՛. արի, շատ չխօսինք, ըսաւ բանտապանն ինքնիրեն՝ չկրնալով զանի իր լուռ ընկերին դրուցել: Ինչ արհեստ պիտի գործէք:

— Ինչ արհեստ որ կ'ուզէք. դարբին, ատաղձագործ:

— Ատաղձագործ. շատ աղէկ. գործարանին մէջ պարասպ տեղ մը կայ. ամիս մը կայ՝ մէկը մեռաւ, անոր տեղը պիտի անցնիք խեղճ մարդը մեռնելիքը զիտէր, և իր ճաղն ինքը պատրաստեց:

— Ես ալ նոյնը պիտի ընեմ:

— Բայց դուք երիտասարդ և յաղթանդամ էք. նայեցէք որ վեց տարինիդ ըննցունէք. անկէ ետքը բաւական ժամանակ պիտի ունենար ձեր կամքին ասրելու:

Այս խօսակցութեան մնացորդը կամ անհաշտ բանտապանին ինքն իրեն խօսածներն այս տեղ յիշելով ընթերցողը ձանձրացունել չենք ուզեր: Այս դարձելի կատակերգութեանն անմիջապէս վերջ տալով, կ'ուզեմք մեր բանտարկեալին սրտին խորը թափանցել ու անոր ծածուկ և դառն տանջանքները նկարագրել:



ՍՆՄԵՂ ԴՍՏԱԳԱՐՏԵԱԼԸ

Յլլոյի ամենադառն տանջանքն այն ատեն կ'ըսկսէր, երբ ձեռաց աշխատութիւնը խորհրդածութեանց անդի կու տար. իր պահպանն՝ իր դահիճը մտատանջութիւնն էր: Երբ դիշեր կ'ըլլար ու աղտեղի խորշը կ'երթար, ուր ութն տասն ընկերներով մինչև առաւօտ պառկելու ստիպուած էր. երբ քունն ուրիշներուն աշխատութիւնը հանդէպնելու կու դար, այն ատեն իր յոգնութիւնը կ'ըսկսէր:

Հին առասպելները մտատանջութեան պատկեր ըրած էին անդղ մի, որ իր կտուցովը շղթայակապ Պրոմէթէոսի՝ աճուն լեռը կը կրճէր շարունակ. ասի շատ խորհրդաւոր էր, վասն զի մտատանջութիւնը՝ երբէք միտքը հանդիստ չթողլով մարդուս հոգւոյն կենսական մասը կը մաշեցընէ:

Ոմանց մտատանջութիւնը կրնայ խղճի խայթէ յառաջ դալ. յիբարի խղճի խայթը մեծ բարոյական տանջանք մ'է այն մարդուն,

Քստ առասպելաց Արամազդ շղթայակապ բանտարկեց զՊրոմէթէոս, որուն շերդը մէկ կողմէն անգղէ մը կը կրճուէր, եւ միւս կողմէն կ'անէր:

որ ինքզինքը յանցաւոր կը դտնէ, և դործած յանցանքին համար ինքզինքը կը դատապարտէ. բայց ասոր մէջ արդարութեան դաղափար մը կայ, որն որ իւր միութարութիւնն ունի: Իսկ այն դատապարտեալին մտատանջութիւնն որ զինքն անմեղ կը դտնէ և չլինար զինքն արդարացունել աշխարհի առջև, այն մտատանջութիւնը կ'ըսեմ, ամեն խղճի խայթէ աւելի դառն է, և տխուր ու անողոք ճակատագրի մը նման մարդոյս հոգւոյն վրայ կը ծանրանայ: Պարտից Արհմը՝ ու Հնդկաց ճաղգարնագան՝ որք չարեաց սիկըր կը նշանակեն, կ'երևայ թէ իրենց ծաղու մն սուած են այն ժառանգական և անհրաժեշտ թշուառութիւններէն, որոնց՝ մարդկային սեռին մէկ մասը թէպէտ անմեղ, այլ սակայն նախապատրաստ զոհ մ'եղած էր:

Արդարութեան այն զգացումն որ բոլոր բարոյականութեան հիմնէ, այս մահացու ապաշխարանաց և այս անհրաժեշտ թշուառութեանց դէմ ապստամբելով, առիթ տուած ըլլալու է ուշիմ միտքերուն՝ մտածելու թէ երկրորդ կեանք մը պէտք է ըլլայ, յորում՝ յանիրաւի չարչարող անմեղները պէտք է հաւատար վարձք ընդունին, և աշխարհիս մէջ անպատիմ մնացող յանցաւորներն իրենց արժանաւոր պատիժը կրեն: Ուստի կրօնքներն ալ պարտաւորած են վճռելու թէ մարդկային գաղափարները սխալական են, կամ թէ աշխարհիս վերայ անիրաւութիւնն անխուսափելի է, բայց թէ՛ դերադոյն և անսխալ Աստուած մը կայ, որ մարդոց գաղափարները սխալ ուղիք և իւրաքանչիւրին արժանաւորը պիտի հատուցանէ ասպոզայ կենաց մէջ:

Բոլոր մարդկային սեռի քահանաներն այս ճանրան բունելով միշտ աշխատեցան տառապեալները համոզելու, թէ կենաց չարչարանքները յանիրաւի չեն, այլ մանաւանդ սկզբնական և ժառանգական յանցանքի մը արդար և արժանաւոր քառութիւնն են:

Քստ գրադաշտի, սկիզբն չարեաց:

Ճագրնադ կամ Վիշնու, Հնդկաց Աստուածային երրորդութեանն միւս, որ իրաց ներկայ վիճակին պահողն կը համարուի:

Քրիստոս ինքն դռնէն լերան վերայ, երանի՛ անոնց որ աշխարհիս վերայ հալածանք կը կրեն, քանզի երկնից մէջ պիտի մխիթարուին: Այս քարոզութիւնը մխիթարական էր այն անցաւոր միջոցին համար, որ կը դատէր առանձնաշնորհութեան թաղաւորութիւնը՝ հաւասարութեանէն, բռնութեան թաղաւորութիւնը՝ արդարութեանէն, մարդոց թաղաւորութիւնը՝ Աստուծոյէն, զոր Մեծիայն խոստացաւ աշխարհի, երբ իւր վարդապետութեանց բովանդակութիւնն եղող աղօթից մէջ մեզ սորվեցուց իրմէ ինդրել. «Բու թաղաւորութիւնդ թող դայ, քու կամքդ թող ըլլայ երկրիս վերայ ալ՝ ինչպէս երկնից մէջ»: Այս անդին մխիթարանքը կրօնական հաւատալեաց կարգն անցունել պէտք չէր, ինչպէս ըրին սխալ մեկնիչները. պէտք չէր օրհնել չարը՝ ժողովրդեան մէջ կրօնորական թոյլատրութիւն մը մտցունելով, և այն անիրաւ հայհոյութիւնը քարոզելով թէ Աստուած իր սիրածը կը պատժէ: Քրիստոսի քարոզութիւնը սոսկ է թէ չարին թաղաւորութիւնը պէտք է վերջանայ, թէ արդարութիւնը պէտք է թաղաւորէ աշխարհիս վերայ, ինչպէս երկնից մէջ: Այս վարդապետութիւնը կը սովորեցնէ որ ըլլալէք յեղափոխութեան դորձակիցիլ պէտք է. իսկ ասոր հակառակ սկզբունքը՝ թշուառութիւններն իբրև երկնից պարզ և իբրև Աստուածային շնորհաց նշանակ կ'ընդունի, որով բռնութեան լուծը մարդկային հոգւոյն վերայ կ'ամբացունէ յանուն Աստուծոյ:

Այսպէս՝ Աւետարանի ախուր մեկնաբաններն աղաւաղեցին Քրիստոսի վարդապետութիւնը, և արդարութեան վեհ բնադրումը՝ ինպաստ քահանայութեան և այլ առանձնաշնորհալ և հեշտակեաց խումբերու սեպհականելով, մարդկային միտքը թիւրեղու կ'աշխատին տակաւին:

Երբ մեր բանտարկեալը գիշերները խաւարի և լուութեան մէջ կը մնար, այս մտածութիւններն անոր երեակայութեանը մէջ կը յուզուէին. հազար անգամ ջանաց իր հոգւոյն մէջ արթնցունել այն հաւատքը, զոր ինքն ուրիշներուն սիրտը տպաւորած էր, այսինքն թէ՛ չարիք և անիրաւութիւն անհրաժեշտ են, և թէ՛ լաւագոյն աշխարհի մը մէջ գերազոյն և անվրէպ փոխարկնութիւն կեանքալուսն պէտք է յոյս գնել:

Բայց այլ է առանդական վարդապետութիւն մ'ուրիշի քարոզել, այլ է զանի իւր իսկ անձին վերայ ՚ի դորձ ածել, երբ մարդուն սրտէն արին կը վազէ մարդկային անիրաւութեան բեռին տակ, և երբ տարակոյտը նոյն հաւատքին հիմունքը խախտել սկսած է: Աւելի խորին և ճշմարիտ մտածութիւն մը՝ այն մխիթարութեան անտեղութիւնն իրեն յայտնած էր, և իր իմացականութիւնը չէր խոնարհէր չարին թաղաւորութեանն առջև, որ Քրիստոսի խոստմանցն ու վշտաւերաց ճգանքը հակառակ կը յարատեւէր:

— Ար հասկընամ, կ'ըսէր, թէ ինչ է անձնուրացութիւնը, և ինչ արժէք ունի իւր վշտակիր ընկերացը համար կամաւորապէս զոհուիլը. կը հասկընամ Քրիստոսի մեծ քաւութիւնը և անոր մահուան գիւցազնականութիւնը: «Կա մարդկային սեռի փրկութեանը համար, լուսոյ, սիրոյ և աղատութեան վարդապետութիւնը հաստատելու համար մնաւ. բայց ես ինչո՞ւ այս տեղ կը չարչարուիմ. ինչո՞ւ մարդոց ձեռքն այսպէս իմ գլխուս վերայ ծանրացաւ. ինչո՞ւ չպիտի կրնամ անիրաւ դատաստանը հեղքել, և զիս ազատել այնպիտի պատիժէ մը՝ որուն չեմ արժանացած. իմ չարչարանքս ինչ բանի կը ծառայէ. իմ մահս որո՞ւ օգուտ մը պիտի ընէ: «Աստուած արդար է, Աստուած դատաստանները պիտի դատէ» կ'ըսեն ինձի. կ'ուզեմ ազոր հաւատալ և յուսալ. առանց այդպիսի յուսոյ մը՝ մարդս բարիի և չարի զղացումը պիտի կորնցունէր, և բոլոր բարոյականութեան հիմը պիտի կործանէր: Բայց մինչև երբ անիրաւութիւնն աշխարհիս վերայ պիտի տեսէ և յաղթանակէ: Եթէ Աստուած՝ բարւոյ սէր և չարի ատելութիւն զբաժ է մարդուս սրտին վերայ, ինչո՞ւ համար իմացականութեան անօթութիւնը յազեցունելու միջոցները չէ տուած, ինչպէս որ մարմնոյ անօթութիւնը յազեցունելու համար երկրիս պտուղները տուած է: Ա՛հ՝ իրաւ է թէ մարդս միայն հացով չսպրիւր, այլ արդարութեամբ. այո՛, արդարութիւնը մարդուս հոգւոյն կենդանութեանը համար պէտք է. ապո՛, հիմա արդարութեան քաղց և ծարաւ ունիմ, բայց զանոնք գոհ ընելու միջոցը՝ ո՛չ. ասի գառն վիճակ մ'է, մարդկային ոգւոյն աղնիւ բնազդմանցը հակառակ իրաց պայման մ'է. կամ այս պայմանը պէտք է փոխուի, կամ չէ նէ, արժանեաց գաղտիւրը ցնորք

մ'է, և արդարութեան զգացումը՝ կեանքերնիս նղովել տալու համար հնարուած շարժարանք մը :

Առաջին ամիսները ձմեռ ըլլալով և դիշերները երկայն, այս խոր մտածութիւնները՝ շարունակ վազող կաթիլի մը պէս բանտարկեալին սրտին վրայ կը թափէին. և ահա այս դառնեցողուն կանխահաս դարունը սկսաւ արթնցունել բնութիւնը : Ախճակական հին գղեկան սրուն մէջ փակուած էր, կը նայէր այն դաշտին վերայ, զոր ընդարձակ լիճն իր ծոցին մէջ առնելով գաղթականներուն թողած էր մշակելու : Աերբանոսի³⁶ սիւքը բալասանի անուշահոտութեամբ խառնեալ, մերթ ընդ մերթ՝ կարծես զանի հեղնելու համար ողջունելու կու գար . Տիգինոն օձապտոյտ կը սահէր աստ և անդ ուռեցած այն ձորերէն իջնող հեղեղակներով, որք երկու ջրերուն մէջ տեղը կը տարածուին . այս լեռները՝ մէկ կողմը մերկ և անբերրի, միւս կողմը դիշերահասարի արեղակով ոսկեզօծեալ և անտառներով ու այգիներով զարդարուած, այս կապոյտ գետը, սցս զուարթ և չքնաղ լիճը՝ երբեմն երբեմն կը սթափէին զանի իր գառն խորհուրդներէն, բայց չէին կրնար յոյս մը տալով զանի միջիթարել :

Իր արծուային տեսութիւնը կը նշմարէր աջ կողմը՝ այն դահաւէժը, ուսիկց Աէրցասքան կը թափէր և շատ մը ստոյաններէ յետոյ՝ Տիգինոյի մէջ կը խառնուէր . և այն ատեն ուրիշ յեշատակներ կու գային զանի վերադարձը, այսինքն՝ այն ժամանակի յեշատակներն, երբ ընկերութեան դէմ զայրացած և անոր խորամանկութիւններէն ազատելու փափարով այս բարձր և մինաւոր ձորին մէջ աղաստանած էր, իրեն ընկեր միայն գորշուկներ և աղուէսներ ունենալով, և ձայն՝ միայն Աէրցասքայի անդադար կարկաչունը, որ ուժղնութեամբ կը թափէր և իւր արաղընթաց հոսանացը հետ կը բերէր փոքրիկ կաղամախի տերեւաղուրդի ցօղուններ այն լեռնային անտառներէն, զորս անյազ շահախնդիրները չեն գաղութիւր կողոպտելէ : Այն ամայի անապատին մէջ անցուցած կեանքը յիշատի նախանձելի չէր, բայց գոնէ բնութեան հետ՝ Աստուծոյ

³⁶ Լիւ մի՛ ունեցից կողմերը :

հետ առանձինն էր, և ազատ՝ այն լեռներուն բաղին նման :

Ազատութիւն, ազատութիւն . սուրբ և անմեկնելի բան . ինչ իմաստով ալ հասկցուիս, քաղաքական ազատութիւն, անձնական ազատութիւն, դու՛ հոգւոյ համար այն ես, ինչ որ է շնչելի օգը՝ մարմնոյ համար :

Ալգոյ՝ այն անձուկ հիւզին մէջ կը բնակէր զոր յիշած եմք . սովորական ուսելիքի համար՝ դառն արմատներ ունէր միայն . բայց գոնէ ոչ ոք անոր քայլերը կը դիտէր, ոչ ոք անոր խորհուրդներուն հաշիւը կ'ուզէր, ոչ ոք աղօթից, քնոյ, աշխատութեան համար ժամանակ կ'որոշէր անոր . իր շարժումները շղթաներով արգելուած չէին . չկար այսպիսի անքուն պահապաններով պահուած երկաթապատ դուռ մը, որ շարունակ աչքին և մտքին առջև դնէր թէ ոչ ևս ազատ է, թէ՛ իր ապրելիք օրերը՝ (արդէն երկար ապրելու ալ յոյս չունէր) ամենքն ալ միօրինակ պիտի շարունակեն :

Ըսել չեմ ուզեր թէ այս գղեկին բանտերը վատառողջ՝ խոնար և սոսկալի են, ինչպէս են արդի բերդերուն նիւղները, ուր քաղաքական յանցաւորները կը փակուին . ինչպէս են նաև այն հասարակար ստորերկայ բանտերը, զորս Լարոսիոյ ժողովուրդները դեռ կը պահեն, չարերը վախցնելու և բռնաւորները սաշտպանելու համար . ոչ, Տիգինոյի փոքրիկ հասարակապետութեան բանտասեղին սյսպիսի խիստ գոյներով նկարուած չէ, և բանտարկեալն ալ վայրենի վարմունքէ և խիստ տանջանքէ զանգատելու պատճառ չունէր : Անոր տանջանքն էր կորուսած ազատութեանը վերայ մտածելն, իր անիրաւ գատապարտութիւնը, անպատիւ և միօրինակ կեանքի մը գատապարտութիւնը :

Յանցաւոր մ'որ ընդունած պատժոյն զինքն արժանի կը գտնէ, անշուշտ երբեմն զայն յօժարամիտ կրելու կը խոնարհի : Անձնական արժանեաց զգացումը կորսնցունող մէկը՝ կարելի է որ գործարանի մը ժիր աշխատութիւնն ու գատապարտեալի մ'անսոցատ ծառայութիւնը հաւատարապէս նմանօրինակ համարի : Պատերազմի գերի մը և քաղաքական յանցաւոր մը՝ անցնող բայց երեւելի ձեռնարկութեան մը վայելուչ վեհանձնութեամբ կրնան անշուշտ իրենց բանտարկելութիւնը կրել, և ճակատին բայց գոռողաբար դէմ գնել

բանտին, ինչպէս որ պատերազմի պատուարեր մահուան կամ վնասանական գաղափարի մը համար մարտիրոսանալու պատրաստուած էին: Մարդուս միտքը կրնայ իր տառապանքն իբրև մասն իր պաշտաման նկատել, և ինչպէս բեմին վրայէն, նոյնպէս բանտին մէջէն յուզման աղաղակ մը և վրէժինդրութեան կտակ մ'ուզարկել թմրած ժողովրդեան. և ասի քաղաքական արիութեան օրինակ մ'է: Բայց այս գաղափարներուն և ի՛նչ մէկը կրնար սակաւ ինչ մեղմացընել Ալլոյի վիճակը, որ ատելի և վատ ոճիրով մ'ամբաստանեալ կը հեծէր ընկերական նախապաշարմանց բեռին տակ, և չէր կրնար խոնարհիլ չարը սրբագործող կրօնքի մը սկզբանց առջև: Միայն մէկ յոյս մ'անոր կը ժայէր. այսինք թէ՛ չպիտի կրնար մինչև իր ազատութեան առուր հասնելու չափ երկար ապրիլ:

Բանտապանն անոր խորին և ամենօրեայ տրտմութեանը վերայ դժաւրով կը թողուր, որ աշխատութիւնը ըմբոսունէն յետոյ՝ Ալլոյ արտաքին հողաբլրին վերայ ժուռ գայ. այն տեղ քանի քանի անգամ փոսին խորութիւնն աչքով չափելով՝ կ'ուզէր ինքզինքը մէջը նետել և իր մահը փութացունել. բայց լծին տեսքը, լեբանց կանանչութիւնը, արեգական վերջին ճառագայթն որ հորիզոնէն վար չիջած կարծես զայն ողջունելու կու գար. այս ամենը՝ զանի կարգելուին գահալէժին յետին եզերաց վերայ դուրսիս աղբերով իմն թէ ապագայն իր անհասկանալի գաղտնեացը մէջ յոյսեր պահած էր անոր համար:

Այսպիսի վայրկեանի մը մէջ՝ ճիշդ էր սրտին խորէն կը հառաչէր, և ահա ոտքը սկոյի ծրարի մը զարկաւ. վրան՝ գրուած էր «Յոյս և սէր. Ահա ձեզ խարտոյ մը և սանդուխ մը. երկաթներն ի՞նչ կարեցէք, և հողաբլրէն վայր ի՞ջէք. կէս դիշերուն կամրջին մօտ կը դանաք առաջնորդ մը ապահով, որ ձեզի մինչև սահմանազրուխ կը տանի»:

— Տէր Աստուած, դուցեց Ալլոյ. ուրեմն դու զիս թշուառս երեսէ չես ձգած:

Առանց վայրկեան մը կորսնցունելու ծրարը պահեց, և այն տեղէն հեռանալով սկսաւ փախչելու միջոցին վերայ խորհիլ:

Բանտարկեալ մ'որ իր ազատութեանը համար ամեն զոհողութիւն կ'ընէ, դրեթէ կը յաջողի: Շատերը քարացեալ պատերը եղունդներով ճանկուած են, երկաթներնին ապակիի կտորով մը քերգած, կեանքերնուն կէսն աւելի յիմարական փորձերով անցուցած են. մտքերնին գրածնին 'ի դժուխ հասնելու համար այնպիսի անդրադարձեան և անխոնջութեան օրինակներ տուած են, որք աշխարհիս վերայ՝ եթէ աւելի մեծ և անխել նպատակներու համար դործածուէին, պատմութիւնը պիտի սքանչելագործէին:

Ալլոյ այնչափին կարօտութիւն չունէր. ընելիքն էր միայն ձեռք անցուցած սուր և անձայն խարտոմբ իր երկաթները կարել. և հասարակաց ննջարանէն դուրս ելլելու միջոցը գտնելով, հին բերդին զրսի պատէն վայր իջնել չուանէ տանդուխին օգնութեամբը: Քիչ մը ուշադրութիւն ընէր նէ, կրնար պահասպաններուն հսկողութեան սարդիլ և պատահութիւնը չկորսնցունելով յաջողիլ. ուստի հարկ չենք համարիր ինչպէս յաջողիլը մանրամասնաբար նկարագրելու խօսքերնիս երկարել:

Մութ և անձրևոտ դիշեր մ'էր: Հողաբլրին վրայ ելլելով, չուանը՝ որ խոտերուն մէջ ծածկած պահեր էր, հետը բերած ցիցին կայեց ամուր, և զանի հաստատապէս հողին մէջ վարսելով, սկսաւ վայր իջնել մինչև չուանին վերջին կայր. առանց դիմանալու թէ տակաւին մինչև դետինն որչափ միջոց կար, թողուց զինքը պատին շէպն 'ի վար. և սկսաւ բաղեղին, ցցուած քարերուն և ուրիշ ինչ որ կը հանդիպէր ճանրուն վերայ, անոր պլլուիլ. վերջապէս գետինը հասաւ և նստաւ որ շունչ առնէ, եղած տեղը նայի և հասկընայ թէ արդեօք փախչիլն իմացուեցաւ:

Ծանր պարագաներու մէջ զգայարանքնիս զարմանալի նրբութիւն մը կ'աւանտն: Մութին մէջ աչքերը նշմարեցին այն աստամաձև

Ճամբան, որ լերան վերայի դղեկին դարն 'ի վեր կ'երթայ. ակամօջը դէպ 'ի վեր ուղղեց, բնաւ ձայն չկար. վարը դետին ձայնը կար, որ թուրբերուն մէջ կը կոտրաէր և հրաշադեղ կամրջին կամարներէն դուրս կը թափէր:

Այս փորձին յաջողութեանը վերայ սպահով, սխաւ վայր իջնել բլուրին մնացած մասէն, որն որ հետզհետէ աւելի հարթ է. և դէպ 'ի կամուրջն ուղղեց ճամբան: Հազիւ թէ հոն հասած էր, և ահա յանկարծ դեմնէն անծանօթ մէկը ելաւ, և դիմացը կանգնեցաւ՝ մեծ կակ մոխրագոյն թիկնոյի մը մէջ պլլուած:

— «Աղոս», ըսաւ նա՝ ցած ձայնով մը:

— «Սէր», պատասխանեց Ալլոյ՝ խորհրդակիր ծրարին բառը յիշելով:

— Բարի եկաք, ըսաւ անծանօթը. յիրաւի բանտին ինչպէս անախորժ բան ըլլալը զգացեր էք:

— Կրնամ դիտնալ թէ ազատութիւնս որու կը սպարտիմ:

— Պարապ խօսքեր ընելու ժամանակ չկայ, ըսաւ անծանօթը՝ խիստ ձայնով մը. պէտք է ամեն յարձակման դէմ ապահովուիլ, և նահանգէս դուրս ելնել. ահա ձեզի ծպտելու համար ինչ որ պէտք է, հանեցէք այդ հաղուստներն ու Տիդինոյի մէջ նետեցէք: Ասի ըսելով առաւ անոր սե թաւիշէ ճապէտ մը՝ Տիդինոյի նահանգին մէջ գտնուող շատ մը Լումբորտացի զաղթականներուն գործածած ծին նման, Գալարբայուց փեղցր մը, տափատ, տնասպաններ և և զոյգ մը հաստատ կոշիկ որսորդի:

— Այս ալ որպէս զի մինչև սահմանադրուի զուարթ երթալու համար պէտք եղածին չափ ուժ և աշխոյժ առնուք, ըսաւ և ընտիր քերշով լեցուն՝ մտրթապատ սրուակ մը հանեց և ներկայացուց անոր: Ալլոյ խիղոյն սրուակն առաւ ու խմեց:

Անծանօթն՝ Ալլոյի ճարտիկութիւնը տեսնելով, երկիող հրացան մը, քսակ մը և մախաղէն ալ թուղթ մը հանելով առաւ անոր: — «Ահա ինքզինքնիդ պաշտպանելու համար զէնք մը, անցադիր մը և անուն մը զոր պիտի կրէք մինչև որ ձեր իօկ անունն առնելու կարենաք. և քիչ մը տեղ ալ ձեզ պիտի ուղեկցիմ, որպէս զի նախախնամութենէն սպասելիք սպրուսանուդ համար քիչ

՞ը նուազ նեղութիւն կրէք: Օն, ետևէս եկէք ու մի վախնաք. ես այս տեղերը գիտեմ:»

Այս խօսքն ըսելէն յետոյ՝ առանց պատասխանին սպասելու ճամբայ ելաւ դէպ 'ի լեռը: Ի սկզբան՝ ճանբան քայլելու նեղութիւն կը կրէին, վասն զի գետին հին յատակը հոն եղած ըլլալով անհասար քարերու վրայէն քայլել պէտք էր. բայց առաջնորդը շուտով ուրիշ շաղի մը տարաւ, որ այնչափ խորտարորտ չէր. և դէպ 'ի յաջ դառնալով սկսան շուտ քայլել:

Բէլինյօսնէն քանի մը մղոն քանի մը մղոն անդին ճամբան երկուքի կը բաժնուի, որոց մէկը Տիդինոյի ձորն է որ կ'առաջնորդէ 'ի Գոտարդոյ. միւսն աւելի կարճ բայց աւելի վայրի և դժուարին անցքով մը կը տանի 'ի Գրիգիովն:

— Մօտակայ նահանգին մէջ ձեզի կը ճանչնան:

— Ո՛չ երբէք:

— Աւելի աղէկ. այն տեղ երկուքնիս ալ՝ զբօսանքի համար այժմեամ որսալու ելած Լումբորտացի կը ձևանանք:

— Աստուած տայ որ խօսքիս հաւատան. չէ նէ՛ շիտակը ձեր գարապինան գործածելու անկարող եմ:

— Հոգ չէ, հոգ չէ: Թէ որ այս լեռներուս վերայ մախաղը լեցուն որսորդի մը պատահինք, ստակով ծախու կ'առնենք անկէ: Այս ձորերը յաճախող որսի սիրահարները՝ թէ որ հետերնին շատ ստակ ունենան, աղէկ որս կ'ընեն. ստակը՝ այնպիսի բեռ մը, իր մ'է որ պատերազմի մէջն անգամ շատ յաջողութիւն կը բերէ: Մեզօլկացիք քիթերնուն տակէն պիտի խնդան, բայց դժգոհ չեն ըլլար երբ իրենց որսը սուղ ծախեն:

Ալլոյ՝ իր ընկերը խօսելու տրամադիր տեսնելով, նորէն նոյն զիշերուան դէպքին վերայ անոր հարցում մ'ուղղելու համարձակեցաւ. բայց անծանօթը փեղցրն աչքին վերայ կոխեց, և առանց բառ մը պատասխանելու միայն իր քայլերուն ուշադրութիւն կ'ընէր: Փախստականը թէպէտ այս զաղտնեաց թափանցելու հետաքրքրութիւնն ունէր. սակայն հարկ համարեց սպասել որ անծանօթին կամքն ըլլայ ու բացատրէ. ուստի երկար ժամանակ ո՛չ մէկն և ո՛չ միւսը բառ մը չխօսեցան:

Ճամբան տեղ տեղ հարթ և զիւր էր, խի տեղ տեղ ժայռուտ և դժուար: Առաջնորդը թէպէտ միշտ առջևէն կ'երթար, բայց իր քայլերը՝ ընկերոջը տկար զօրութեանը համեմատ կ'առնէր: Երբեմն աստ կամ անդ առանձինն տուն մը կամ զիւր մը կը տեսնէին, որուն մէջ ոչ կրակի և ոչ կանդեղի լոյս կ'երևէր: Երկու ժամու կէսէն աւելի շարունակ քայլելէն յետոյ՝ — Ահա սահմանող լուխը, ըստ առաջնորդը. ալ կրնանք սուանց վտանգի՝ ծանր քայլել. քիչ մ'ալ ետքը հազուսանին ալ կը չորցունենք, ստամբոսնիս ալ կը լեցունենք:

Ալգոյ հազիւ թէ իմացած էր որ բարակ անձրև մը կամ լուեսո՞ խիտ թեթև ձիւն մը բոլոր ճամբան իրենց ընկերացած էր: Այս խօսքերէն սթափելով, մեքենարար ձեռքը ճաքեզին թևին վրայ տանելով տեսաւ որ բոլորովին թրչեր էր. երկինքը շարունակ խաւար էր, և թանձր ու սառնային մշուշին մէջ և ոչ աստղ մը կը փայլէր: Բայց դարադային տարօրինակութիւնը, իր յարատևութիւնը, ձեռք անցուցած ազատութեանն անսպասում՝ զջացումը անոր միտքին այնպէս տիրեր էին որ, եթէ առաջնորդը ձայն չհանէր, ճամբան սիտի շարունակէր՝ առանց անոր ուշադրութիւն ընելու:

Ամաց կամայ արփեսն լերանց ձիւնաարտ գաղաթները հորիզոնին զորշ յատակին վերայ ցցուիլ սկսան, և արշալուսոյ նուազ լայրը գլմացի կողմը Բէրնարդինոսի կատարին ետևէն կը ծաւալէր. այս լոյսը՝ որ տակաւ առ տակաւ անձերու վերայ էր, ծածուկ ազդեցութիւն մը կը գործէր անոր գաղափարներուն վերայ, որոնք մինչև հիմա թմրած և շփոթած, արեղական առաջին շառախիւններուն մէջ լերան մը գաղաթներուն երեցածին նման մէկզմէկէ կը բացուէին: Եւ թէպէտ ճամբան լեռնային և ճամբորդութիւնն երկար էր, սակայն անոր տկար ուժերը չէ թէ միայն չէին յողներ, նամանաւանդ հետցհետէ կը զօրանային. արդէն՝ ընկերներուն միանալու գացող զուարթ և ժիր որսորդի մը նման կը քայլէր:

Յորեկուան մտտեհալուն հետ մէկտեղ անձրևն ալ տեղի տալով, այս ձորին զանազան և սքանչելի տեսարանները չորս կողմէն երևիլ սկսան. խորդաշէն բնակարաններու գոճերը կը բացուէին, և երկաւ

տղևորներն ճամբանուն վրայ ելլող առաջին դինետունէն ներս մտան անկասկած: Առաջնորդն որ թէ տեղերուն և թէ անձերուն ծանօթ կ'երևէր, տեղին ու ժամանակին ներերուն համեմատ՝ աղէկ կրակ մ'ալ քիչ մը կերակուր ապսպրեց: Ընդարձակ կրակեղին վերայ շառաշող կարմիր և անհանդարտ բոցին ճաճանչներովն՝ Ալգոյ վերջապէս իր խորհրդաւոր ընկերոջ երեսը կըցաւ տեսնել, երեսուն տարեկանի մօտ մարդ մ'էր. մօրու քը խիտ և ձերմակի զարնող, դէմքին զիծերը՝ աղատ և խիտ. իրենին նման հրացան մը կը կրէր, ձախ ընդ աջմէ, միւս կողմը՝ եղջիւր և մախաղ կախուած, ըստ ամենայնի որսորդի կը նմանէր. սակայն անոր ծանր և ընտիր լեղուն, երբեմնակի հեղինական դիտողութիւնները, ցած և երբեմն ուժգին ձայնն՝ կը ցուցնէին թէ այն հին աստատմներէն բլլալու է, որոյ ցեղը սպակեղու վերայ է:

Պիտի ըսէիք թէ Աբբուցի կամ Ռոմանիացի ամխաղործ մ'էր, թերևս իրօք ալ էր. վասն զի արտասանութիւնը ոչ Լուրարտացոյ կը նմանէր, ոչ Ալենեսացոյ, այլ մանաւանդ Իտալացոյ, որոյ նման արտասանութիւն չգտնուիր Պօի անդիլի կողմը:

Ալգոյ կը յուսար որ ալ ընկերն՝ իր սրահած գաղտնիքը կայտի յայտնէ. բայց նա՞ կամ զանի գոհ ընել չէր ուզեր, և կամ արտօնութիւն չունէր անոր փրկութեանը համար կարևոր եղածէն աւելի խօսելու:

— Ալ հիմա ապահով էք, ըստ նա, և ինձի պէտք չունիք: Մանաւանդ որ այս ձորին մէջ զիս չճանչնալուն համար կրնայ բլլալ որ ձեր վրայ կասկածելու տեղի տամ, ուսկից զզուշանալ պէտք է: Շարունակեցէք ճանբանիդ, անցէք Բէրնարդինոսը, որն որ հինգ կամ վեց ժամէն աւելի հեռու չէ. մտէք սա լեռնային ձորերուն մէջ, կարելի եղածին չափ թղթատարութեան ճամբէն և մեծ ու բազմամարդ տեղերէն հեռու պտտելով: Ալ կողմերիդ է Ալալտելլինան. ձախ կողմերիդ է գաշնակցութեան երեք նահանգներ որոյ անունները թէպէտ շատ կը զրուցուին, սակայն հոն այնչափ շատ յաճախող չըլլար: Եթէ կ'ուզէք Տէլի մատուոն մէջ կամ Գրուալի գաշտակեանին վերայ ուխտի մը գացէք, այն յիշատակներուն համար զզայուն սիրտ մ'ունիք: Ձեր

վիճակն ու զդացումները կարելի եղածին չտի ծածկել սովորեցէք :
 ձեզ տուած անցազրիս մէջ գրուած է թէ անուննիդ Յովսէփ Գրոսի
 է, և արհեստնիդ՝ պարտիզպանութիւն . այս կեղծիքն հատապնե-
 լու համար քիչ շատ անկարանութիւն հարկաւ գիտէք . Ուղիոյ լեռ-
 ները լեցուն են հաղապիւտ բոյսերով, զորս շատ անգամ բնա-
 բանները փնտուելու կու գան . Աստուած և բազմն ձեզ ընկերա-
 նան, ուր որ վրաննիդ հաստատէք, հաւատացէք որ ժամանակը
 թէ պէտ ուշ՝ բայց անշուշտ երևան պիտի հանէ արդարութիւնը :

— Բայց ուրիշ մանաւոր զրուցելիք մը չունիք ինձի :

— Ո՛չ ինչ :

— Ուրեմն դո՞նէ իմ աղատիչիս անունը չե՞մ կրնար գիտնալ :

— Գիտնալնիդ կարեոր չէ . մարդ մ'է, և եթէ կ'ընդունիք՝ բա-
 րեկամ մ'է . ձեռքերնիդ տուէք ինձի, և իրարմէ զատուինք, քա-
 նի որ զմեզ մէկտեղ չեն տեսած :

— Բայց այս հագուստներն, այս ընտիր հրացանն, այս ստակը՝
 զորս հաճեցաք ինձ տալ, որո՞ւ վճարելու եմ . այս ամենը իբրև
 փոխատուութիւն նկատելուս կը ներէք . պէտք է գիտնամ, որ երբ
 միջոց մը գտնեմ, զանոնք որո՞ւ պիտի դարձունեմ :

— Ո՛չ պարզե մ'է և ո՛չ փոխատուութիւն . աղատութիւնը՝ ար-
 քարութիւն մ'է զոր պէտք էր հատուցանել ձեզի . իսկ այդ ստակն
 առ առաւելն՝ միջոցն մը դրամադրոյ մէկ օրուան բերելիք տոկո-
 սին չափ է :

Առաջնորդն այս խօսքերն անտարբերութեամբ մ'ըսաւ, առանց իր
 բնիկերով ուշադրութիւնն անոնց վերայ բերել ուղեւու : — Աւելե
 մի հարցունէք, ըսաւ մեկանց՝ պէտք եղածէն աւելի խօսած ըլլալուն
 վերայ զղջալով . ձեռքերնիդ տուէք՝ եղբայր :

Ալբոյ բանին նորութենէն շփոթած և ապշած՝ առանց խօսելու
 ձեռքն անոր երկնցոյց . և նա ազատ և ասպետական գորովով մ'
 անոր ձեռքը թոթովելով՝ զինեառնէն գուրս ելաւ աճապարանօք :

Ալբոյ շուարած մնալով առջի բերան կ'ուզէր անձանօթին ե-
 աւէն երթալ և հարցմունքը սնդել . բայց ազնիւ զգացմամբ մը հա-
 մառնեցաւ որ պէտք էր յարդել առաջնորդին զգուշաւորութիւնը .
 որն որ պարզապէս անհեղեղ վարմունքի մը չէր նմաներ :

Վերջին խօսքերը, նա մանաւանդ՝ իբրև եղբայր միմեանց ձեռք
 թոթուելն իր հաղարարու և թաղարութեանց բաղին մէջէն զինքն
 աղատեց : Միջոցն մը տոկոսը : Յայտնի էր թէ իր աղատութիւնը
 և զայն պահպանելու միջոցները կը պարտէր այն անձին, որ ա-
 ւանդն իրեն յանձնած էր . կամ այն գաղտնի մասնաժողովին, որ
 զիստուածական ժառանգ եղած էր աւանդին : Միայն մէկ բան մը
 զանի իր առաջին կասկածներուն մէջ կը ձգէր . այսինքն թէ՛ ար-
 դեօք մէկն այն զանձին պահուած տեղը գտած էր, արդեօք այն
 զանձն անհատաարիմ և վատ մարդոց ձեռքն ինկած էր . քան զի
 այն ատեն՝ հայրենեաց և աղատութեան շահուն համար իւր ըրած զհո-
 ղութիւնն անօգուտ եղած պիտի ըլլար : Այս ենթադրութիւնը զանք
 այնպէս կը արտաբերէր, որ այս անդամանելի կարուստէն լուա-
 զոյն կը համարէր իր բանտարդեալ մնալը : Բայց մտածելով թէ
 սրչափ դժուար էր աւանդին սրահուած տեղը գտնելը, սիրտը հանդ-
 չեցաւ . քանզի կը խորհէր որ եթէ մէկուն ձեռքն անցած ըլլար,
 անհնար էր որ իր առաջնորդը զայն իրմէ ծածկէր . ուստի ապա-
 հով եղած՝ միտքը դրաւ որ առանց վտանգի միջոց մը գտնելուն պէս
 անմիջապէս այն տեղն երթայ, և անդին աւանդին ապահովութիւնը
 հոգայ : Արդէն բանտէն ազատած էր, և ձեռք անցուցած էր այն
 բարեբը, զորս իր տխուր մտածութեանց ատենն անդին համարած
 էր . այն լեռները՝ կ'ըսեմ, զորս երազած էր, և բայց օղը, և ան-
 եզր հորիզոնը և ապազայն որ լի կ'երևէր բազրերով և հաղարա-
 ւար գէպքերով, որոց մէջ ինքն ալ հիմա իր մասը կրնար ունենալ :

Այս դաշտափորներու մէջ մտադիր թափառելէ յետոյ, իւր առաջնորդին խօսքերն ու խրատները յիշեց. պանդոկապահին ստակը վճարեց, և երկփող հրացանը ձախ ընդ աջմէ կախելով՝ ճամբայ ելաւ ձորն 'ի վեր. կարծես մեր ճամբորդին մտքին ու խորհուրդներուն նմանելու համար՝ օգն ալ բացուեր էր :

Թէպէտ և Ջուկոյէրիոյ մէջ ճամբորդներուն վերայ խիստ քննութիւն չեն ըներ և թէպէտ ինքն ալ պէտք եղած թուղթը ծոցն ունէր, սակայն և այնպէս իւր միտքն հանդիստ պահելու համար՝ կը ջանար որ անոր պէտք չունենայ, որչափ որ կարելի է. ուստի երբ կէսօր եղաւ, պողոտայն թողուց, և անոր մէկ քովն դարձող լեռնային շաւիղը բռնեց. ճամբորդութեանն համար որոշ նպատակ մը չունէր. բաւական էր իրեն Տիգրնայէն փախել, և կարելի եղածին չափ քիչ հեռանալ Վերցասթայէն :

Գէտ 'ի Բէրնարդինոյ յառաջ երթալով՝ իւրաքանչիւր քայլին կ'ըզգար, թէ արդէն գարնան առաջին քաղցր բուրմամբը խայտալուր Իտալական կլիման կը թողուր, և արփեան լեռներուն կը մօտենար, ուր ձմեռն իր ամենայն վեհութեամբը կը տիրէր տակաւին. կեռասնիին և շագանակնիին տեղ թխօղոյն եղևին և կաղամախի կը տեսնուէր. ընդարձակ և խիտ անտառներն՝ մերկ և յաւերժական ձիւնով պատած լեռներու հետ փոխն 'ի փոխ կու գային. ամեն կողմէ գետեր և հեղեղներ կը վաղէին՝ հասարակածին առաջին անձրևներէն յորդելով : Ամեն վայրկեան վաղուց ջրերու կարկաչուն մ'անոր ականջին կը հնչէր և քայլերը կ'արդելուր. արդէն գրեթէ Ջուկոյէրիոյ մէջ մտած էր, և կը տեսնէր անոր չքնաղ տեսարանները, անոր բազմաթիւ գետակները, անոր զիւղերը՝ մերթ կանանչազարդ ձորերու մէջ կորսուած և մերթ գահավէժներու ետեւը կեցած :

Բէրնարդինոսի բարձրութեանը վերայ հասնելով հարցուց թէ՛ արդեօք զիշեր չեղած կրնար պանդոկն հասնիլ, այն անձն որու խօսեցաւ, առաջնորդ եղաւ իրեն, և պարզ կերակուրէ մը յետոյ՝ երկուքը մէկ տեղ ճամբայ ելան : Քանի մը ժամ՝ յողնութեամբ գէտ 'ի վեր քայլելէ յետոյ հասան այն փոքրիկ լճին, որ իւր երկնագոյն ջրոյ ծովը կը տարածէ այս մենաօր բարձրութեանց վերայ :

Ալդոյ իջաւ այս տեղն երող պանդոկը, և խաղաղ ու խորին քուն մ'անոր ուժերը զօրացնելու եկաւ :

Արշալուսին արթննալով, տեսաւ իր առջին սառերու, ժայռերու, մանուածաւալ հեղեղօք ձեզքուած և հարիւրաօր զիւղերով լեցուած ձորերու բախլ մը : Հետեւեալ օրերուն մէջ մեր անցորդին բրած ճամբորդութիւնները զանց կ'ընեմք : 'Կա՛ շատ անգամ առանց տեղոյն սնունդ կամ ճամբուն ուղղութիւնը հարցունելու՝ ոտքն սուր որ կը տանէր, հոն կ'երթար. բաւական էր որ բազմամարդ տեղերէն և շատ յաճախեալ ճանրաներէ հեռու գտնուէր :

Երբ նահանգին մայրաքաղաքին մօտենալը հասկցաւ, ձախին դարձաւ, և 'ի հակառակն Ռէնոսի ընթացքը բռնեց : Այն ահագին գետին ակունքն այս ձորերուն մէջն են, զորս նա կը կենդանացընէ իր ջրերովն, որք տեղ մը՝ բարձրէն կը թափին և ընդարձակ կը սրսկին, տեղ մը՝ երկու կրաքարէ բրդերու մէջտեղի անցքէն դուրս կը հոսին, տեղ մը՝ ձորին հեղիկ զառիվայրերուն երկայնութեանը վերայ կը սփռին :

Ար զարմանար Ալդոյ թէ այսպիսի սիրուն և գեղազան և սքանչելի երկիր մը կ'նշուէս ճամբորդներ չեն յաճախեր : Այս տեսարանէն հրապուրեալ՝ միտքը դրաւ, որ առանց ծանր պարագայի մը ստիպման՝ չթողու այս ամայի և պուետական Ռէյիան :

Բաւական օրերէ 'ի վեր ինքզինքն այս ինքնահաճ պտոյտներուն տուած էր, և ձեռք անցուցած աղատութեան քաղցրութիւնը կը վայելէր, և ահա իրիկուն մը՝ արևուն մանեղուն մօտ, յանկարծ ինքզինքը ընդարձակ մենաստանի մ'առջև գտաւ : Այս հսկայ և հարուստ շէնքը՝ Բենեգիլիտանց միւս վանքերուն նման՝ ձորերուն ամենապեղեցիկ մէկ զիրքին վերայ շինուած էր. այս մենակեացներն իրենց ուխտին հաստատութիւնը չեն ուզեր այն ճղնաօրական իմաստով բմբռնել, զոր իրենք կը ջանան Աւետարանին բնծայել՝ աշխարհային վայելչութեանց կամաւոր զոհողութիւն և անձնուրացութիւն քարոզելով : Իրենց մենաստաններն ընդարձակ, հովասուն, հոյակապ են, և ասոր համար չէինք մեղադրեր զանոնք թէ որ իբրև խիստ կեանք վարող չպարծենային գեղջուկներուն, և մերձաօրին թշուառութիւնները չմանրացունէին՝ լուծ լուծի վերայ և շարժարանք շարժարանաց վերայ աւելցունելով :



Մինչդեռ երգէսնի ծանր և վսեմ եղանակը մանող արևուն օրհնութեան երգը կ'ըսէր, Ալլոյի միտքն յափշտակեալ մնաց երկար ժամանակ՝ այս վանքին ու եկեղեցիին վերայ, զոր երեկոյեան վերջալոյսը շրջապատած էր: Ուղեց մէկ մը տաճարէն ներս մտնել ու աղօթել, բայց ետ կեցաւ. քանզի չէր գիտեր թէ իր հրացանն ուրն հաւատայ, և չէր ուզեր հասարակութեան ուշադրութիւնն իր վերայ հրաւիրել: Ուստի մեկդի քաշուեցաւ, և ականջ դնելով երգիտնի ներգաշնակութեանց, որ մինչև իրեն կը հասնէր, դարձաւ դէպ 'ի արեգակն որ յստակօրէն լըրանց դապաթներուն ետևը կը մտնէր, և սառցոյնեբու կտորներն ագամանդի պէս կը փայլեցընէր:

Հոգևոր վսեմ բաղձանօք մը յափշտակուած, չորհակալ եղաւ Աստուծո՛վ՝ իւր շղթաները կտորել ազատելուն, և բնութեան կենսատու պարզէնները նորէն վայելելու զինքն արժանայնելուն համար:

Երբէք այսպիսի հաւատով և այսպիսի հոգևոր միտքով արժամք աղօթած չէր երբեմն արեղայն. երբէք զինքն այսպէս էութեան առաջին պատճառին առջև ներկայ, կամ ինչպէս որ կ'ըսեն, հաղորդակցութեան մէջ դտած չէր: Աստուծո՛ւ, ահա՛ Աստուած, դու չեց. որպէս թէ իր առջևն են այն խմաստակներն որ կ'աշխատին մարդկութիւնը մերկայնել այն բնադրումէն, որ զանի կը միաւորէ ու կ'աճեցունէ: — Այո՛, դու կաս, դու չեց. զիս կը լսես, իմ հոգևոյս կը խօսիս. ինչո՞ւ համար մարդիկ իմ եղբայրս պիտի ըլլան, թէ որ դու՛ մեր ամենուն հայրը չես. դու՛ տիեզերաց լոյսն ու սէրն ես:

Այս խօսքերն ըսելով յիշեց, թէ իր առաջնորդն իրեն մտնանալու համար այն բառերն ընտրած էր. և այս համընթացութիւնը՝ թերևս գիպուածական, ևս առաւել անոր յիշողութեանը մէջ դրոշմեց այն վսեմ յուզմունքը զոր սոյն վայրկինիս ունեցաւ:

Բայց սակայն օրն իրեն համար դեռ իրիկուն եղած չէր: Այս իրիկունն իրեն կենաց մէջ աւելի խորին հետք մը թողելու սահմանուած էր:

Հաւատացելոյ հօտն երեկոյեան ժամերգութենէն դուրս չելած, Ալլոյ սկսաւ հիւօրեայ եկեղեցիէն հեռանալ. դացած ճամբան զիւշին դուրսը առանձին բնակարանի մը կը տանէր: Այս ձորերուս մէջ՝ ուր պանդոկները հողուադիւտ են, ճամբորդի հիւրընկալութիւն չընող ընտանիք քիչ կայ:

Ճամբուն մէջ դէպ 'ի մէկ կողմ՝ դառնալու առեն՝ Ալլոյ կանգ առնելով տեսաւ որ ժողովուրդը բազմութեամբ տաճարէն դուրս ելլելով մէկ մէկ կողմ կը ցրուէին, զրեթէ ամենքն ալ կին էին՝ ամեն կարգէ և վիճակէ: Ալլոյ մաքին մէջ կ'ըսէր, ահա՛ այս տեղ ալ ժողովրդեան ընտիր մասը՝ փափուկ և գորովալիր հօգինները Հռոմայ լուծին տակ խոնարհած, աւելի քահանաները կը պաշտեն, քան թէ զԱստուծո՛ւ, այս բարեպաշտ կիներէն քանի՛ հասն արդեօք՝ հիմա որ տուն կը դառնան, իրենց որդւոյն աւելի սէր և իրենց ամուսիններուն ու հայրերուն աւելի ներողութիւն պիտի ցուցնեն: Ընտանեաց կրօնքը, խաղաղութիւնը չէ՛ որ զեկեղեցին կը պարարէ և մենաստաններն այսպէս կը շքեղացնէ:

Աօխ մտածելով Ալլոյի սրտին մէջ մարեցաւ այն զգացումը, որ պահ մ'առաջ տաճարէն ներս պիտի տանէր զանի: Յիրախ եկեղեցւոյ պաշտօնեաները Բրիտտոսի մեծ օրէնսգրութիւնը թիրաճ և նիւթական ու ձեռագործ տաճարը՝ հոգևոր սուրբ եկեղեցւոյ տեղ անցուցած են:

Այս գաղափարներով տխրացած, նեղ ձորի մը մէջ հետզհետէ յառաջ կ'երթար առանց միտ դնելու որ զիշեր կ'ըլլար. յանկարծ կնոջ մը հեծելու ձայնն առաւ. կանգ առնելով ականջ դրաւ, և ձայնին ո՛ր կողմէն գալլը հասկնալով ամենայն զօրութեամբ սկսաւ այն կողմը վազել. հազիւ թէ հարիւր քայլ առած էր, և ահա տեսաւ որ երկու մարդ կին մը քաշքրտելով կը տանէին հետքը:

նին . խեղճն ՚ի զուր կը ծեծկուէր անոնց բաղուկներուն մէջ : Ալ-
 գոյ սպառնալից աղաղակ մը հանեց , և հրայանը քաշելով օղին
 մէջ երկու հարուած նետեց , որոնք շրջակայ սպառաժներէ անդրա-
 դառնալով ընդհանուր հրարձակութեան մը պէս արձագանք տուին .
 և երկու չարաղործներն ահաբեկ՝ որսերնին թողուցին ու փախան :

Այս յաջողութեան վրայ՝ ուրախանալով՝ Ալգոյ զոհ եղող ան-
 ձին մօտեցաւ խեղճը չէր կրնար ոտքի վերայ ելլել , ոչ ալ կրնար
 շարժիլ , նոյն իսկ իր քողովը բերանը կաղուած կիսամեռ մնացեր
 էր . և մինչդեռ լաթը բերնէն հանելով խեղճը զլուսը բերելու
 կ'աշխատէր , մէկէն լոյս մը փայլեցաւ , և նոյն վայրկեանն միանդա-
 մայն հրայանի հարուածի ձայն մ'ելաւ : Ալգոյ ուսէն զարնուելով
 զլինվայը գետինն ինկաւ աղջկան քով , որն որ այս նոր դէպքիս
 վրայ սթափեցաւ : Աղջիկը կրկին սոսկումով սարսուփած , և զինքն
 աղատելու վաղող անձը գետին փուռած տեսնելով սկսաւ օղնու-
 թիւն բուալ . զրեթէ մի և նոյն վայրկեանն լապտեր մը իր ազօն
 լոյսն այս տեսարանին վրայ սփռեց , և գետնէն բուսնելու պէս մէկը
 ելաւ դիմացնին , որն որ սե վերարկուի մէջ սլլուած՝ իր տոգոյն
 դիմօքն ու բարձր հասական աւելի ողիկ կը նմանէր , քան թէ
 կենդանի էակի . ասի՝ մօտակայ մենաստանին հայրերէն մէկն էր :

Աղջիկը զանի ճանչնալով սկսաւ բուալ . և ուղեց անմիջապէս
 փախչիլ . բայց ուրիշ ներքին զգայմամբ մը հանդարտելով , — Հայր
 Իլարիոն , ըսաւ , տեսէք սա մարդը . քիչ մ'առաջ զիս երկու սրի-
 կայներու ձեռքէն աղատելուն համար զարնուեցաւ . օղնութիւնը
 նենք :

- Երկու սրիկաներ , ինչ կ'ըսէք աղջիկս , ըսաւ մենակեացն՝ ա-
 ոանց Ալգոն հօղալու :
- Երկու սրիկայներ , այո՛ , ըսաւ աղջիկը . երբ տաճարէն կը
 դառնայի , յանկարծակի զիս բռնեցին ու բռնութեամբ կը տա-
 նէին . . . բայց ասոր վրայօք ետքէն կը զրուցեմ ձեզ . . .
- Կը ճանչնաս անոնք :
- Ա՛չ , հայր . բայց շնորհ բրեք , հիմա թողէք անոնք , սա
 կտրիճը նայեցէք . կենդանութեան նշան չերեւիր վրան . . .
- Իսկոյն վանք փոխադրել կու տանք , և հոն վէրքը կը զար-
 զայն :

մանուի . . . բայց աղջիկս , դուք այս հրաշալի դէպքիս մէջ
 Աստուծոյ մատը գտնուելուն հաւատացէք , և անոր անքննելի նպա-
 տակները հասկնալու արժանի ցոյցէք ինքզինքնիդ :

— Այո՛ , հայր , բայց այս մարդը . . . ահա կը շարժի . կ'օղ-
 նէք ինձի որ մինչև տուն տանինք . . .

— Աւելի աղէկ կ'ըլլայ երեքնիս մկտեղ մենաստանն երթանք .
 դուք ալ միթիթարութեան կարօտ էք , և այն նուիրական տեղերուն
 հանդարտութիւնը լաւագոյն խրատներ կ'ազդէ ձեզ . . .

— Ա՛չ , հայր Իլարիոն , գոչեց աղջիկը՝ ներքին սոսկում մը զգա-
 ւով : Ա՛չ , չեմ կրնար , և պէտք չէ որ իմ հայրս թողում , անոր
 հրամաններէն դուրս ելլեմ . . . Եթէ Աստուած զիս մենաստանի
 սահմանած է , կրնայ միտքս լուսաւորել . . .

— Աստուած լոյսը , շնորհքը կը զրկէ . բայց վայ այն մարդուն ,
 որ աչքերը կը խփէ որ չտեսնէ , և սիրտը կը սնդի որ չըզայ . . .

— Բայց իմ՝ հօրս կամայը հակառակ . . .

— Աստուծոյ կամքը քեզի համար բան մը չէ՛ . ինչո՞ւ համար
 այս գիշեր քեզի վրկեց , եթէ ոչ՝ անոր համար որ սրտիդ ազդէ և
 կորստեան ճանքէն դքեզ աղատէ . հայրդ կոյր է , և կոյրերու ա-
 ուսջնորդ . . . կոյր կուրի առաջնորդէ . . . երկոքին անկանին ՚ի
 խորխորատ . . .

Ալգոյ՝ որ զթմարտ աղջկան խնամօքն յանկարծական թմրութե-
 նէն սթափեր էր սոյն միջոցիս , ականջ կը դնէր այս խօսքերուն ,
 զորս թէպէտ չէր կրնար կատարելապէս հասկնալ , այլ տակայն բա-
 ւական էր բանին եռութիւնը քիչ շատ գուշակելու : Աւզելով որ
 լաւ մը համոզուի ինքնիրեն , երեսը վանականին դարձունելով՝ ը-
 սաւ , — Տէր , լապտերնիդ մօտ կը բերէք . թեկտ զարնուեցայ ,
 այս տեղ՝ ուստ , չեմ կրնար կոր շարժել . օղնեցէք ինձի , լաւ մը
 կադիք որ կարող ըլլամ գոնէ քուրտաւելով մինչև մօտակայ առան
 երթալ :

— Ի՛մ տունս , ի՛մ տունս , գոչեց աղջիկը , բժիշկը հոն քովիկն
 է , և խնամով կը դարմանուիք . . .

— Հօրաքեռդ տունն այնչափ մօտ չէ , և վիրաւորեալի մը հա-
 մար ճանքան ալ գժուար է ասանկ ուշ ատեն , սակի աղէկ կ'ըլ-
 լայ վանքին հիւանդանոցն երթալ :

— Ո՛չ, ըստ Ալլոյ՝ յամառ ձայնով մը . վանք չեմ երթար . երթանք՝ բարի օրիորդ , ճանբան ինձի ցուցցէք . ինձի առաջարկած հիւրընկալութիւննիդ կ'ընդունիմ . և ձեզմէ ալ՝ հայր , այդ լուստեքը կ'ընդունիիք , եթէ չէք զլանար . . .

— Ամենայն յօժարութեամբ , ըստ Բենեդիկտեանը . ահաասիկ . եթէ առանձինն ըլլայիք , ես ալ հետերնիդ կու գայի . բայց միաբանութեան կանոնը շնորհէր կնոջ ընկերութեամբ . . .

- Կը հասկնամ , ըստ Ալլոյ :
- Բայց ետքը կը տեսնուինք , ըստ վանականը :
- Երբ միաբանութեան կանոնը ներէ՛ , Հայր սուրբ :

Ասի ըսելով Ալլոյ մենակեացին ձեռքէն լուստերն առաւ ու աղջկան առաւ . յետոյ աղջկան բերնէն հանած քողին երկու ծայրերը՝ ահաաներոմն ու առողջ ձեռքոմն իրարու բերելով վիզէն անցուց , և վիրաւորեալ թեւ կուրծքին առջև կախեց անով . ապա դժուարութեամբ դեմնէն ելլելով և իր մանկամարդ առաջնորդին վրայ յենելով ճամբայ ելաւ դէպ ՚ի անոր տունը :

Բենեդիկտեանն առանց քայլ մ'առնելու կամ բառ մը խօսելու թողուց որ երթան . և մինչդեռ անոնք այս տեղէն կը հեռանային . երկար ատեն կանգուն և անշարժ կեցած՝ աչքոմն ետեւուն կը նայէր . յետոյ Ալլոյի ձգած հրացանը գեանէն առնելով աճապարանօք դարձաւ ՚ի մենաստան :

ԺԳ

ԱՆՕԳՈՒՅ ՋԱՆՐ Ի ՀԱՆՍՏԱՍ ՈՐՄԱՂՈՒ

Մինչդեռ հայր Կարինն խայտառակուած վանք կը դառնար , Ալլոյ զիմացի կողմէն կառնաց կամաց կը ճանապարհորդէր օրիորդին հետ , զոր թերևս կրկին վտանդէ ազատած էր : Օրիորդը լուստեր ՚ի ձեռքն զիւրին ճամբաներն ընտրելով իր անձանօթ պաշտպանին առջևէն կ'երթար . Ալլոյ՝ թէպէտ անոր ստէպ հարցումներուն պա-

տասխանելով կ'ըսէր թէ վէրքը զինքը շատ չնեղէր , այլ սակայն իր բոլոր անդրդուելիութեամբն հազիւ կրնար ծածկել վէրքին ցաւերը , որ ամեն քայլափոխին ՚ի խոր կը խոցէին :

Օրիորդին վախ չտարու համար , Ալլոյ միշտ կը խօսէր և անոր ընտանեացը վրայ տեղեկութիւն կուղէր . և հասկցաւ որ աղջկան հայրը բողբական հովիւ մ'էր , և աթոռը յՆնդաղինա էր . և թէ՛ աղջիկն իր հօրաքեռը քոմն եկեր էր անոր փախաբանացը համաձայն . — Այն տեղ , ըստ աղջիկը , լաւ ընդունելութիւն պիտի գտնէք և դարմանուիք . անմիջապէս պիտի գրեմ հօրս ու իմացունեմ թէ սրչափ երախտապարտ ենք ձեզի :

— Օրիորդ , ձեզ ըրած ծառայութիւնս չափէն աւելի կը մեծցունէք . թերևս հայր Կարինն ալ նոյնը պիտի ընէր :

— Հայր Կարինն , պատասխանեց աղջիկը՝ ներքին սարսուռով մը . յիրարի . . . հողույս փրկութեան մասին շատ հողատար կ'երեւայ . իմ ձեր հօրաքեռս հոյեոր առաջնորդն է . և երկուքն ալ կը փափարկին որ հօրենական հաւատքս ուրանալով կաթողիկոսութիւնն ընդունիմ , և զիս վաճարի մէջ փակեն :

— Ազի նշմարեցի , երբ նա՛ ձեզի վտանդէ ազատ տեսնելով կը խօսէր հետերնիդ . բայց չէք դիտեր թէ ինչուն այն սրկիայնքն զձեզ քաշելով սանիլ կ'ուղէին :

— Չեմ դիտեր . առաջին անգամն էր որ զանոնք տեսայ այս գիշեր . հօրաքեռս ու անոր խոտաւանահօրը խրատներուն հետեւելով երբեմն եկեղեցի կ'երթամ . ահա այս գիշեր ալ եկեղեցիէն կը դառնայի , և կէս ճամբան յանկարծակի վրաս յարձակեցան , բերանս կապեցին և քաշքրտելով զիս տանիլ սկսան . մէկ բառ մը անցամ չխօսեցան , որ ինչպէս մարդ ըլլալինն ճանշնալ կարենայի . բարեբաղդարար ճիշդ ժամանակին հասար դուք , և հրացաննօք ձայնն առնելուն պէս զիս գետնը ձգելով փախան :

- Զինեալ էին :
- Չկրցայ տեսնալ , բայց հարկաւ զիճեալ էին , որովհետեւ ձեզ վիրաւորողը հարկաւ անոնց . . .

— Ազոր կը տարակոսիմ . հարուածը՝ զիմացի կողմէն մենաստանի դիէն եկաւ . եթէ հայր Կարինն երկու վայրկեան առաջ հասնէր իմ տեղս անի պիտի դարձաւէր . . .

— Հայր Իլարիոն, գոչեց աղջիկը՝ քսամեկով. անի . . . և հարձեա դատն կատկած մը սրտին մէջ ծածկելով՝ խօսքը կարեց խօսոյն :

Այն ատեն Ալոյ խօսակցութիւնը թողուց, կամ անոր համար որ վէրքին ցար խիստ սասակացած էր, և կամ անոր համար որ իւր խորհրդածութիւններն օրիորդին հաղորդել չուզեց :

Սոյն միջոցին դիւզն հասան՝ բարեբաղդաբար, վասն զի վիրաւորեալն ալ չէր կրնար ինքզինքը բռնել : Պառաւ հօրաբոյրը ասնք զուռը կեցած՝ աղջկան ուշանալուն վրայ անհանդիստ կը մամտար : Ի սկզբան զարմացաւ, երբ տեսաւ որ չճանչցած մէկուն հետ կու գար աղջիկը . բայց ասի կարճ խօսքով անոր հասկցուց իր անցուցած վասնզն ու անձանթիւն ըրած վեհանձնական օղնութիւնը :

Անմիջապէս բազմոցի մը վրայ հանդէսեցոյցին Ալոյ, որն որ քիչ մ'առան անշունչ մնաց . բժիշկին մտրդ զրկեցին, նա ալ շուտով մ'եկաւ ու նայելով տեսաւ, որ թէպէտ վէրքը ծանր և խոր էր, բայց ոսկրին դպած կամ կենսական մասին վնասած չէր : Ճարտարութեամբ մը միտն մէջէն պնդակն հանեց, ու պատուիրեց որ վէրքն ու դաղաթը պող ջրերով լուան, և հետեւեալ օրը նորէն դալ ու նայելու խոտամամբ դուրս ելաւ :

Հազիւ թէ նա հեռացեր էր, և ահա հայր Իլարիոն ներս մտաւ, հետն ալ աշխարհական մը, որ մենաստանին անուանի ատամնաբոյժն էր . տեսնելով որ երկու կիներն ալ վիրաւորեալին հետ դբաղեալ էին, ըսաւ որ ինքն ալ այդ նպատակաւ եկած էր՝ մտածելով որ թերեւս բժիշկը պտտրաստ չգտնուի, և թերեւս հիւանդը կրօնական միտմարութեանց կարօտի :

Ալոյ հեղնական և ծուռ գէմքով մը վանականին դարձաւ . այս ինքնահարաէր այցելութիւնը միտքը բերաւ այն առաջինը, որ այնչափ աղետաբեր եղաւ իրեն՝ Վէրցասբայի ձորին մէջ բնակած ատեն :

— Ինչպէս է այդ դիւցազն երիտասարդը, հարցուց վանականը :

— Գէշ չէ, գէշ չէ, Հայր սուրբ . յոյս ունիմք որ եթէ պէտք ըլլայ, աակաւին այս բաղուկը ծառայութիւն պիտի ընէ ինձի . . .

— Աւելի աղէկ, ըսաւ վանականը . Տէրն որ այս աղջիկը չաբազործներուն ձեռքը չթողուց, չէ ուզած խիստ ըլլալ այն անձին գէմ, որ պաշտպանեց այն խեղճը :

— Օրհնեալ եղիցի Տէր և ամենասուրբ կոյն Գիւղէնաիլի . դու չեց անկեղծ համակրութեամբ մը Գերարուգա . այս էր պառաւին անունը :

Իսկ օրիորդը բժիշկին պատուէրին համաձայն հիւանդին ջրերով լուացուելուն հօգ կը տանէր :

— Այո, կրնեց Հայր Իլարիոն . Աստուած զթած է, և չարէն բարի կը հանէ, միայն թէ մեր սիրտն անոր շնորհաց ներդրածութեանը չընդդիմանայ . սիրելի քոյրս, այս գէտքը՝ իրբև աղքարարութիւն մը շէրեիք ձեզ . դուք որ այս խեղճ մտրեալ աղջկան մարին աղկելու կարող էք, իր բարոյն՝ իր հօգուցն յախտեանական փրկութեանը համար խրատեցէք :

— Գլխուս վրայ, Հայր սուրբ . բայց ինչպէս որ դուք կ'ըսէք, մարմնոց գոռոզութիւնը հաւատոց խոնարհութեանը վրայ կը բռնանայ . եղբօրս հպարտ վարդապետութիւնները . . .

— Սիրելի հօրաբոյրս, ըսաւ աղջիկը . գոնէ այսօր հայրս՝ յարգեցէք . վաղը պիտի գրեմ իրեն որ դայ ու դիս առնէ ասնի . . .

— Աստուած չընէ որ հերձուածողի մ'անձը թշնամանեմ՝ ովք ըլլայ նէ ըլլայ, ըսաւ մենակեացը . բայց հաւատքը մէկ է, ինչպէս որ Աստուած ալ մէկ է, ինչպէս որ ամենքնիս ալ մէկ հողի մ'ունինք փրկելու, կը յարգեմ անոր անձը, կը ցախիմ մոլորութեանը վրայ . . .

— Խղճի դատաւորն Աստուած է միայն, պատասխանեց աղջիկը, ու վանականն ու իր հողեոր զուակը մէկդի թողլով սկսաւ հիւանդին նայիլ զթասիրա ինամօք . իսկ անոնք սենեակին մէկ անկիւնը քաշուելով, իրենց կրօնական խօսակցութիւնը կը շարունակէին :

Այս գէտքերէս ու խօսակցութիւններէս՝ տարակոյս չկայ որ ընթացողք պիտի հասկնան, որ Բենեդիկտեան Հայրն ու անոր հողեւոր զուակը շատոնց 'ի վեր բարի թակարդ մը կը լարէին Անդադինոյ գեղեցիկ օրիորդին համար . գործածելով ամեն միջոց «զորս նպատակն արդարացուցանէ», կ'ուզէին աղջիկն իրենց իշխանութեան

տակն առնուլ, որ և է պատրուակա մը աշխարհէ հեռացունել, և վանքին առանձնութեանը մէջ անոր երեակայութեանը տիրելով՝ հօրենական կրօնքէն դարձունել:

Մեր բարեպաշտահի պառաւը՝ միաբանութեան հլու մէկ դործիքն ըլլալով, յաջողեցաւ աղջիկն Ենդաղինայէն և հայրենի տունէն հեռացունել: Ծերունի հովիւը զաւկին վրայ չափազանց սէր սնենալով, իր քրոջ թախանձանայը դէմ կեցաւ քիչ մ'ատեն. բայց վերջապէս անոր աղաչանայը զիջանելով, թողուց որ աղջիկը քանի մը շաբաթ անոք քովը մնայ:

Բարի ծերունիին մտքէն չէր անցնէր որ Գերարուգայի այսպէս թախանձելուն ներքեւը գաղտնի նպատակներ կային. իր քրոջն հետ միշտ սիրով էր. և թէպէտ դաւանանքով ու կրօնական գաղափարներովն տարբեր էր, սակայն իր եղբայրական սէրն անփոփոխ էր միշտ. ազատամիտ և հեղաբարոյ մարդ մ'էր, և կը հաւատար որ ամեն կրօնքի մէջ ալ կարելի է բարիք դործել և յաւիտենականին կամքը կատարել:

Երիտասարդուհին Իմմա (այս էր աղջկան անունը) իր հօրաքրոջ քով ջերմ սիրոյ նշաններով ընդունուեցաւ. խեղճը շատ փոքր տարիքէն որը մնացած և մինչև այն ատեն հօրենական տանը մէջ առանձին ապրած ըլլալով, կը կարծէր թէ մայր մը գտաւ. ուստի ինքն ալ անոր փոխարէն՝ հօրաքրոջը կը պատասխանէր եռանդուն սրտով մը, որ դեռ կոյս էր ուրիշ ամեն սէրէ:

Իմմա՝ իր հօրը ներողամիտ գաղափարներուն համաձայն կրօնական կրթութիւն առած ըլլալով, յանցանք չէր համարէր հօրաքրոջն հետ կաթոլիկ եկեղեցւոյ ժամերգութեան ներկայ դանուիլն. հանդիսատար երգերը, երգիոնի վսեմ ձայնը, տաճարին շքեղութիւնը, եկեղեցական զգեստուց պերճութիւնը, արարողութեան փառաւորութիւնը՝ անոր զիրարդարձ և բանաստեղծական երեակայութիւնը զրաւեցին: Գերարուգա՝ ասի նշմարելով ալ աւելի յաճախ եկեղեցի կը տանէր զանի, որպէս զի լաւ ևս հրապուրուի. ծանօթացուց Հայր Իլարիոնի, որն որ ինչպէս ըսած եմք, իր հոգևոր առաջնորդն էր, և այս կաթոլիկական նենդութեանց առաջին ձեռնարկով:

Հայր Իլարիոն՝ նախնի հաւատարմիչներուն խմբէն էր, և կրօնական մասին այնչափ աններող, որչափ որ Իմմայի հայրն ըզուշաւոր և Աստուածաբանական հակաճառութեանց ընչամի էր:

Օրիորդն աղատ վիճաբանութեան սովորած ըլլալով, Բենեդիկտեան հօր ծանր և մեղրածորան քարոզներն առանց դժկամակելու մտիկ կ'ընէր, և ինչպէս որ տղու մը բնական է, կաթոլիկ ժամերգութեան շքեղութիւնն ու բանաստեղծութիւնը կը սիրէր. բայց անոր երեակայութեան յափշտակութիւնը՝ տակաւին մտքին տիրելու չափ յառաջացած չէր:

Երբ վանականը ճարտար ու ազդող և խորամանկ ճամբաներով զանի համոզել կը ջանար, Իմմա՝ իր բնական ուղղամտութեամբն այնպիսի անակնկալ (և յողթող լաւադէպ զրոյց մը կ'ընէր, որ մեր աստուածաբանը չկրնալով պատասխանել, կը սկսէր լատիներէն տող մը բան զրուցել, և իր բերնին ամենօրեայ խօսքը կրկնել, այսինքն՝ մարդկային դատողութեան տխրութիւն և մարմնոյ գոռուութիւն բռտերը. ուստի և իրենց խօսակցութիւններն ըստ մեծի մասին այսպէս կը վերջանային. վասն զի աղջիկը վիճաբանել չէր սիրեր, և բաւական կը համարէր կրցածին չափ իր մտածութեան անկասութիւնը պաշտպանել:

Ասոր վրայ՝ Հայր Իլարիոն սովորական միջոցներով յաղթելէ յոյսը կտրելով, զանի առեանդելու վատ միջոցին դիմել որոշեր էր: Ալգոյի հրացանին ձայնէն փախչող երկու սրիկայները՝ մենաստանի մարդերէն էին, և անոնց յանձնուած էր աղջիկը մօտակայ վանքը փակցունել, ուր տեղ Հայր Իլարիոն զանի կատարելապէս զարձի պիտի բերէր:

Ալգոյ յանակնկալս այս սուրբ նպատակին յաջողութեանն արդեւք եղաւ, և մազ մնաց որ իր անհաճոյ միջամտութիւնը շատ սուղի պիտի նստէր իրեն: Ալգոն վիրաւորող հարուածը՝ որ կողմէն ալ եկած ըլլայ, նպատակն էր զանի պատժել, և այս դարանն 'ի թերև հանողին անձը մէջ տեղէն վերցնել:

Բայց այս վերջին ոճիրը՝ ոչ միայն չկրցաւ զԻմմա իր պաշտպանողէն զատել, այլ մեծաւանդ այնպիսի վիճակի մը մէջ զբաւղւլոյ, որ կրնար իր պաշտպանութիւնը շարունակել և ձեռնարկութիւնն իսպառ անյաջողութեան գատապարտել:

Ձեմբ դիտեր և հարկ ալ չկայ գիտնալու, թէ արդեօք Գերտորուգա այս բռնական միջոցին վրայ տեղեկութիւն ունէր. հաւանական է որ Բենեդիկտեանը միայն այնչափ խօսած էր Գերարուգայի, որչափ որ կարելի էր՝ անոր խղճին չզպչելու համար:

Հետեւեալ օրն Էմմա նամակ մը գրեց ու դադտուկ հօրը գրիկց, որուն մէջ՝ անցուցած վտանգը պատմելէ յետոյ կ'աղաչէր որ անմիջապէս զայ գինքն առնէ ու տանի: Այս ոճրին բուն հեղինակն ս'վ ըլլալը թէպէտ չէր գիտէր, սակայն սիրտը կը վկայէր որ այլ ևս չէր կրնար այս տեղ մնալ:

ԺԵ

ԱՆՈՒՆՈՎ ՀԱՅՐ ԵՒ ԻՐՕՐ ՀԱՅՐ

Գրիգորի ընդարձակ և բազմամարդ գաշտերը՝ անցեալ դարերէն մէջ այնպիսի արիւնդու իրիւնքութեամբ մ'եղած են, որոց նմանը քիչ կը տեսնուի պատմութեան մէջ: Կաթողիկէ և բողոքական՝ սոսկալի կատարութեամբ կ'աւերէին երկիրը. քանիցս անգամ հրոյ և սրոյ ճարակ տուին Վալդեիկներուն որ այն ատեն ազատ էր, Կնդարիան և Ռենուսի մօտակայ ձորերը: Ս. Կարոլոս Բորոմէոս՝ Լօկանայի Հեղեմնութեան ձեռք քաղաքացոյց հարուստ և արուեստապէտ մասը արտաքսելէ յետոյ՝ գաշնաորութիւն մը հաստատած էր հոչակաւոր, որ չէր դադրեր իր աններող ոգին գրեթէ բոլոր Զուիցերիոյ մէջ ծաւալելէ: Կրկու կուսակցութիւններ՝ յաղթող և յաղթեալ, օտար գաշնակցութեանց կը դիմէին. և Սպանիան՝ ու Գաղղիա որ դեռ Կալուինականաց արեամբ շղախեալ չէր, այս տեղի կռիւն կը մասնակցէին, և այն՝ միշտ 'ի ֆրաս անմիաբան ժողովրդեան: Կնդարիէրցի, Այնդիկէնի, Գիզէնտիկոյ միաստանները բոցի մէջ կը մտային: Բենեդիկտեանք՝ Յիսուսեանքն երէն յառաջ քաղաքական պատերազմ գրգռած էին. և երբ ա-

տոնք հալածուեցան, անոնք իրենց գարշելի ձեռնարկութիւննին յառաջ կը տանէին:

Այս արիւնդային կռիւններն երկու դարէ աւելի տեւեցին. յետ որոյ՝ երկու կողմն ալ հաւատարմապէս յողնած զէնքերնին վար գրին առանց վէճն որոշելու, կամ՝ անոր համար որ այսպիսի նահատակութեան մը գիտնալու մասին երկու կողմն ալ հաւատքը պակասած էր, և կամ՝ անոր համար որ քանի մ'առաջնորդաց ժառանգութիւնը պարարելու նպատակաւ քան սերունդի ծաղիկ հասակը զԵկեղիւնն ալ ուժեղնին հատեր էր:

Վալտէլլինան գոհ եղաւ իր կաթողիկէ և Աւստրիոյ դերի մնալուն վրայ. իսկ միւս ձորերն երկու կրօնքի ալ կը ծառայեն խաղաղութեամբ, և շատ անգամ՝ մի և նոյն տաճարը կը գործածեն առանց արիւն թափելու. բայց այսի՝ ոչ թէ Առաքայի եսիսկոպոսին և Գիզինտիկոյ արքային իրենց հին պահանջմունքը թողած ըլլալուն շնորհիւն է, այլ անոր համար, որ հասարակապետութեան կառավարութիւնն անոնց նախանձաբորութեանը սահման գրած է, և մարի աղատութիւնն իր երդուեալ թշնամիներուն դէմ կը պաշտպանէ:

Այլ սակայն խոստովանարանի ծածուկ ծաւալոյցը կը տեւէ տակաւին, և երբեմն երբեմն իր պտուղներն յառաջ կը բերէ. մեր պատմած իրողութիւնը ոչ եզակիան է և ոչ հազուադիւտ, փորձի համար բաւական է հարցաքննել այն խեղճ աղջիկներն, որք տակաւին կեցող վանքերուն մէջ կենդանոյն թաղուած են:

Էմմայի հայրը նամակն ընդունելուն պէս իսկոյն հասկցաւ թէ ինչ բանի վրայ էր խնդիրը: Իր միակ աղջկանը վրայ ունեցած դրովալի սերն ու իր հինաւուրց բողոքական ոգին՝ թուշտի թևեր տուին իրեն, և երկու օր չտեւց, քրոջը տունն հասաւ յանակակալս:

Քոյրը զարմացման աշղաղի մը փրցոյց. բայց ասի կարելի չէր միայն իր եղբայրը տեսնելու ու բախտ լինանը վերաբերել: Կսկ Էմմա՝ հօրը վիզը պլլուեցաւ այնպիսի վշտալի ցնծութեամբ մ'որ հարիւր նամակէ և հաղար խօսքէ աւելի բան կը հասկցունէր խելացի ձեռունին:

Պերունի հովիւն իր աղջիկը գրկէն թողլով՝ Գերարուգայի ըն-

դուները: Թեանցը սակաւ ինչ պաղտ թեամբ պատասխանելէ յետոյ, տեղեկութիւն ուղեց այն անձանօթին վրայօք, որ իւր խիկ կիանքը վտանգի դրած էր զԷմմա պաշտպանելու համար. Էմմա հօրը ձեռքէն բռնելով տարաւ այն սենեակն, ուր Ալլոյ՝ վերքին պառճառած ջերմովը կը տաղնապէր, և սակայն սպասելով էին թէ պիտի աղատէր անկէ և թե՛ն ալ անարատ պիտի առողջանար:

— Ներեցէք, ըսաւ հովիւն, ՚ի նշան երախտադիտութեան ձեր ձախ ձեռքը թօթվեմ. աջ ձեռքերնիդ՝ զոր իմ միակ զաւակս պաշտպանելու համար չվարանցաք վտանգի ենթարկել, աւելի փափուկ փոխարինութեան արժանի է:

— Ըստ բաւականին փոխարինութիւն դտած կը համարիմ, տեսնելով որ այսպիսի արժանեաց տէր անձի մը ծառայութիւն ըրած եմ: Եթէ մտնէի ալ, իմ կենացս մնացորդը իրիտ լաւ զոհած պիտի համարէի:

— Ազի մտքերնուդ մի անցունէք, զաւակս. թողէք որ ես ձերունիս մտածեմ վերջին հանգստեան վերայ, զոր փնտռելու իրաւունք ունիմ. գուք սակաւին ձեր ասպարէզը լրացուցած չէք. հանդարտեցէք, նայեցէք որ օր մ'առաջ աղէկնաք, և կարենաք առանց նորէն հիւընդնալու մեզի հետ մինչև յՆիդադինա դալ:

— Ինչ, ըսաւ Գերտրուդա. արդէն ճամբայ ելլել կը խորհէք:

— Եթէ հիւանդին առանց վտանգի փոխադրուիլը կարելի լինէր, այս իրիկընէ ճամբայ կ'ելլէի. այնպէս չէ, Էմմա:

— Այո, հայր իմ. ա՛լ բաւական է այսչափ ձեզմէ հեռու մնալ:

— Ինչ ըրած մեղադրանքնիդ՝ ըսաւ Գերտրուդա զպսակալ զեղջիով մը, առ Աստուած կը դարձունեմ. թէպէտ և իմ խնամոցս ներքև դտնուած աստիճանի վտանգ մ'անցուցիք, սակայն գոնէ հոգւոյ փրկութեան համար պէտք եղածն ալ կը հոգացուէր:

— Բայց պէտք էր որ քիչ մ'ալ ձեր խնամոցս յանձնուած աղջկանս նիւթական կենացը վրայ մտածէիք. խնայած իս նայելով՝ աւազակաց ձեռքն ինկած տունը հետը չէք եղեր:

— Առաջին անգամն էր որ Նախախնամութեան յանձնեցի զայն. . . միտքէս ասանկ բան մը չէր անցներ. . . Տէրը գիտէ ինչ որ կ'ընէ իր վեհ նպատակներուն համար:

— Այո, այո. շնորհակալ ըլլամք Աստուծմէ որ ձեր անհոգութիւնը դարմանելու համար՝ այս քաջ երիտասարդին աղէցեց. Գերտրուդա, գուք զաւկի աէր չէք:

— Չար ողին եղօր մը չվայլած խօսքերը զուրցել կուտայ ձեզ:

— Ար սխալիք, քոյր, չար ողին չէ. եթէ այս խօսքերս դառն կուղան ձեզի, ներեցէք, վասն զի հայր մ'է խօսողը: Ամեն կրօնքի մէջ ալ զթութիւն կայ, այնպէս չէ:

Գերտրուդա այս խօսքերուն քաղցր անկեղծականութեանը չլրնալով դիմանալ, կախուղցաւ. մանաւանդ որ դաղանի ձայն մը կ'իմացունէր իրեն, թէ այս յանդիմանութեան լաւ արժանի էր ինքը:

Իրիկունն երբ Բենեդիկտեան հայրն ըստ իւր սովորութեան վրայ հասաւ, այս կծու յանդիմանութիւններն նոր կերպով մը սկսան: Բենեդիկտեանին և ձերունի բողբոջական հովիւին յերար հանդիպուլը խիտ թատերական էր. քաղաքավարական արարողութիւններն իրարու ընելէ յետոյ՝ մէկզմէկ լաւ մը կը դիտէին իրբ և մենամարտութեան պատրաստուող երկու ախոյեան. և յերախ կարողութիւնս նին պիտի փորձէին մէկ կողմէն Հռոմայ եկեղեցին իր բոլոր ճարտարութիւններովն ու իրեն պարձանք համարած անսխալականութեանը յարակից սնափառութեամբ, և միւս կողմէն՝ ձերունի փորձառութիւնը, աւետարանական պաշտօնէին լուսաւորեալ դաստիարակութիւնը, որն որ իր հակառակորդին տկար և զօրաւոր կողմը լաւ գիտէր:

Բայց Էմմայի հայրը միւսին վրայ ուրիշ առաւելութիւն մ'ունէր, այն է հայրական բնազգուն, սիրոյ խնայութիւն, որով կարող կ'ըլլար մենտկեացին կեղծեալ ուղոյն խորը թափանցելու: Իր աղջկը վտանգէ ազատ տեսնելուն վրայ զոհ ըլլալով, չէր ուզէր իր քրոջ հոգեւոր առաջնորդին վե՛մ գայթակղեցուցել ընթացք մը բռնել:

Ուստի մէկզմէկ կը դիտէին, բայց և ո՛չ մէկը արամադիր կ'երբէր այնպիսի վիճաբանութեան մը մանել, որը ըստ մեծի մասին մի և նոյն դնացքն ու մի և նոյն ելլը կ'ունենան. վասն զի Գրէնդոյն՝

*Տիեզերական ժողով 1545ին, որ դասուպարտեց բարոյականները:

սուրբ ժողովոյն շնորհին՝ այսպիսի վիճարանութիւնները չէ թէ փաստաբանութեամբ և իրաւանց զօրութեամբ կ'որոշուին, այլ խարոյկին ու սուրին գիմելով կը վերջանան:

Շնորհակալ ըլլանք Աստուծոյ, որ այս սրբապիղծ միջոցներն անհետ եղած են հիմա. և թողունք որ միտքն աղատօրէն շրջի ուր որ կ'ուզէ. միթէ Աստուծոյ ձեռքը չէ՞ մարդուս միտքը:

Բենեդիկտեանը բոլոր գիշերը լուռ և ախոր մնաց. ոչ Ալբրոյի վէրքին վրայ տեղեկութիւն ուղեց, և ոչ ալ հարցոց թէ ծերունի հովիւն այսպէս յանակնկալս ելլել գալու ինչ շարժառիթներ ունեցած էր. միայն թէ մէկըմէկ հասկցածի պէս իրարու երես կը նայէին Բենեդիկտեանն ու Գերարուգա, որ նմանապէս ապշեր էր:

Իսկ Էմմա զուարթ գիմօք Ալբրոյի անկողնոյն քով նստած ամէն խնամք կը տանէր անոր՝ անկասկած ըլլալով որ հայրը գոհութեամբ կը դիտէր ասի:

Բժիշկին ըստ սովորութեան՝ հիւանդին այցելութեան գալով, տեսաւ որ ջերմը նուաղած և վէրքը լաւ վիճակի մէջ էր, ուստի երբ ծերունի հովիւն իրեն հարցոց, թէ երբ հիւանդը կարող պիտի ըլլայ բուական երկար ճամբորդութիւն մ'ընելու. պատասխանեց թէ կրնար երկու օրէն առանց վտանգի ճամբայ ելլել, միայն թէ ճամբան շարունակ քովը մէկը գանուի թեւէն բռնելու համար:

— Հետեւինս պիտի գայ, ըսին միաբերան՝ հայրն ու աղջիկը:

Բենեդիկտեանն ու Գերարուգա՝ ասոր վրայ դժգոհութեամբ մ'իրարու երես նայեցան, բայց բառ մ'անգամ չխօսեցան:

Ալբրոյ որ լուռ կենալու սախուռած էր, այս ամենը դիտելով, այն սուրբ սրտերուն մէջ ինչ չարադոյժ խորհուրդներ պահուած ըլլալը գուշակելու կարող կ'ըլլար. բայց այս չար նպատակները դորձադրելու համար ժամանակն անյաջող էր. մանաւանդ հօր մը և սիրահարի մը աչքերը խորատես ըլլալով՝ չեն կրնար խաբուիլ:

ՀԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Սիրահարի մը՝ բռնիք:

Ազնիւ ընթերցող, մինչև այս տեղ ինձ հետեւելով և խեղճ Ալբրոյի մասին համակրութեան կամ կարեկցութեան տեսարան մը գիտելովսիք՝ հարկաւ գուշակեցիք ինչ որ կ'ուզէի ըսել:

Ալբրոյ չէր կրնար առանց զմայելու իր աղատած աղջկան երեսը նայիլ. և անոր դորովալիբ խնամքն ընդունած ասան փափուկ երախտագիտութեան անդիմադրելի զգացում մը կ'իմանար, որն որ սիրոյ ճամբուն մէջ առաջին քայլն է. ուստի և նախաբոյս սիրոյ մը զսպեալ և անմասօթ եռանդով կը սիրէր զանի:

Էմմա այնպիսի պարզ և անարատ գեղեցիկութիւն մ'ունէր, որ կիրքերէ անփորձ կուտի մը յատուկ է. սպիտակ գէմքը՝ կարծես խարտեաշ ու երկայն մաղերուն ծանրութեանէն ճերմակ վարդի մը նման կը հակէր շնորհալի վզին վրայ. շատ անգամ վիրատորեալին վրայ ծռած ատենն՝ քունքերուն վրայ հաստատած պերճ մաղերուն մէկ կայրը գնդասեղէն արձակուելով, կուրծքին ու բոլոր անձին վրայ կը թափէր. խորայատակ ջրոյ մը նման յստակ ու կապոյտ բերերը վիրատորեալին վրայ անշարժ բռնելով՝ կարծես իր նայուածքին կախարդիչ մէկ զօրութեամբն անոր ցաւերն ամբրէլ կ'ուզէր: Ալբրոյի աչքերն ալ նմանապէս մաղնխտական աղբորութիւն մ'առած՝ իր շնորհալի հիւանդագոհին աչքերուն գէմ կուգային շատ անգամ ակամայ, և ասի էր որ առաջին անգամ աննշմարելի համակրութիւն մը ծնաւ, որն որ քիչ ատենէն այս երկու մարդր և սիրալիբ ողինները կատարեալ հաղորդակցութեան մէջ դրաւ, միմանց խօսելու հարկ չթողլով:

Երբ Էմմա իր թեթև ու սիրատար ձեռքով վէրքին կապերը կը շահէր կամ կը փոխէր, Ալբրոյի բոլոր անգամայր վրայ խորհրդա-

կիր սարսուռ մը կը տիրէր և բոլոր շիղերը կը ցնցէր . բայց ասի պարզապէս հեշտախոտութեան արդասիր չէր . քաղցրիկ դող մ'էր , որ արեան ջերմութիւնը չաստկացունէլէ զամ անոր եռանդը կը բարեխառնէր , և բոլոր մարմինը զովացունելով կը հանդէսցունէր :

Ալլոյի տարիքը երեսունէն քիչ մ'աւելի էր . և թէպէտ իրեն պէս բնութիւն ունեցող մը պէտք էր անպատճառ սէր զգալ և ազդել . սակայն նա տակաւին սիրոյ ինչ բան ըլլալը չէր գիտեր . չունէր այնպիսի այրական և հաստակազմ գեղեցիկութիւն որ էրիկ մարդոց վրայ կը փնտռուի . իր գեղեցիկութիւնը՝ խօսուածքին քաղցրութեանն ու ազդեցութեանը մէջն էր . գեղնադոյն և սուր դէմքը մօտ էր Քրիստոսի աւանդական պատկերին . ճակատը բարձր և պարզ , աչքերը խոր , բերանը հեղինկ՝ բայց շատ անգամ այնպիսի հեղնական զայրոյթով մը նկարուած , որ կրնար նմանիլ Քրիստոսի բերնին երբ Փարիսեցոց կը սլատասխանէր կամ տաճարը պղծողները ծեծելով կը հալածէր :

Թէ Ալլոյ և թէ Էմմա իրենց սրտին վիճակը յայտնելու համար ոչ բառ մ'արտասանած էին և ոչ հառաչանք մը հանած . բայց երկուքն ալ գիտէին որ մէկըմէկու սէրը վատակած էին . միայն թէ Էմմայի քաղցր յուզմունքը երբեմն կը նշմարուէր այտերուն վրայի վարդազոյն կարմրութենէն , որն որ Ռօզա լերան միայազաղ ձիւներուն վրայ ցոլացող վերջալոյսին կը նմանէր , այլ սակայն կայծակի մը պէս փայլին ու անհետ ըլլալը մէկ կ'ըլլար :

Գերբարուդա չէր կրնար նշմարել որ այս երկու հոգիներն առանց զգայարանաց միջնորդութեան մէկզմէկու կառուած՝ սրտէ 'ի սիրտ կը խօսէին : Իսկ Բենեդիկտեանն որ անոնց նայուածքը կը գիտէր և ամենափոքր շարժումներին կը զննէր , Ս . Թէրէզայի երազած սատանային պէս՝ ոչ ինքն ուրիշի վրայ ոչ ալ ուրիշն իր վրայ սէր ունեցած ըլլալով , նախանձութենէն և չարանալէն՝ կ'ուզէր ուրիշներուն երջանկութիւնն 'ի ծննդենէն թունաւորել . իր խիստ ու խոժուրդ գէմքը միշտ անկարեկիր կը մնար . իսկ աչքերը չարաշուք լուսոյ մը ներքև կը բոցափայլէին ճիշդ այն օձին նման , որ գրախափն մէջ մեր երջանիկ և սիրալիր նախածնողաց պատահեցաւ :

Չեմք գիտեր թէ արդեօք Բենեդիկտեանն Էմմայի վրայ խորին

և անյոյս սէր մը կ'ապաճ էր , թէ զանի վանքի մը մէջ առանձնացնելով՝ օր մ'իբրև գիտիլ անոր վրայ տիրել կը խորհէր . բայց իր դէմքին ու կերպարանացը վրայ ցանկութեան տաղնապի նշան չէր երևէր . նայուածքն ու վարքն աւելի ատելութիւն կը յայտնէին քան թէ սէր . թերևս այս սիրուն ազջիկն աշխարհէ և կենաց զուարճութիւններէն զատելով , կը կարծէր վրէժ առնուլ այն սննդական օրէնքէն , որ իրեն կ'արդիւէր փափուկ զգացումներ տուննալ , և կ'երևար որ վայրենի փափաք մ'ունէր զանի իրեն պէս թշուառ ընելու , և անոր մազերը արբային մկրատովը կտրուելով անբունարարելի վանդակապատրին մէջ փակուած ատեն՝ դառնալ ըսել անոր , «Գնա , թշուառ , ալ քու սէրդ ապարդիւն է» :

Հայր Իլարիոնի սրտին մէջ ինչ որ կը գառնար , միայն Ալլոյ կրցաւ ըստ մասին հասկնալ՝ Ենդագինոյ համար ճամբայ ելլելուն նախընթաց օրը : Արդէն ըսած թմբ որ Ալլոյ իր վիրաւորուած տեղը ձգեր էր երկփող հրայանը , և մենակեացը զանի աւեր էր . Ալլոյի մտքէն ելնը էր ասի , ուստի շատ զարմացաւ երբ տեսաւ որ Հայր Իլարիոն՝ բարի ճանապարհ մտղթելու եկած ատեն յիշեալ գլխին անկողնին քով դրաւ :

— Ճշմարիտ որսորդ չէք եղեր , ըսաւ Բենեդիկտեանը՝ թեթև ծոյրտով մը . քաջ որսորդն ու քաջ զինուորն այսպիսի երկփող հրացան մը շուտ չեն մոռնար :

— Իրատուք ունիք , ըսաւ Ալլոյ , այս զէնքը գործածելու շատ վարժուած չեմ , և ասի բարեբաղդութիւն մ'էր այն սրիկայներուն համար , որ իմ հարուածներուն վրայ խնդային , զիս վիրաւորողը յիրաւի վարպետ է եղեր :

— Հաւանական է , պատասխանեց մենակեացը . շնորհակալութիւն ընենք Աստուծոյ և այս աղջկան անխոնջ խնամոցը , որ վերքերնիդ ծանր հեռանք չունեցաւ . երկար պիտի կենաք յԵնդագինայի :

— Չեմ կարծեր :
 — Եթէ ըստ ձեր արհեստի իբրև պարտիզլան լաւ տեղ մը զբաղելու ըլլաք . . . զիս մի մոռնաք . . . :

Ալլոյ սպառնալով երեսը նայեցաւ , թէ ինչպէս մենակեացը կրնար

իր անցյալըին մէջ նշանակուած արհեստը զիանալ. չէր զիտեր որ վանականը՝ իր խոնարհ խոստովանորդւոյն միջոցաւ առաջին օրէն ձեռք անցուցեր էր այն թուղթը. այսպիսի սրբադայ մը Ալլոյի մտքէն անդամ չէր անցնէր. ուստի — Պարտիզպան՝ կ'ըսէք, ըսաւ :

— Պարտիզպան կամ ուրիշ արհեստ, ըսաւ շուտով մը՝ վանականը. յերաւի կը տեսնեմ որ ձեզի պէս խելացի մեկուն այդպիսի ստորին արհեստ մը չվայելեր :

Ալլոյ առանց այս խորամանկ խօսքին պատասխանելու, միայն շնորհակալութիւն մ'ըրաւ Բենեգիլիտեանին՝ հրացանը բերած ըլլալուն համար .

— Յիշատակի փոխարէն յիշատակ, աւելցոյց Ալլոյ. ահա՛ մէրքիս մէջէն բժշկին հանած զնտակը. հաճեցէք դայն ինձմէ ընդունելու :

Մենակեացին զեղնած դէմքը մոխիր դարձաւ, բայց չկրցաւ բան մ'ըսել. ուստի այս խօսքերուն միտքը չհասկնալ ձեռացուցնելով սեռեալէն դուրս ելաւ :

Ալլոյ՝ մտածելով որ թերևս յանիրաւի էր այսպիսի ծանր ամբաստանութիւն մ'ընելը, զվշաց. բայց ներքին մղում մ'էր այս խօսքերն իր շրթունքին վրայ դնողը, և որովհետև մենակեացն իր կեանքն ու վարքը մանրամասն քննել կ'ուզէր, չկրնալով համարել՝ անոր անհաճոյ խուզարկութեանը վախճան մը տուաւ՝ նետած քարն իր գլխուն իջեցնելով :

Հետեւեալ առտուն բժիշկը վէրքը քննելով լաւ վիճակի մէջ դատաւ. ուստի կատարեալ բժշկուելու համար ինչ որ հարկատր էր՝ պատուիրեց և հրաման տուաւ ճամբայ ելլելու :

Գերտուգա իր հոգևոր առաջնորդին այցելութեանը կը սպասէր, որ հարցունէ թէ այս իրողութեանս վրայ ուրախանա՞լ պէտք էր թէ տրտմիլ :

Ալլոյ՝ հովուին տուած թիկնոյին մէջ պլլուելով թէ և քիչ ներուժիւն կը կրէր, և թէպէտ ձիերն ալ ծանր կը քալէին լեռնային ճամբաներուն վրայ, սակայն այսպիսի խիտ կլիմայի մը տակ երկու օր շարունակ ճամբայ ընելն անտարակոյս Ալլոյի վէրքը զրգռեց, որ փոխանակ շուտ մը չորնալով՝ բժշկին յուսացածին հակառակ նորէն զայրացաւ : Ատոր վրայ Էմմայի հօր սիրտը կտրեցաւ, վասն զի ուղեորութիւննին փութացնելուն համար ինքզինքը յանցաւոր կը դանէր : Գալով Ալլոյի, իր նոր վիճակն այն աստիճան սրտին հաճելի կը դանէր, որ կրնամբ բսել թէ Ֆիզիզական ցաւ չէր զգար. և իր բաժնուելուն արդելք եղող սր և է սրբադայ՝ սրչափ և ցաւալի ըլլար, իրբև շնորհ մը պիտի ընդունէր : Իսկ գեղեցիկն Էմմա իր անխոնջ և գորովալի ինամքը կը շարունակէր. և երբ Ալլոյ ինքզինքը կը մեղադրէր ըսելով որ զանի այնպիսի նուստ ծառայութիւններու պարտաւորած էր, որոնցմէ ուրիշները կը խորշին, Էմմա անոր խօսքը կտրելով կը պատասխանէր, թէ իր փափքն էր միշտ պատահութիւն մը գտնել Գթութեան քոյրերուն պէս ծառայութիւն ընելու. — Աւետարանական հովուի մը աղջկան վաշտը սպառնոն այս չէ՞ կ'ըսէր :

Արիւ տեսակ հիւանդութիւն կայ, կ'ըսէր այս հրեշտակագէմ և հանձարեղ աղջիկը. մեկ տեսակը միտքը կը հիւանդացունէ և մարդկային դատողութիւնը կ'ապականէ, իսկ միւս տեսակը միայն նիւթականին կը դուչի. առաջին տեսակին ստոյգ դարմանը կրօնքն է, որուն մեկ պաշտօնեացն ալ հայրս է. իսկ երկրորդին համար՝ քիչ մը ջանք և քիչ մը փորձառութիւն բաւական է. բնութիւնը հիւանդութեանց մօտը դրած է դարմաններն ալ, միայն թէ զանոնք ճանչնալ և գործածելու եղանակը զիսնալ պէտք է. ո՞վ կրնայ ըսել թէ այս ձորերուն մէջ կամ այս լեռանց գագաթներուն վրայ

չբուսնիր այնպիսի խոտ մը, զոր Աստուած ձեր ցաւերն ամբքելու և բժշկութիւննիդ փութացունելու սահմանած ըլլայ: Աւանդութեամբ կ'ըսեն, թէ ժամանակաւ այս երկրիս մէջ այնպիսի կ'ընէր կան եղէր. որ վէրք բժշկելու համար անսխալ դեղեր ունին եղէր. կրօնական պատեճազմին ժամանակները . . . հարկաւ՝ զիտէք . . . բայց հիմա որ բարեբաղդաբար՝ վերաւորեալ քիչ կ'ունենանք, այն արհեստը կորստուած է:

— Աստեհոյ թիւնները չեն պակսիր, Իլմնա. այդպիսի աղնիւ պաշտօնի մը պատրաստուելնիդ շատ բարի է:

— Անանկ է նէ այն բժշկական խոտերն ինձ ճանչցուցէք. պարտիզպան չէք:

Ալգոյ աղջկան երեսը նայած մնաց զարմանալով, թէ ինչպէս ան ալ իր կեղծեալ արհեստը հասկցեր էր:

Իմնա անոր զարմացումը տեսնելով սիրուն վարդի մը պէս կարմրեցաւ:

— Արհեստս ուսկից իմացաք:

— Երբոր քնացած էիք, հօրաբոյրս ծոցիդ թղթերը աչքէ անցուց. ուղեցի որ չթողում այսպիսի անվայել գործ մ'ընելու. բայց՝ Հայր Ելարիոնի պատուէրին պէտք է հնազանդիմ ըսելով, ինքզինքն անմեղ հանեց. ըրածին ներեցէք:

— Հիմա ամէն բան հասկցայ, ըսաւ Ալգոյ. պէտք էր դուշակէի որ բանն այդ աղբիւրէն յառաջ եկած է. սակայն հոգ չէ, փրկելի Իմնա. գէշը սա է, որ ամենքնիդ ալ սուտ բանի մը հաւատացեր էք:

— Ինչպէս:

— Ձեզմէ բան չեմ կրնար պահել, անունս թղթին մէջ գրուածը չէ. և ո՛չ պարտիզպանութիւն զիտեմ, ո՛չ բուսաբանութիւն:

Ասոր վրայ Իմնա զարմանալով հարցոյց, — Արեմն ո՞վ էք դուք: Բայց զըջաց, խորհելով որ թերեւ անզոյշ և անվայել հարցում մ'էր ըրածը:

— Եթէ կ'ուզէք հասկնալ, չեմ քաշուիր ով ըլլալս ձեզ ճանչցունելու, մինչև անդամ եթէ զխնամ որ վտտահոթիւննիդ պիտի կորսնցունեմ:

— Բայց չէ, ընդմիջեց աղջիկը, ո՛չ երբէք. դադանկեմիդ պատ-

հեցէք. բաւական է որ զիտեմ թէ դուք իմ պաշտպանս, իմ պահապան հրեշտակս եղաք. ասիէ աւելին զխնալ ուղեւս ներեցէք:

— Իմնա, ամէն բան ասեմին պիտի հասկնաք. և կը շնորհակալեմ որ կը ներէք այս վայրկեանիս շխօսելու:

— Միթէ դուք զիս ազատելու վազած ատեննիդ անունս հարցուցիք:

— Ինչպէս որ դուք ալ վէրքս դարմանած ատեննիդ չհարցուցիք: Ինչ քաղցր բան է երբեմն միայն բնազդման հեռելին. առաջին անգամ իրարու պատահած ատեն՝ երկար ժամանակ զիրար ճանչցածի պէս՝ մարդիկ զիրար կը սիրեն. առանց հայրենեաց, կրօնքի, շրջաի խտրութեան մեկզմէկ իբրև եղբայր կ'ողջունեն յառատ օգուտներ կ'ընծայէ մեզ, զորս մեր կուտական և նախընծայ բնազդմանց մեծ մասը զոհելով զնամ եմք. ո՛հ, միթէ մարդուս նայուածքը, ձայնը, ժպիտը բաւական չէ՞ն՝ մեկզմէկ հասկնալու համար երկու սրտերու մէջ տեղ իբրև լեզու մը համարուելու:

— Այո, եղբայրս. արդէն իմ սիրտս լաւ հասկցած է ձերը:

— Այո, Իմնա, մենք զիրար հասկցած եմք, ուրեմն վաղեմի բարեկամներ չէ՞նք կրնար համարուիլ:

Այս վայրկեանի Իմնայի նայուածքին վրայ այնպիսի մտաւոր քաղցր յափշտակութիւն մը կը նշմարուէր, որ անկարելի է բանիւ բացատրել:

Առաջին անգամ ըլլալով երկուքը ձեռքերնին իրար վաթթեցին և երկու հոգիները զրկախառնութեամբ մը միացան:

Ալգոյ այս մէկ վայրկեանիս անպատմելի քաղցրութիւնը վայելէլէ յետոյ՝ ըսաւ վէ՛հ ձայնիւ մը. — Եւ արդ՝ շնորհակալ եմ քեզմէ ո՞վ Աստուածդ բնութեան, լոյս և սէրդ տիեզերաց, որ զիս պահեցիր իմ էօթիւնս ինձ այսպէս իմացունելու. երեսուն տարի պահեցիր իմ էօթիւնս ինձ այսպէս իմացունելու. երեսուն տարի կրած բոլոր վիշտերս՝ զրպարտութիւններս՝ նեղութիւններս վարձատրուեցան մէկ խօսքով մը, մէկ հոգեկան հառաչանքով մը, զոր այս սիրտը կ'արձակէ՝ քաղցր յուզմամբ լցեալ և զլալով որ ուրիշ մը չլինքը հասկցած է:

Էմմա՝ աչքերն արցունքով լցուած ծունկ չողելով երկրպագութիւն ըրաւ Աստուծոյ, որ այս սուրբ խօսքերը զուրյնէ կուտար:

Սոյն միջոցին հովիւը վրայ եկաւ. գէմքը այլայլած էր և ձեռքը բայ նամակ մը կար. — Ա՛րջափ աշխարհս վշտալից է, ըսաւ Ալբրտի դառնալով, անսէք՝ կեղծ նախանձաւորութեան զգացումը որչափ անհնարին չարութեան կը տանի մարդը:

— Ի՛նչ կայ, հայր իմ, հարցուց Էմմա, հօրը զայրացած ու խռժող գէմքէն սոսկալով:

— Ի՛նչ գրուած է այդ թղթին վրայ, հարցուց Ալբրտ, որ նմանապէս չարացոյժ նախազգացում մը կ'իմանար:

— Սաստիճիկն և զրպարտութիւն անտարակոյս, ըսաւ բարի ծերունին. և ահա այս պատճառաւ ուղեցի որ շուտով բանին էութիւնը հասկնամ. կարգացէք:

Թուժը Գերարուզայէն եկած նամակ մ'էր, այսպէս գրուած.

«Սիրելի եղբայր. Հաւատարիմ աղբիւրէ առնելով կ'իմացունեմ ձեզ, որ մեր հիւրընկալած անձը՝ գտած յարգանայն ու մեր վստահութեանն արժանի չէ. սուրբ կրօնքը ուրացող, յետին աստիճանի ռամկալարական, և նողկալի մոլութեանցը պատճառաւ կարգն առնուած արեղայ մ'է. վերջապէս դրամաննոց մ'է, որ ասկէ երեք ամիս առաջ դատապարտուած է. բայց ետքէն Բէլլինցօնայի բանտէն փոխած է. Հրեշտակաց վանքին մէջն եղած աստն անունը Բ. Ռօմուալդոյ էր. իսկ հիմա կեղծ անունով և կեղծ անցադրով կը պատի. ձեր աղջկան բրած ծառայութիւնը, որ թեբևս ակամայ էր և գաղտնի նպատակ մ'ունէր, չկրնար դանի օրինաց անաչառութենէն և իր չար գործոց պատիժէն ազատել: Ար յուսամ սիրելի եղբայր, որ զոնէ այս պարագայիս մէջ պիտի հետեւիք այն յարգոյսպատիւ անձանց դատողութեանը, որոնք այս տեղեկութիւնն ու խրատը ինձ հաղորդեցին:

Տէրը լուսաւորէ՛ ձեր միտքը:

Քոյրդ ԳԵՐՏՐՈՒԳԱ:»

Ալբրտ այս նամակը կարդացած ատեն կը ջանար անտարբեր կերպ

պարանք մը պահել իբրև ստոյիկեան մը, որուն զլիսուն վրայ թուր կը շողայ. և թէպէտ գէմքն արտաքուստ խողաղ տեսք մ'ունէր, սակայն ճակտին գեղնութենէն կը հասկցուէր որ յուսահատութեան զխմարեղութեամբ համար ներքին վրդովման մը մէջ էր:

- Ըսէ՛ նայինք, ըսաւ հովիւն անձկութեամբ մը:
- Այս նամակն ըստ մեծի մասին ճշմարիտ է:
- Ճշմարիտ, գոչեց բարի ծերունին. բայց դուք պարտիզուան չէք, և անունիդ Յովսէփ Գրոսի չէ:
- Այն անցադիրն իմն չէ:
- Գուք թիարանէն փախած, դատապարտեալ. . .
- Ճշմարիտ է:

Էմմա՝ որ գեղնած ու հեալով աչքն Ալբրտի շրթունքներուն տնկած մնացեր էր, երբ այս անհաւատալի ամբաստանութիւնները հաստատելը լսեց, աղաղակ մը փրցուց, և մեռելի մը պէս դեռ տինն ինկաւ փոռեցաւ:

— Աղջիկս, ըսաւ խեղճ հայրը՝ ձեռքը մազերուն տանելով. ի՛նչ եղար: Քոյրս իրաւունք ունի եղեր զիս ձեզմէ զզուշացունեղու, անմեղ աղջիկս մոլորեցուցեր էք:

Այս խօսքերուն վրայ Ալբրտի գէմքէն կրակ ցածիկէլ 'սկսաւ. բայց ինքզինքը զսկելով ըսաւ. — Մեղքը ցէք ու օգնութիւն մ'ըրէք, իմ ձեռքերս արժանի չեն այդ հրեշտակին դպչելու:

Խառովեալ ծերունին մարած աղջիկը գետնէն վերուց, և զժուարութեամբ սենեակէն գուրս հանեց բուռալով, — Տէր Աստուած, Տէր Աստուած, այս աշխարհիս վրայ որո՞ն վստահութիւն բնեւէ:

ՓԸ

ԳՍՐՈՒ ՀՈՎԻԻԸ



Ալբրտ առանձին մնալով և չարացոյժ նամակն ալ աչքին տուջին տեսնելով, սկսաւ զլուխը դառնալ և մէկէն 'ի մէկ կարծես

ինքզինքը կորսնցոյ . եթէ առջի վիճակին մէջն եղած ըլլար , ջերմային զառանցանք մը սիրտի ունենար , ինչպէս որ առաջին անգամուն տեսանք . բայց հիմա սիրտը փոփոխութիւն մը կրած էր , և որպէս թէ նոր հիւթ մը շրջան կ'ընէր երակացը մէջ , որով իր տաղնապն ուրիշ արդիւնք ունեցաւ : Թէպէտ կը ջանար սպառնալու թեամբ մը դէմ դնել այս նոր աղէտքին , տակաջն զոչայ որ չէր կրնար . և աչքերը՝ որ մինչև ցարդ լալ չէին դիտեր , շուտով մ'արցունքով լեցուեցան , բայց ոչ ցառոց այլ սրտմտութեան արցունքով , որոնք իրեն անսպառ աղբիւրէ մը հոսելով առանց Ալբրոյի գիտութեան՝ սկսան անոր դեղնած այտերը թրջել :

Աչքերը շարունակ այն չար թղթին վրայ մնացեր էին անշարժ , բայց բան մը չէին տեսներ . պահ մը կասկածելով որ կուրացած չըլլան , Ալբրոյ՝ որպէս թէ աչքերը ծածկող քողը ձեռքով մէկով ընել ուզեց , և այն ատեն հասկցաւ որ առատորէն վաղող արցունքներն էին որ աչքին լոյսը ծածկեր էին :

Այս մղձկման և զգայարանաց թմրութեան վիճակէն վերջապէս իբրև շարադոյժ քունէ մը սթափելով , տեսաւ որ Էմմայի հայրը իր գլխացը կեցեր էր :

Բարի ծերունին որ քիչ մ'առաջ ներս մտած էր , տխուր և խոժոռ կերպարանք մ'առեր էր . բայց նայուածքին մէջ երկնային գթութեան նշոյլ մը կը փայլէր , որով իր դէմքին խիտ տեսքը կը մեղմանար :

— Էմմա . . . զոչեց Ալբրոյ՝ հազիւ թէ ծերունին տեսնելով . ո՞ր է , ինչպէս է . . .

— Աղէկ է , աղէկ է , պատասխանեց խեղճ հայրը . անոր վրայ մի մտածէք , աւելի պէտք է որ ձեր վիճակին վրայ , ձեզ սպառնացող վտանգներուն վրայ մտածենք :

Ալբրոյ՝ այս բարի խօսքերէն սիրտը շարժելով , խորին երախտագիտութեամբ լցուած աչքերն անոր դարձուց ու պատասխանեց .

— Ալ և ոչ վտանգ մը կրնայ զիս վախցունել . պէտք է ճակատագիրս կատարուի . ո՛հ , երանի թէ վերջս զիս մեռուցած ըլլար . ապաշխարանք մը քաշած կ'ըլլայի . արդար ու քաջ մեռած կ'ըլլայի :

— Չեր վեհանձն գործը , աղջկանս և նոյն իսկ ինձ ըրած մեծ

Ճառայութիւննիդ չկրնար իր արժէքը կորսնցունել միս ըրածներուդ համար , որոնք ուրիշ տեսակ են . . . և կարելի է որ ձեր կեանքն արատաւորած են . անոնց համար արդէն մարդկային արդարութեան իշխանութիւն կայ . . . ես այս մասին՝ ձեր վրայ գթալէ և ինձ վերաբերեալ վերջին գործերնուդ համար երախտագիտութիւնս յայտնելէ ուրիշ բան չեմ կրնար ընել . ժամանակ չկայ կորսնցունելու . Տիգրնոյի նահանգին շատ մտ կենք , զիւրաւ կրնան ձեր հետքը գտնել և ձեռքախալութիւննիդ ինչորեք . ինչպէս որ գիտէք , մեր օրէնքը կարող չէ դձեղ ապահովելու . ուստի աղատելու համար պէտք է փախչիք , և ես ալ կենացս մէջ առաջին անգամն ըլլարով ձեզ սիրտի օղնեմ այսպիսի պարագայի մը մէջ . վերջապէս՝ ես դատաւոր չեմ , արդարութեան պաշտօնն է յանցաւորը պատժել . իսկ ինձի համար՝ յանցաւոր չկայ , որովհետեւ իմ պաշտօնս եղբայրութիւն է . եղբոր մը պէս ձեռքս ձեզ տուի , չեմ կրնար և չեմ ուզեր ետ քաշել :

— Շնորհակալ եմ , ո՛վ ճշմարիտ մեկնարանդ Աւետարանի . ձեր սիրտը ինձանքներն այնչափ առողջարար չեղան մարմնոյս , ո՞րչափ որ են խօսքերնիդ՝ հոգւոյս համար :

— Ձեզ ընելիք մէկ բարի գործս արժէքէն աւելի մի մեծցունէք . պէտք է ջանալ որ ուշ մնալով անողուտ չըլլայ ընելիքնիս . բանը կարողին դնելու է , քանի որ ձեզ փնտուելու ելած չեն . Աստուած տայ որ ձեզի տանս մէջ բռնելու չգան . վասնզի եթէ հարցունեն , ճշմարտութիւնը խօսելու եմ . երբէք սուտ խօսած չեմ :

— Ո՛չ , պէտք չէ որ սուտ խօսիք , պէտք չէ որ սուտ խօսինք . տեսէք՝ ես ալ ո՛վ ըլլալս ծածկել ուզեցի . այն կեղծ անցագիրն որ իմ անունս ու վիճակս սխալ ճանչցուց ձեզ , երբէք մէկու մը ցուցցած չեմ , և չպիտի գործածէի . ձեր քրոջ խոստովանահայրն էր որ զայն լաթերուս մէջէն փնտուելով հասնել տուաւ անոր :

— Ա՛հ , Գերարուգա . ա՛հ , քոյր . . .

— Ո՛չ , անոր յանցանք մի գտնէք . մի մեղագրէք զո՛հը , այլ դահիճը . գործիքը յանցաւոր չէ , այլ զայն յատուկ նպատակաւ գործածող ձեռքն է յանցաւոր :

— Ուրեմն այդ մարդը ձեր գաղտնիքը պիտէ :

— Այս նամակը գրել տուողն այն մարդն է . և այն մարդը պիտի մատնէ և մատնած ըլլալու է իմ բնակած տեղս : Այն մարդը . . . այն սատանայն որ թերևս ինքն էր ձեր Էմման առեանդել ուզողը և զիս վերաւորողը , եթէ պէտք ըլլայ՝ ինքը զիս փնտռելով գտնալու և թշնամեաց ձեռքն յանձնելու պիտի փութայ . որչափ ուրախ պիտի ըլլար զիս տանջանաց մատնելու և խարոյկին մէջ այրել տալու , եթէ Սուրբ Պաշտօնատունը ջնջուած չըլլար :

— Ըստճներդ զիս կը քսամնեցունէ . ինչ ըրած էք այդ մարդուն որ այսպէս ձեզի գէմ՝ գրգռուեր է :

— Իր մոլեւանդութեան և թերևս ցանկութեան դո՛՛հ ընելիք անձն ազատելու բաւական չէ :

— Ա՛օգտէ , կ՛օգտէ , այդպէս շուտով այսպիսի ծանր ամբաստանութիւն մը մի՛ ընէք :

— Արեւի էր որ սխալէի կամ այլ ընդ այլը նշմարէի . բայց այնպէս չէ . ես դանտը շատոնց կը ճանչնամ . մէջերնին ապրեր եմ և լաւ գիտեմ թէ ինչեր ընելու կարող են , հաւատաքնութիւնը ջնջուած է , բայց անոր ողին դեռ կ'ապրի , և պատեհ վայրկեանի մը կը սպասէ անցեալը վերականգնելու :

— Հանդարտեցէք , եղբայր , հանդարտեցէք . դարձ՝ ետ չդառնար . լուսաւորութիւնը տեղի չպիտի տայ խաւարին . բայց խօսածներդ՝ առաջարկելիք միջոցիս աւելի կարեւորութիւն , աւելի ստիպողականութիւն կուտան : Պէտք է որ նահանգէս՝ թերևս Ձուրիցերիպէն հեռանաք , եթէ չէք ուզեր ինքզինքնիդ կամաւոր բանտարկութեան ենթարկել , կամ վայրենիի մը պէս՝ արդեան լեռները ծածկող անմատչելի անտառաց մէջ թափառիլ :

— Ամէն բանի յանձնառու եմ , միայն թէ այն թիարան ըսուած դատապարտելոց դժոխքին մէջ չիյնամ , անտառաց առանձնութիւնն անաանելի չէ ինձի համար , արդէն զիտեմ , պիտի հեռանամ , և շատ պատճառներու համար պէտք է որ հեռանամ ձեր տունէն , որպէս զի ինձ չնորհած պատրաստանիդ այլ ևս չըրեաբարեմ : Ձեր աղջկը . . . խօսք մը . . . կասկածի խօսք մը ըրիք :

— Ներեցէք , ներեցէք խեղճ հօր մը : Իմ միակ զուկիս վրայ բռնեցած սէրս . . . անոր ամբժութիւնը . . .

— Հայր , թողէք որ այս անունը տամ ձեզի . եթէ Էմման եղբոր մը պէս ինձ նայեցաւ , և եթէ ես ալ իբրև քոյր դանի պատուեցի ու սիրեցի , մեզի ասոր համար յանցաւոր մի համարիք , և մի յանդիմանէք . թերևս դժած ու բարեբար Աստուծոյ կամքն այնպէս էր , որ անոր մաքուր նայուածքը սրտիս յոյս և հողոյս հաւատք պիտի վերածնէր . բայց լաւ գիտցիք՝ Հայր , որ այն հրեշտակին ամբժութիւնն աղարտել խորհելու համար՝ չէ թէ թիարանի դատապարտեալ , այլ սատանայ մը՝ Հայր Իլարիոն մը պէտք է ըլլայի . . .

— Այսպիսի անաեղի խօսք մը բերնէս փախցունելուս համար ձեզմէ ներում կը խնդրեմ : Էմմայի կեանքն աղատեցիք , քրօջ մը պէս սիրեցէք , նա ալ ձեզ կը սիրէ եղբոր պէս , և խիստ չպիտի ըլլայ ձեզի դէմ , ինչպէս որ ես ալ պէտք չէ որ ըլլամ՝ ձեր անցելոյն համար . . . դր չարագործութիւն չպիտի անուանեմ :

— Ա՛չ , Հայր . իմ անցեալս չարագործութիւն չէր . և որովհետև հօր մը պէս քաղցրութեամբ , և փիլիսոփայի մը պէս անաշառութեամբ դատելու յօժար կ'երևիք , ուստի ես ալ կ'ուզեմ որ իմ սիրտս միայն ձեզ բանամ , քանի որ չեմ հեռացած այս տունէս , ուր առաջին անգամ ըլլալով՝ Քրիստոսի Աւետարանին պաշտօնեայ եղողի մը վայլած խօսքերը լսեցի :

— Ես ալ իբրև հայր ձեզ մտիկ ընելով , մարդոց վրայ ունեցած երկար փորձառութեամբս որչափ կրնամ նէ՛ իմ խրատներս կուտամ ձեզի . բայց հիմա դուք հանդարտիլ նայեցէք . վասն զի վէրքերնիդ հանդ չելու է , որ կարենաք շուտով ճամբայ ելլել , և ձեր փախտական թափառականութեանը նեղութիւններուն դէմ դնել :

— Իսկոյն ճամբայ պիտի ելլեմ . . . այս գիշեր . . .

— Այդ ատիճան աճապարելու հարկ չկայ . թողէք որ մէկ քանի կարգադրութիւն ընեմ , որպէս զի հարկ եղած ատեն ուրիշ տեղ պատասխարան մ'ունենաք պատրաստուած . ես կանխաւ չիմացած՝ ձեզ բան մը չըրնար պատահիլ :

Այս խօսքերն ըսելէ յետոյ հովիւր դողալով Ալդոյի սենեակէն գլուրս ելաւ :

Քանի մը վայրկեան յետոյ սենեակին դուռը զարնուեցաւ, և Էմման գեղնամ գիմօք ու ծանրութեամբ մը ներս մտաւ :

ԺԹ

ԷՄՄԱ

Ալգոյ՝ աղջկիը տեսնելուն պէս սկսաւ գողալ սերերի մը պէս . քիչ մ'առաջ Էմմայի հօրն առջև ըրած խոստովանութիւնն աւելի մեծ պատասխանատուութիւն մը կը ծանրացունէր իր վրայ : Անոր հրաշափայլ գեղեցկութեանը վրայ զգացած սէրը զոր ինք չէր իմանար, իբրև հրեշտակային սէր՝ սուրբ և ամբիժ էր, այլ սակայն նորայրական գորով չէր՝ սիրահարէր էր Էմմայի, ինչպէս որ նա ալ Ալգոյի :

Երկուքն ալ ասոր վրայ խօսք ըրած չէին, և այս վայրկեանէս առաջ երկուքին ալ մտքէն անգամ անցած չէր՝ զարնան առաջին քաղցրաշունչ հողմի առջև բացող վարդի մը նման, գէպ'ի վեր ձկաող բոցի մը նման՝ ինքնաբոյս սէր մ'էր . յիրաւի ծաղիկը ժամանակին իր պատուը կը հասցունէ, և բոցը հովէն արծարծուելով՝ հրդեհի կը դառնայ, բայց ասոնց համար քիչ կամ շատ ժամանակի պէտք կայ . իսկ Ալգոյի և Էմմայի սիրոյն զալով, եկած շար նամակը, աղետադոյժ մասնութիւնը, Ալգոյի ատուր վեճակը, նոր վտանգները՝ որով նա վերստին անսպասական կեանք վարելու կը հարկադրէր, այս ամէնը մեկտեղ զալով՝ քանի մը ժամու մէջ հասուցին այն պատուը, հրդեհի փոխեցին այն բոցը :

Ալգոյ յանակնկալ Էմման տեսնելով, Ալգոն կ'ըսեմք, սկսաւ անհնարին տաղնապով մը գողալ յանցաւորի պէս . իսկոյն մտքովը չափեց թէ ինչ մեծ անյաղթելի վիճ մը կար իրենց մէջտեղ : Երբ կը կարծէր թէ խորհրդակիր զօրութիւն մը կուգար զինքն իր վտարած ցաւալի կեանքէն ազատելու և երջանկութեան ու խաղաղութեան մէջ գնելու, տակաւին մտքովն այն երջանկութեան ճաշակը

չառած՝ անդունդի մէջ զլորելու կ'երթար . ուստի և կը հարկադրէր այդ յոյսը մտքէն հանելու և երջանկութեան բաժակը շրթունքէն հեռացունելով իրեն երեցած այն երկնային յոյսին դառնալ և ըսելու «Մէկդի գնա, ցրուէ, երազ մ'ես գուն» :

Միթէ պիտի կրնամք գիմանալ ասի ընելու : Երկաթի անուրնեբուն և թիարանի սպառնալեաց առջև կրցաւ ըւել . իսկ այս մեծ զոհողութեան առջև որ իրմէ կը պահանջուէր, պարտքն ու հարկն ինչպէս որ կը հրամայէր, անշուշտ այնպէս պիտի խօսէր . բայց թէ որ իր խեղճ սիրտը չգիմանար այս ճիգն ընելու . . . այն ատեն պիտի մեռնէր :

Էմմա մի և նոյն խորհրդածութիւններն ըրած էր ինքնիրեն, բայց հակառակ որոշում տուած էր . Էմմա կին մ'էր, չթողոյց որ Ալգոյ իր գաղափարներուն հասու ըլլալու ժամանակ ունենայ, և

- Երթալ կ'ուզէք, ըսաւ :
- Հորի է, ճակատագիրը կ'ուզէ :
- Հայրս ամեն բան ինձ իմացոյց, ես ալ իմ որոշումն ըրի :
- Ի՞նչ որոշում :
- Ուր որ երթաս, հետդ պիտի դամ :
- Էմմա . . .

— Աստուծոյ աղօթեցի որ միտքս լուսաւորէ . իր սուրբ գիւրքը բացի, և ըստ զիսպայ այն տեղը բացուեցաւ ուր գրուած է, «Վասն այսորիկ թողցես զՏայր քո և զմայր, և եղիցիս ընդ նմա մարմինս մի» :

- Էմմա. Տէր Աստուած : Ի՞նչ կ'ըսէք, թշուառ աղջիկ :
- Վ'ըսեմ որ Աստուած արդար է և իր խօսքը ճշմարտութեան աղբիւր է, ուստի պիտի ձգեմ հայրս, և սիրած մարդուս հետ պիտի երթամ, ուր որ Աստուած մեզ առաջնորդէ :
- Բայց ես քու ամուսինդ չեմ, և չեմ կրնար ըլլալ :
- Ինչո՞ւ չես կրնար ըլլալ . միթէ եղած չես համարուիր այն վայրկեանէն, որ մեր սիրտերն իրար հասկցան . այն վայրկեանէն, որ քու կեանքդ իմ կեանքիս համար հարկաւոր եղաւ :
- Չեմ կրնար, և պէտք չէ . . . թէ մարդկային և թէ Աստուածային օրէնքներն մեր այս սրտի իղձին գէմ են :

— Ըսածդ չեմ հասկնար :

— Միթէ չե՞ս ըսած որ այնպիսի հանդիսաւոր ուխտ մ'ըրած եմ, որմէ և ո՛չ իշխանութիւն մը կրնայ զիս արձակել . չարագործի մը ամուսին, արեղայի մը կին կոչուիլ կ'ուզե՞ս, գո՛ւն անմեղ հրեշտակ :

— « Բու Աստուածդ՝ իմ Աստուածս պիտի ըլլայ, քու հայրենիքդ՝ իմ հայրենիքս պիտի ըլլայ » . այս ալ Սուրբ Գրոց մէջ կայ :

— Իմ հայրենիքս վէճի սակ է . . . յափշտակուած է ինձմէ . իմ Աստուածս զիս կը հալածէ . չկայ տաճար մ'որուն մէջ քեզի ինձ ամուսին անուանել կարենամ . չկայ օրէնք մ'որ այսպէս ընելու իրաւունք տայ ինձ . և ես՝ սքսոր, նախատինք, բանդ և բոլոր մարդոց անէծքը միայն կրնամ հետս բերել քեզի :

— Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած, ըսաւ խեղճ աղջիկը՝ ծունկին վրայ իյնալով և երկու ձեռքովն երեսը ծածկելով :

— Ինձի համար կ'ուզե՞ս հայրդ թողուլ . կ'ուզե՞ս որ նա իրաւունք ունենայ ըսելու թէ ես քեզի մոլորեցուցի . կ'ուզե՞ս որ այն սուրբ գործը զոր ըրի քեզ ազատելովս, անարդանայ նիւթ մը, Վայէնի գրոջմ մ'ըլլայ ինձի համար :

— Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած . . .

Իմնա իր հեծկլտութեն չկրնալով խօսիլ, միայն այս բառերը հազիւ կրցաւ արտասանել :

— Կ'ուզե՞ս որ այս սէրը (զոր պարսպ բան է ծածկելս, վասն զի քեզի կը սիրեմ, Ի՛մնա) . կ'ուզե՞ս որ այս առաջին և իմ կենացս մէջ ունեցած միակ սէրս՝ որ զիս առաքինութեան հաւատքով զօրացուց և Աստուծոյ մը էութիւնը ինձ յայտնեց, ամօթ մը համարուի և իբրև չարութիւն պատժուի : Մեղքցիք ինձի Ի՛մնա, մեղքցիք ինձի, եթէ ինքզինքդ չես մեղքնար :

— Այո՛, պատասխանեց աղջիկը՝ իբրև ներշնչեալ ելլել կայնելով . քեզի ալ կը մեղքնամ, ինձի ալ . Ալլոյ՛ եթէ զիս թողուս, պիտի մեռնիմ, ինչպէս որ դու ալ առանց ինձի՛ պիտի մեռնիս : Բոլոր օրէնքները, մարդկային բոլոր վայելչութեան գրութիւններն աչնչ են մեր հոգւոյն այս սուրբ կարօտութեանն առջև . մարդկային օրէնքներն ինչերնուս պէտք են, այն օրէնքներն անոնց համար

են, որոնք իբրև բարեացաւիթ կ'ընդունին զանոնք : Մենք երկուքնիս նախաստեղծից պէս աքսորեալ, տարազիր, մենաւոր թափառական եմք, միթէ գրախտէն դուրս ելլելու ատեն՝ Եւս թողո՞ց Ազամբ . արդ՛ մենք ալ Ալլոյ, որովհետև զիրար կը սիրեմք, ըսել է նոյն արդիւեալ պտուղը կերած եմք, դատապարտութիւննիս 'ի միասին կրելու եմք : հայրս Աստուծմէ աւելի խիստ չէ :

Ալլոյ՛ այսպիսի ազատ դատողութիւն մը, այսպիսի պարզ մտաւոր յափշտակութիւն մը չէր սպասէր Իմնայէն, որ իր սրտին մէջ և մարդարեից այլարանական երգերուն մէջ կը փնտռէր կը դանտէր իր իղձերը :

Ալլոյ՛ միայն բնութեան մէկ զօրաւոր ազդումը կը համարէր սէրը . իսկ Իմնայի համար՝ այն զգացումը հաւատքով և Աստուծոյ խօսքով սրբազնացեալ էր :

Սիրուն աղջիկն այս վայրկենիս կը նմանէր դեղեցիկ մարդարեւահի մը կամ այն կոյսերէն մեկուն զորս Ալլոյէրի երեակայած է իր աստուածային երգոցը մէջ : Ուստի Ալլոյ անոր առջև ծունկի վրայ պիտի գար, եթէ չնուագէր իր եռանդը՝ որով իր միտքը պահ մը յափշտակուեցաւ Իմնային պէս :

Եւ որպէս զի Ալլոյի համար կարելի ըլլար այս դիւյազնական զօհողութիւնն ընել, կամ լաւ ևս՝ մինչև այն աստիճան բարձր սէր մը կրել որով մարդս իրեն համար օրէնք, իրաւունք և տիեզերք մը կը ստեղծէ, պէտք էր որ Ալլոյ՛ Իմնայի կուսական ողին և խորին հաւատքն ունեցած ըլլար, այլ սակայն մոլորութիւններն՝ կատկածներն, նախապաշարմունքն, դարեոյն ապականութիւնն Ալլոյի սրտին դաշտելով փոխած էին զանի . մագերը տակաւին սե էին, բայց սիրան ալեւորած էր . և թէպէտ այս սուրբ սէրը կերպով մ'անոր սիրտը վերանորոգած էր, բայց չէր կրցած մուցուանել այն խորին հարուածները, զորս ընդունած էր մարդկային անօրինութեանն ու անիրաւ թշուառութեանց ներքև :

Հրեշտակային սէր մը զգալու համար պէտք է աշխարհիս վրայ ոտք կոխած չըլլալ :

Ալլոյ՛ խեղճ ծերունիին իր միակ զուակէն գրկուելովն ինչ մեծ կսկիծ իմանալիքը նկարագրելով, կ'ուզէր Իմնայի գաղափարներն

ու զգայունները ուրիշ կողմ մը դարձունել քաղցրութեամբ օրհնելուց թէ հայրն որչափ դող ելեր էր, իբր իր աղջիկը վանքէ մը մէջ փակելու փորձին վրայ խօսք եղած էր. թէ՛ ինչ օգուտ կրնար եղած ըլլալ այն վտանքէն ազատելովն, եթէ իր խեղճ հայրը նորէն զանի կորսնցունելու պարտուորէր ազատիչին պատճառաւ օրհնելուց Եւրոպոյ՝ իրեն սպառնացող փոթորիկին անցնելուն սպասելով, թերեւս իր անմեղութիւնը ճանչցունելու կարող պիտի ըլլար, թերեւս՝ քանի մ'ամիսէն, քանի մ'օրէն իր բուն անունովն ետ դառնալով իրեն կնութեան պիտի ուղէր և պիտի պատկուէր առաջի օրինաց առաջի Աստուծոյ. և այն ասին հօրն հետ մէկ ընտանիք կազմելով իրրեւ պաշտօնեայ խաղաղութեան և եղբայրսիրութեան՝ պիտի ընկերանար անոր, որով պիտի օրհնէր իր կեանքն որ սիրով զեղեցկացեալ և առաքինութեամբ սրբազործեալ պիտի ըլլար. թէ՛ այս վիճակն Կամայի արժանավայել էր, և միայն այս պայմանաւ կրնար անոր ազնիւ առաջարկութիւնն ընդունիլ. թէ՛ զանի սիրելովն՝ կը փափաքէր զանի երջանիկ ընել, և ոչ թէ լալու գոտապարտել իր փախտականութեան նեղութիւններուն և գառապարտութեան նախատանայը զանի մասնակից ընելով:

Կամա առանց ընդմիջելու մտիկ ըրաւ Եւրոպոյ երկար պատճառաբանութիւնը. իր շնորհափայլ գիւցազնական գեղեցկութեան վրայ տիրեց գառնութիւն մը, որ կասկածի և սխալանքը ճանչնալու նշան մ'էր: Ալլոյ՝ համբերատարութեան խօսք մը կը սպասէր Կամայէն, բայց սա՛ երկար լուսնէ մ'ետև անմխիթար ձայնիւ սա խօսքը թոթովեց.

— Զիս չ'սիրեք կոր:

Եթէ կարևոր եղած ըլլար Կաման այսպիսի կասկածի մը մէջ թողուլ, իր յուսադրութեանը մէջ իրրեւ սխալած ցուցնել և անոր թէ՛ սէրն և թէ՛ անձնական արժանիքը մերժել, զարձեալ ասոնք Կամայի համար անտանելի բաներ էին:

— Ես քեզ չեմ սիրէր, Կամա, ես քեզ չեմ սիրէր, ո՛հ, մ'ըսեր այդ խօսքը. մ'ուրանար որ դուն իմ հողոյս մէջ լոյս մը վառեցիր. ես քեզ չեմ սիրէր, իմ կենացս հրեշտակը. ես՝ որ միանակ երեսօք տեսած աստես երեսուն տարուան ցաւերս ու յուսահատ

տոթիւնս մոռցայ, ես՝ որ քու մէկ նայուածքիդ շնորհիւն իմ հաւատքս ու երանական աշխարհի մը յոյսը վերստացայ, ես քեզ չեմ սիրէր, Կամա. բայց եթէ քեզ չսիրէի, միթէ տակաւին պիտի ապրէի. միթէ կեանքս պահել և պատիւս ու ազատութիւնս նորէն վաստակել պիտի ուղէի, սիրելի՛ քոյր. թող որ այս անունը տամ քեզի. օր պիտի ըլլայ որ քեզ ուրիշ անուն մը տալ պիտի ուզեմ:

— Քոյր կամ ամուսին, ես քուկդ եմ. եթէ իմ հօրս հաւանութիւն տալը կ'ուզես, իմ սիրտս, իմ բոլոր սիրտս կը բանամ անոր, և նա կ'օրհնէ մեր սէրը, և մեր ձեռքերն իրարու կուտայ առաջի Աստուծոյ:

— Խեղբդ զլուխդ ժողվէ, քոյրս:

— Ո՛հ. դուն չես կրնար իմ այնպէս ընելուս արդէլք ըլլալ. հայրս հիմա եկած ըլլալու է. կեցիք, ժամանակնիս սնդէ: Այս փոսքն ըսելէ յետոյ՝ հաստատ մտօք վազեց զէպ 'ի դուրը, և առանց ժամանակ թողելու որ Ալլոյ զինքը կանչէ, զուրս ելաւ:

Ի

ԱՆԳՈՅՑ ԿՐՕՆԲԸ

Ալլոյ այս վայրկեանիս կը փափաքէր որ մեռնի, մինչև իսկ բանդաբուսի, թէպէտ և այս վերջինը խիստ գառն երեցած էր իրեն:

Իր սրտին երջանկութեանն արդէլք եղողը՝ Կամայի հօր հաւանութիւն չտալը չէր. արդէլք եղողներն էին օրէնքը, սովորութիւններն, նախապաշարմունքն, որոց հիմունքն ինքնահաւանութեան տղմին մէջ թաղուած են, և զազաթները՝ զէպի կրօնական մտացածին երկինք մը կը բարձրանան:

Ալլոյ կաթողիկ ըլլալով, ամուրիութեան օրինաց կապերովը կաշկանդուած էր տակաւին. սոս օրէնքը՝ հասարակաց խղճին առջև իրրեւ այլանդակ ըմն մը մերժուած ըլլալուն հակառակ, տակաւին

կը մնայ իր բոլոր զօրութեամբը, և դարոյս յառաջադիմութիւնն ու բնութեան ամենասուրբ ուխտերը կը ծաղրէ :

Երկրին կառավարութեան կողմանէ ջնջուած վանքը թողլով, աբեղայի հաղուստն հանելով և անոր յարակից իրաւունքներէն հրաժարելով, Ալբոյ՝ տակաւին կարող չէր ազատելու այն պարտաւորութիւններէն, որոնք Հռովմայ կամայական օրինադրքին մէջ և ուսմիկ ժողովրդեան մէջ հաստատութիւն գտած են : Այն օրէնքը գնդին իբրև դաշնադրութիւն մը հաստատած է զայն, բայց այդ դաշնադրութիւնն ընդներուն ազատութիւնն սպահովելու կարող չէ եղած :

Ալբոյ կրնար կաթողիկէի դաւանանքն ու օրէնքը թողուլ և Հռովմէական եկեղեցւոյ բունութեանը դէմ՝ բողոքել, և եթէ իր անուան մը հրապարակաւ նշովք կարգացուի ինչ ու եկեղեցւոյ բնմէն և ամբողջութեան հաւատացեալ ժողովրդոց ներկայութեանը՝ իր վրայ բանադրանք ըլլալը բանի տեղ չդնէր, կրնար ուրիշ կրօնք մը՝ դաւանանք մ'ընդունիլ, և իր դատողութիւնը՝ ուրիշ աւելի կամ նուազ կամայական և անբանաւոր վարդապետութեանց առջև խնայահարմար չեղնել :

Բողոքականութիւնը Հռովմայ իշխանութիւնը մերժելով, խղճի և և դաւանանքի ազատութիւն տալ կը խոստանար, բայց այս խոստմունքը միայն ըստ մասին կրցաւ կատարել : Բողոքական կղերն ալ կամայ կամաց նախնի և արդի կրօնականաց հիմնական մոլորութիւններուն մէջն ինկաւ, և Աստուածաշունչն ու մասնաւոր եկեղեցեաց կարծեցեալ հաւանութիւնն իրեն զէնք ընելով, կործանեալ շէնքը վերականգնեց տակաւ առ տակաւ, և աղետարեւր ու նուաստացուցիչ լուծոյ մը ենթարկեց խղճի ազատութիւնը : Հռովմէական եկեղեցւոյ կուսակալական բայց հանդիսաւոր սլաշտամանց փոխարէն՝ մանրակրկիտ կերպական արարողութիւն մը հաստատեց, որ մարդուս ոչ իմացականութիւնը կը լուսաւորէ և ոչ երեակայութիւնը կը յափշտակէ, կաթողիկէ եկեղեցւոյ հանդիսաւոր և սրտաուռ էր պերուս փոխարէն՝ պարզ դրոյ ընթերցումն հաստատեց, այսինքն կեղծ իբր փոխարէն կեղծ իբր, ուստի ժողովուրդն ալ որ բանաստեղծութեան սիրահար է և անով բան մը կը զգայ, հարկաւ Վատի-

կանի միատիկական հանդէսները՝ նորահաւատից յիստ ու սղալ իմաստակութիւններէն լաւագոյն կը համարի :

Ալբոյ մարին մէջէն կ'ըռէր թէ աւետարանի կրօնքը, սիրոյ կրօնքը տակաւին յարութիւն առած չէ. թէ՛ թիթեանիկը տակաւին իր պատանքէն դուրս ելած չէ. քանի որ բարոյականութեան համար հաւատոյ հանդանակ կայ, քանի որ մարդս իր հաւատոյն համար օրինաց առջև պատասխանատու ճանչցուի, խղճի ազատութիւնը լոկ խօսք մ'է, որ ոչ իրականութիւն ունի և ոչ արդիւնք :

Երթալ քահանայի մ'առջև մոլորութենէ մը հրաժարիլ և անոր փոխարէն ուրիշ մ'ընդունիլ, եթէ ասանկով ինքզինքը երջանիկ ընելու կարող ալ ըլլար, ասի դարձեալ իսիստ ցած բան մը կ'ըրէր Ալբոյի, որ անկախ մարի տէր ըլլալով իր ազատութիւնը պահելու համար երկար ատեն կուտած էր :

Ասիկէ զատ՝ ժամանակը չէր այս ծանր խնդիրներուն վրայ Էմմայի հօր հետ վիճելու. մարդկային ընկերութենէն տարադրեալ, օրէնքով դատապարտեալ երկու ճամբայ միայն կար առջին. կամ իբրև փախտական՝ թափառական և վայրենասպէս ապրիլ, և կամ թիարանի շղթային և առանձնական խորշին յանձնառու ըլլալ, և այս երկու պարագային մէջ ալ իրեն համար ոչ իրաւունք, ոչ անուն, ոչ նեցուկ և ոչ յոյս կար :

Այս մտածութիւնները իբրև անդութ ճակատագիր, իբրև անհաշտ ողիններ մտքին մէջ իրարու կը յաջորդէին. պատուաւոր միջոց չկար ազատութեան. ամէն ճամբայ դէպ'ի մահ, դէպ'ի վատանունութիւն կ'առաջնորդէր իրեն. Էմմայի սէրն ու հօրը սրտմտութիւնը կը կուռէին երեակայութեանը մէջ, և մոլորեցուցիչ, մատնիչ, ստախոս անուններով կանչուիլը կը հնչէր ականջին. այս ստակալի տեսարանին չկրնալով սիրտը դիմանալ՝ ոտքի ելաւ, և սաստիկ կըբռնած՝ ձեռքը գրիչ մ'առնելով՝ հետեւեալ խօսքերը գրեց .

«Տէր. կը սրտատխմ, գաղթեցէք դատաստան ընելէ այն զժբաղչ զին վրայ զոր իբրև որդի հիւրընկալեցիք, և զոր իրաց արտաքին երեւոյթքն տխուր գոյներով կը նկարագրեն ձեր աչքին. ես՝ թէ ձեր կարեկցութիւնը և թէ ձեր աղջկան զոհողութիւնը ոչ փնտու-

ցի, ոչ ալ կրնամ ընդունիլ. ես արժանի չեմ ոչ անոր սիրոյն զոր ունի առ իս, և ոչ ձեր արհամարհանայր զոր ինձ իմացունել կ'ուզէք: Ես՝ զիս ձեր յարգանայն ու ձեր սիրոյն արժանի կը դանեմ, որովհետեւ ոչ գրամ, ոչ խօսք, ոչ սէր նենգած եմ: Իմ պատւոյս, զաղանի երդման մը, կ'ըրտեանս աշխատող պարագաներու զոհ եղած եմ. ժամանակն ու Նախախնամութեան ձեռքը ճշմարտութիւնը երեան պիտի հանեն, և թերեւ օր մը ամբիժ՝ և անատութիւնը երեան պիտի ներկայանամ վերստին, արժանաւորապէս ձեռքերնիդ թոթվելու և աղջիկնիդ ՚ի կին ուղելու համար: Ուստի մի անիծէք յիշատակս և մի թշնամանէք անունս:

ԱՆԳՈՅՑ:

Այս զիրն անկողնին վրայ բաց ձգելով՝ ծոնկի վրայ եկաւ, և արդէս թէ նոյն տանը տիրող ողիին երկրպագութիւն մ'ըրբաւ. յետոյ իր լաթերը կրնակն առնելով՝ պատուհանէն դուրս պարտեղի մը մէջ ցատկեց ու փախաւ:

Փախչելէն երկու ժամ յետոյ դործակատար մ'եւ երկու զինուոր հովիւին առնը զալով, փախտականը կը փնտռէին բռնելու համար:

ԻՍ

ՎԵՐՍՏԻՆ ՉՅՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մինչդեռ Ալբոյ սենեակին պատուհանէն փախչելու վրայ էր, Էմմայի և հօրը մէջտեղ սրտաճմլիկ տեսարան մը տեղի կ'ունենար զոր չեմք ուզեր նկարագրել:

Ալբոյ բնական ազգամոր՝ կանխապէս լաւ հասկցած էր, թէ Էմմայի յանկարծական և սաստիկ կիրքն ինչ ազդեցութիւն պիտի բնէր ձերունի հօրը վրայ: Աղջիկը՝ ոչ թէ երախտապիտութեան և կրթիկցութեան զգացմամբ, այլ խորին մտաւոր յափշտակութեամբ

մը կը խօսէր, և ասի յիմարութեան մը պէս կ'երեւէր հօրն աչքին, որ սրտմտեալ խոսու գէմքին հակառակ՝ ցաւակցութեան և զթութեան զգացում մը կը կրէր. որովհետեւ յիմար և խելայեղ մարդոց վրայ սիրտը կը ցաւէր:

Այս զգացումը բաւական չէր՝ ձերունին Ալբոյի վրայ խիստ դատաստան ընելէ գաղբեցնելու. որովհետեւ այնպէս կը հաւատար, որ Էմմայի մաքուր և կոյս սրտէն այսպիսի խիստ կիրք մը չէր կրնար ծնանիլ, եթէ չարաչար հրապուրուած ըլլար Ալբոյին, որ իր նպատակին հասնելու երբէք պէտք չէր յուսալ. ուստի այսպիսի զգացում մը՝ որ անփորձ կուսի մը վրայ անսնուած ասեռ աղէտալէ պատրանք մը կը համարուի, և կնոջ վրայ վիհանձնական, զօրաւոր և գիւցաղնական կը նկատուի, Էմմայի հայրը կը կարծէր որ այսպիսի զգացում մը՝ Ալբոյի վրայ ուրիշ պատճառներէ չէր կրնար ծագիլ, բայց անոր համար որ բարոյականն աւրուած էր՝ շարունակ խտոնակեցիկ կեանք վարելով և արեղայական վիճակին այլանդակ պայմաններէն, որով բնութեան ամենասուրբ ուխտերուն հակառակելու սափպուած էր:

Այս ենթագրութիւնն որ բոլորովին ճշմարտութեան հակառակն էր, Ալբոյի վրայ ծանրացող ամբաստանութիւններն աւելի տխուր կերպարանօք կը ներկայայնէր Էմմայի հօրն աչքին, որով նա ինքն իրեն կ'ըսէր. Այդ չարագործը՝ մեր մատուցած խնամոյն ու եղբայրական սիրալիր ընդունելութեանն այսպէս փոխարինութիւն կ'ընէ:

Էմմա իր սրտին նայելով՝ Ալբոյի սիրտը զուշակած էր, և զանի անմեղ կը դանէր, թէպէտ և չէր կրնար այնպէս ըլլալը պատճառարանութեամբ ցուցնել. ուստի Ալբոյի մասին՝ իր հօրն ըրած խիստ դատաստաններուն, անիրաւ յանդիմանութիւններուն, արհամարհանայն ու նախատանայր չէր կրնար զիմանալ. եթէ իրօք չարագործ մ'եղած ըլլար, եթէ օրէնքն իրաւամբ զանի հաւածած ըլլար, զարձեալ Աւետարանի պաշտօնէին կը վայելէր՝ փոխանակ սիրով և զթութեամբ սիրովելու, անոր վիճակը ծանրացունէլ:

— Առաջին անգամն ըլլալով, ըսաւ Էմմա, ձեր սրտմտութեան ձայնն աւելի իմ սրտիս ձայնը պիտի մտիկ ընեմ. առաջին անգամ ըլլալով՝ պիտի համարձակիմ՝ հօրս հակառակելու. և փոխա-

նա՛յ անդուժ խրատներնուդ զոր հիմա ինձ կուտայք, պիտի հետեւիմ՝ մարդասիրութեան վեհ սկզբանց որով զիս կը դաստիարակէիք. իմ հոգիս անոր հոգւոյն կապուած է. ես՝ անոր սարաղրութեանն ու զլսուոն դալիք վտանգներուն մէջ ընկերն ըլլալ կ'ուզեմ. ձեռքս անոր վէրքը բժշկեց, սիրահար սիրտս ալ՝ եթէ չկրնար վերջտալ, զանէ մանակից պիտի ըլլայ այն ցաւերուն և զըսպարտութիւններուն, որոնց մէջ կը տառապի:

— Եւ զիս պիտի թողնու. և իղձերովդ ու դործով փութացընես այն վայրկեանը, որ զիս 'ի գերեզման պիտի տանի խռովեալ և անպատուեալ, այո՛ խռովեալ ու անպատուեալ. վասն զի աշխարհիս վրայ ուրիշ մէկը չունիմ. և իմ միակ աղջկանս փախչիլը, աւաղակի մը հետ փախչիլը՝ երեսիս պիտի զարննի իբրև ամօթ և թուլութեան ու անհոգութեան մեղագրելի հետեանք: Ասոր վրայ մտածէր ես. մտածէր ես, որ ինչպէս հովիւը՝ նոյնպէս անոր ընտանիքը հօտին օրինակ ըլլալու պարտաւոր են. քու յանցանքներդ, քու սխալմունքդ իմ զլսուս վրայ, իմ հովուած ժողովրդեանս վրայ պիտի թափին: Ո՛չ, ասի ըլլալու բան չէ. եթէ սիրտդ չչափուի, Աստուած ինձ զօրութիւն պիտի տայ իմ անաչառ պարտքս կատարելու: Աը լնէք, այս սենեակէն դուրս չպիտի ելլէք:

Ծերունի հովիւին այն խիստ ու անդրդուելի խօսքերը սոսկում՝ պատճառեցին թշուառ աղջկանը, որ հօրն ոտքն ինչալով արտասուալից աչօք կը պաղատէր՝ առանց շրթունքները խօսիլ կարենալու:

Այն արցունքները հրատապ լաւայի պէս սկսան ազդել հօրը սրտին, որ մինչև այս կէտիս երբէք մէկուն աչքէն արցունք հանել տուած չէր. և սակայն միտքը զրածէն խախտել չէր ուզեր: Աղջիկը գետնէն վերցունելով, թեւերուն մէջն առաւ և ճակատան համբուրելով՝ սկսաւ խիստ ձայնը փոխելով քաղցր ու դորովալիբ կերպիւ ըսել.

— Զիս չպիտի թողուս, այնպէս չէ՛, Էմմա, քու խեղճ հայրք նախատանայ ու գառնութեան մէջ չպիտի թողուս:

— Բայց այն դժբաղդը . . . բոլոր աշխարհի երեսէն ինկած . . . ինչ պիտի ըլլայ. դուք զանէ ուրիշ զաւակներ ունիք, ձեք խօսքը մտիկ ընող հաւատացեալները:

— Արեղանն ամենուն վրայ կը ծաղի, և Աստուած իրեն ապաշինողը չթողուր:

Էմմա զլուխը հեղիկ մը ծռելով լալ սկսաւ:

— Աս ըսածս կ'ուրանաք, աղջիկս, հաւատքնիդ կորուսե՞ր էք: Արդարը երբէք լքեալ չոտսայ, զրուած է Սուրբ Գրոց մէջ:

— Այո՛. բայց այդ խօսքերը զրոզը՝ ըսաւ Էմմա, միթէ պատուիքն Սամարացիին, որ վիրաւորեալը ճամբուն վրայ թողու:

— Բայց մենք եղբօր պէս ընդունեցինք և դարմանեցինք զանի, իսկ նա սուտ երդողի ու մատնիչի պէս վարուեցաւ մեզի հետ:

— Ո՛չ, աղի ճշմարիտ չէ՛:

— Աստուած արժանաւոր վարձքը կուտայ անոր:

Սոյն միջոցիս դուռը զարնուելով, հովիւն ըստ իւր սովորութեանց եկողը գիմաւորելու ելաւ:

Եկողը գատաւոր մ'էր, որ հետն եղող զօրականները գարսը ձգելով ներս մտաւ, և իմացուց որ Աղոյն ձեռքակալելու հրաման ընդունած էր: Թէպէտ հովիւն Աղոյի դէմ լաւ տրամադրութիւն չունէր, սակայն այս դէպքիս վրայ սիրտը սաստիկ ցաւիլ սկսաւ, մէջ յանցաւորն իր տունն ընդունած ըլլալը կրնար ուրանալ, ոչ թէ օրինաց հնազանդելու դժկամակիլ, ուստի սկսաւ ազաշել գործակատարին որ քանի մ'օր միջոց տան, որպէս զի հիւանդը հետերնին երթալու վարող ըլլայ:

Գատաւորը կը պնդէր որ խկոյն Աղոյն յանձնեն, ըսելով թէ բացարձակ և ստիպողական հրահանգ առած էր. թէ Տիգլինոյի կառավարութիւնը գաշնակից գաւառէն ինդրած էր որ ամեն ջանք և խտտութիւն բանեցունէ այս փախստականին դէմ, որուն գիտութիւնը և քաղցրութիւն ընէլ մեղք էր: — Ազաշանքնիդ անօգուտ է՝ ըսաւ, և դէմ կենալնիդ՝ անարդարանալի . . .

— Երբէք դէմ կենալ մտքէս չանցնիլ, պատասխանեց հովիւը, երկու օր, օր մը ետ ձրելնիդ կը խնդրեմ յանուն կարեկցութեան որուն նա արժանի է, և յանուն մարդասիրութեան զոր արդարութիւնն իսկ չմերժեր:

— Ո՛հ՛ հայր իմ, հայր իմ, պուալով եկաւ Էմմա, չկայ, պատճառնէն ցատկեր գայե՞ր է, վաղինք օգնենք:

— Ի՞նչ ըսիր, անկարելի է՝ ըսաւ հովիւը սրճ մ'իր բարկու-
թիւնն ու հրամանակատարին ներկայութիւնը մոռնալով, և աղջիկէ
առջևէն ու դատաւորն ետեէն՝ վաղեց զէպ'ի Ալգոյի սենեակը:

Երեքը մէկտեղ ներս մտնելով տեսան, որ սրատուհանը բայ և
անկողինը դատարկ էր, և նամակ մը կար բայ՝ անկողինն վրայ:

Հովիւը նամակը ձեռքն առնելով, աչքով վրայէն անցաւ և
լուռ ու շուարած մնաց: Իմնա ձեռքէն յափշտակեց նամակը, որ-
պէս զի ինքն ալ կարգայ:

— Ինձի կ'երեկի որ Տէր հայր՝ ըսաւ հրամանակատարը, չարա-
դործին փախչելուն օգնող մ'եղած ըլլալու է. բոլոր պատասխա-
նատուութիւնը ձեր վրայ կը թողում. և եթէ չյաջողվի՛մ վանի
ձեռք անցունելու, դատարանին առջև դուք պատասխան պիտի տար:

Այս խօսքերը ըսելէն յետոյ՝ առանց պատասխանի սպասելու փու-
թալով դուռն ելաւ, և իր մարդոցը հետ միանալով՝ փախտակա-
նին ետեէն ինկաւ:

Հովիւին տունէն հաղիւ քանի մը քայլ հեռացիր էին, զէմբը-
նին անձանթ մէկն ելաւ, որ խորհրդակիր կերպարանօք մը մօտե-
նալով, առաջարկեց որ փնտուած մարդերնին գտնալու համար ա-
ռաջնորդ ըլլայ իրենց. առաջարկութիւնը սիրով ընդունուեցաւ,
և այս մատնիչին առաջնորդութեամբը՝ քանի մը ժամու մէջ գտան
Ալգոյն, որ վտանգալից անկումով պարտուած՝ առանց ճամբայ
դիտնալու փոսի մը քովէն չորս ոտքի վրայ կ'երթար: Ալգոյ տես-
նելով որ զինքը շրջապատեր էին, և չէր կրնար ինքզինքը պաշտ-
պանել, առանց բառ մը խօսելու՝ թողուց որ զինքը բռնեն:

Մօտակայ զիւրը հասնելուն պէս կառքի մը մէջ զրին, և պա-
հապաններու ուղեկցութեամբ երկրին արդելարանը տարին Ալգոն,
որ նեղութեամբ և վիշտով յոգնած և սարտասած՝ իրեն յատկա-
ցեալ յարգէ անկողինն վրայ փռուեցաւ մնաց, քանզի այն աստի-
ճան խոնջած էր որ եթէ զգաղ մ'ալ եղած ըլլար, սիրով պիտի
ընդունէր:

Իրայ բոլոր պարագայներուն այսպէս Ալգոյի կորստեան նպաս-
տող ըլլալը՝ թէպէտ և տարօրինակ կ'երեկի, սակայն պէտքէ դար-
մանալ, որովհետեւ Հայր Իլարինն ընդարձակ և անընդհատ թղթակ-

ցութիւն ուներ բոլոր կաթոլիկ նահանգայ հաւատանուէրներուն
հետ, որոց կարգէն էր հաւանականաբար վերցապայի ձորին ծխա-
տէր քահանայն ևս:

ԻՐ

ՅՈՒՍՈՅ ՆՇՈՅԼ ՄԸ

Հովիւն ու իր աղջիկը շարունակ երկու օր տեղեկութիւն չկրցան
տանել Ալգոյի վրայ. շատ մը հարցուփորձներ ընելէ ետև վերջա-
պէս հասկցան, որ մասնուեր էր, և կիսամեռ վիճակի մէջ բռնուե-
լով Տեղւոյն իշխանութեան կեդրոնատեղին տարուեր էր, ուսկից
անմիջապէս Տիգինոյի իշխանութեան պիտի յանձնուէր:

Բարի ձերունին Իմնայի արցունքներուն չկրնալով դիմանալ,
ելաւ անձամբ դնաց բանտարկեալին վիճակն հասկնալու և անոր
վերայ բժշկութեանն ու ուժին կազդուրմանն համար ձեռքէն ե-
կածն ընելու. ուղեց անձամբ բանտէն ներս մտնել, և այս գլխու-
թեան ծառայութիւններն իր ձեռք ընել, որովհետեւ Իմնա հօրը
կարեկցութիւնն աղբրած էր, և այս պայմանաւ միայն յանձնառու
եղած էր ինքն անձամբ հոն չերթալու:

Բայց դատաւորներն բարեպաշտ հովիւին աղաչանքները չընդու-
նեցին, ո՛չ թէ անոր համար որ կը վախնային թէ երկրորդ անգամ
անոր փախչելուն պիտի օգնէր, այլ անոր համար՝ որ կ'ուզէին
հասկնել, թէ դատարանը ծանր պատճառներ ունէր անոր անխո-
հեմական դործն արդիլելու. միայն սա շնորհն ըրին որ նորէն նե-
ղութիւններ չտրուի հիւանդին, մինչև որ բանտին բժիշկն իմացու-
նէ թէ կարող է ճանապարհորդել առանց վտանգի:

Ուստի Ալգոյ՝ իր վէճքին պատանքը, կապերն և ուրիշ ամեն բան
բանտապանին ձեռքէն կ'ընդունէր, բայց իսկոյն դուշակեց թէ ո՛ր
կողմէն կուգային այն բաները: — Անոնք՝ կ'ըսէր մտքին մէջ, վե-
րաւորեալ թեւ կը մտածեն, բայց զիս 'ի գերեզման տանող հիւան-
դութիւնն աւելի խոր է, և այլ ևս գարման չունի:

Իր առջի ոյժը՝ վրայէն գացեր է : Այն չարագոյժ նամակն որ իր կենաց ամենաքաղցր մէկ զգացումը թուներեւու եկաւ , Էմմայի վրայ յանկարծ անհնարին կիրք մ'երեւելը , անոր հօրն երկչոտ անտեղի արհամարհանքը , այն պատերազմը՝ որ իր դէմ՝ սրտի ամբիժ և կենսական հակամիտութեանց դէմ տեղի կ'ունենար մաքին մէջ , մէկէն 'ի մէկ իրրեւ երկնքէ յանդունդ զլորելը , իր շուքին պէս քովէն չըստուող անդուժ ճակատագրին յաղթելու յոյս չմնալը , այս ամենը՝ կ'երեւէր թէ՛ Ալլոյի կենաց աղբիւրն ու անձնական արժանեաց գիտակցութիւնը սպառած էին :

Բանատրիուէլէն 'ի վեր կատարեալ լուութիւն մը 'կը պահէր . ո՛չ ձեռքաղաղութուն վրայ յաւ , ո՛չ ալ իրեն սոյսնող թշուառութենէն ազատելու փափաք կը յույնէր , եթէ կարելի ըլլար , դարձեալ չոյլտի փորձէր փախչիլ : Էմմայի յիշատակն աստղի մը պէս երբեմն կը փայլէր իր մտաց խաւարին մէջ . բայց ասպրախտ , մուրրեցուցիչ անուններն որ միշտ ականջին կամ լաւ ևս երեւակայութեանը կը հնչէին , այն փոքրիկ միտմարական նշոյլը կը դառնացունէին : Առջի եռամսհադին աշխուժին , հոգեկան զօրութեանը փոխարէն՝ որով օրինաց շանթերուն և մարդոց չարախօսութիւններուն գիմաղբաւեց , խորին անտարբերութիւն մը տիրած էր վրան . վերջին անգամ բռնուելուն վրայ՝ այնպիսի փափաք մը կը զգար մեռնելու , որ կատարեալ սիրտը գրաւած և մահն իբրև պէտք մ'ըրած էր : Տարօրինակ և աճեցող թմրութիւն մը տիրած էր բոլոր կարողութեանցը վրայ , և կը նմանէր խոնջեալ հանդարտութեան մը , և հետզհետէ աւելի խորին և տխուր կերպարանք մը կ'առնուր :

Բանտին բժիշկը վէրքին կատերը նորոգելու եկած ատեն վէրքը քննելով՝ քարի նշան մը չկրցաւ տեսնել : Ինչ և իցէ , Գրիդիոնի կաւալարութիւնը պարտք համարեց՝ փախտականը դատարանի յանձնելը կամ լաւ ևս զնտան դրկելը քանի մ'օր ետ ձգել , բայց ո՛չ թէ անոր ճակատագիրն ամառելու համար , արդէն այն դատաստանական դրութիւններն , որ ըլլալիք դատաստանէն տարագրութեան յճիւ հանել տալու նպատակաւ՝ իրեն հաղորդուած էին , անտշառ կ'երեւէին ամերուն աչքին , և պատիժն ալ՝ ո՛չ ծանր : Գատապարտեալին յեղափոխականի կերպարանքն արդէն մեծ յանցանք

մ'էր Ռէցիոյ բնակիչներուն աչքին , որոնք նախնի փոթորիկներէն յողնած՝ թէ՛ բնութեամբ և թէ՛ կերպարանօք պահպանողական և ինստ մարդիկ են . Ալլոյի հաստատամտութիւնը , որով առանց մեղասակից լմը յուշունելու կամ իրեն յանձնուած մեծ գումարը՝ կեղծ գրամ չնկատուած ատենն իսկ՝ ինչ նպատակի սահմանուած ըլլալն առանց իմացունելու թխրանի յանձնառու եղած էր , այս մարդոց աչքին մեղադրելի գործ մը կ'երեւէր . օրինաց անհնազանդութիւն , վերջապէս ասպոցոյց մը կը համարէին , որ նա այն դաղտնի ընկերութեանց անգամ եղած ըլլալու էր , որոնք իրենց անգամայն մէկը բերնէն խօսք մը փախուցած ատեն՝ գրելի մը ծայրով կը պատժեն՝ ըստ աւանդութեան . ուստի կը համարէին թէ՛ Ալլոյ անուրններուն և զնդանին յանձնառու ըլլալովն չարեաց փոքրագոյնն ընարած էր :

Ութն օրէ 'ի վեր՝ հիւանդն արդեւ շարանին մէջ պարկած էր . բանտապանէն և բժիշկէն զատ ուրիշ մարդու երես չէր տեսներ . առաջինն իր օրական ուտելիքը տալու կուղար , և երկրորդը՝ հիւանդութիւնը դարմանելու : Ո՛չ մէկին և ո՛չ միւսին հետ բառ մը խօսած էր :

Իրիկուն մը բանտապանը բժիշկին պատուէրին համաձայն մեղձացուցիչ ըմպելիք մը բերելով , ևտ դարձած ատեն՝ իր սովորութեանն հակառակ գուռը չկրցից . հիւանդը բանտին մէջ թափանցող տկար վերջալուսին օդնութեամբը տեսաւ , որ գիմացը մէկը եկաւ , հասակաւ բարձր , վեհ կերպարանօք , մոխրագոյն վերարկուի մը մէջ պլլուած , և դէմքին կէսը՝ թաղիքէ մեծ զլխարկով մը ծածկուած :

Ալլոյ այս երևութիւն վրայ ապշած մնաց , վասն զի երազի պէս բան մը կ'երեւէր , աչքն եկողին վրայ սնկած նայեցաւ , բայց չկրցաւ ճանչնալ :

— Ալլոյ Գիողատի , ըսաւ անձանթով . զիս մտոյնը ևս : Ծանր ու քաղցրաշունչ ձայնէն՝ Ալլոյ հասկեցաւ որ իրեն առաջնորդ եղողն էր :

— Էիմա ձեզի ճանչցայ , պատասխանեց :

— Տուած խրատներս սղեկ չէք բռներ կոր , յաւելցուց , ձեզի

որ բանտէն որ աղասեցի, անոր մօտ տեղ մը բռնուեցաք անզոս շուրթեամբ. բայց հող չէ. այն ժամանակ դործը կիտով չափ կատարեցի. իսկ հիմա՝ աղատութեան համար լաւազոյն ճամբայ մը կրնամ ցուցնել:

— Շատ ուշ է, պատասխանեց Ալբոյ՝ զլուխը հեղիկ մը ծռելով:

— Ո՛չ, շատ ուշ չէ՝ պատիւդ ու աղատութիւնդ ձեռք անցունելու համար:

— Զիս կը պատրէք՝ եղբայր. թերեւ ինքզինքնիդ ալ կը պատրէք:

— Ձեզ աւանդը յանձնուելէն ՚ի վեր տարի մը կ'ըլլայ այսօր:

— Այսօր, հարցոյց բանտարկեալը՝ միտքը ժողվելով, կարելի է, մայիսի հինգը:

— Ճիշդ է, պատասխանեց անձանօթը. այս նշանադիրը կը ճանչնաք:

— Այո՛, նոյնն է, ըսաւ Ալբոյ՝ ուրախութեամբ զմի գիտելով. զձեզ ինձ զրկողը գիտէ թէ ես ուր կը բնակէի առաջ՝ Վերջաբայի ձորին մէջ. այն բնակարանիս հիւսիսի կողմէն դէպ ՚ի արեւմուտք չորս հարիւր քայլ հեռուն երեք խոշոր շագանակենի կան: անոնց ամենէն հաստին կոճղին մէջ խոռոչ բացուած է՝ արմատին մօտ. խոռոչին մէջի փուտ փայտերուն ներքե կը գտնէք փնտուածնիդ եթէ արդէն բազում՝ որ զիս կը հալածէ, մէկուն ձեռքն անցուցած չէ այն նախանձառիթ աւանդն, որ իմ հաւատարմութեանս ու հայրենասիրութեանս յանձնուեցաւ:

— Ձեռքերնիդ տուէք ինձի, եղբայր. Տէր Աստուած, կրակ կը ցափէ կոր:

— Այո՛, բայց այս տաքութիւնը կենդանութեան նշան չէ: Ժամանակին եկաք. թերեւ քանի մ'օրս մնացած է:

Անձանօթը՝ Ալբոյի ձեռքը բռնելով երկար ատեն բազկին զարկը մտիկ ըրաւ, ու

- Պէտք է ասիէ ելլէք, ըսաւ:
- Բայց ինչպէս ելլելու է:
- Այս անգամ չպիտի կրնամ ձեր փախուստը դիւրացունել, և

քուք ալ թերեւ այդպիսի պարադայէ մ'օրուտ քաղելու կարող վիճակի մէջ չէք. երեք օր թող անցնի, վասն զի դործը լաւ յաջողելու համար երեք օր պէտք է ինձի. անկէ ետքը՝ աւանդը ձեզ յանձնողին անունը և պահած տեղերնիդ համարձակ յայտնեցէք, և տեղոյն դատարանին բողոքեցէք որ դատաստանը վերաքննուի. մնացեալը ինձի թողէք. ամէն բանէ ձեզի կ'աղաւտեմ. դատաստանը վերաքննուելով անմեղութիւննիդ պիտի յայտնուի:

— Անմեղութիւն, գոչեց Ալբոյ. բայց իբրև դրամանենգ՝ ինձ եղած ամբաստանութիւնը:

— Իրողութեան առջև անոր ստութիւնը պիտի տեսնուի, երբ ստակները քննուին, որոնք այլ ևս վտանգի մէջ չեն. պիտի տեսնէք անի. այս տեղ է:

— Ի՛նչ. այն աւանդին համար կ'ըսես:

— Անոր ապահովութեանը մասին երբէք վախ մի՛ բերէք ձեզ. ամեն բան պիտի պարզուի, և ձեր վրայ դուռած զրպարտութիւնը՝ զանի նիւթովներուն զլիւին վրայ պիտի խնայ:

Այս միջոցիս զրանը կողմէն՝ նշան սուղ աննշմարելի ձայն մը ելլելով — Ձեմ կրնար աւելի կենալ, յաւելցոյց անձանօթը. ժամանակս հաշուով է, երեք օր և յետոյ . . . աղատութիւն . . . պատիւ:

— Եւ մահ, մըմբայ Ալբոյ ինքնիրեն:

Անձանօթն այս խօսքը չլսեց, վասն զի արդէն բանտէն դուրս ելիր էր. և դուռը վրայէն դոցուեցաւ:

ԻԳ.

ԵՆԵՂԱՅՆԳՈՒԹԻՒՆ

— Ալբոյ մինակ մնալուն պէս — Աղատութիւն և պատիւ, գոչեց, աղնիւ և քաղցր բառեր. հողոյ յոյս և լոյս. սա արտաստեա պատերէն յետս դարձող ծաղրաբան արձազանցի մը պէս զլիւ

կը խաբէք հիւսն . հիւսն, որ բազմամեայ և անօդուտ փափաքներով
 կենացս թևերը ջարդուած են . հիւսն, որ գերեզման մտնելու հա-
 մար միայն պիտի ելլեմ բանտէս : Այո՛, Էմմայի մաքուր յիշատակ
 մը թողելու համար, որպէս զի նա իմ անուանս վրայ չկարմնի,
 որպէս զի ցորեկուան լուսոյն մէջ՝ մարդոց աչքին առջև գերեզմա-
 նիս վրայ ծագիկ մը ձգէ : պէտք է որ ապրիմ, խօսիմ, այս տե-
 դէս դուրս ելլեմ, ճակատս բաց կենամ դատաւորներուս առջին
 և զանոնք պարտաւորեմ իրենց վճիռն ու դատակնիքն ետ առնելու :
 Բժիշկին տուած թմբեցուցիչ գեղէն աւելի՛ այս յոյսն անոր ջեր-
 մը խաղաղեց, և հանգարտ և առողջական քուն մը բերաւ վրան,
 և սկսաւ երազին մէջ տեսնել որպէս թէ՛ մարմնովն այնչափ թե-
 թեցած էր, որ թռչելով լուսոյ և հեշտութեան մթնոլորտի մը
 մէջ կը բարձրանար : Տանդէսի նկարագրած դրախտի սուրբ ոյխ-
 ներուն նման օդեղն պատկերներ կ'երեւային և կը խնդային իրեն
 առջին, և աներեւոյթ քնարներով ուխտնա կ'երգէին . սիրոյ քաղցր
 երգերով կը հրաւիրէին իրենց հետ բարձրանալու փառաց և աղա-
 տութեան սահմանին մէջ, որ պատրաստուած է հայրենաց համար
 նահատակուողներուն, մարդկային արդարութեանէն հալածուածնե-
 րուն, և տարադրեալ ճշմարտութեան սուռքեալներուն . և ինքն
 ալ որպէս թէ՛ կամաց կամաց կը մօտենար այն լուսաւոր աշխար-
 հին, այն քաղցր ներդաշնակութեանց՝ որ տակաւ առ տակաւ ա-
 ւելի որոշ կերպիւ կը հասնէին ականջին, և այն սիրալիր պատ-
 կերներուն՝ որ հետզհետէ աւելի յստակ ձևեր և աւելի ծանօթ
 տեսք մը կ'առնէին : Բարձրէն թափող ջրոյ սահանաց շաչիւնին նման
 խորունկէն ծանր աղմուկ մը կը լսուէր ետևի կողմէն, որն որ եր-
 բեմն այն աստիճան կը մօտենար, որ սպառնալի և սոսկալի կերպով
 մը կը հնչէր ականջին . և այս սահանաց աղմուկը՝ որպէս թէ կա-
 մաց կամաց արհամարհանաց ձայնի, որսմտութեան աղաղակի և իր
 ետևի կողմը՝ լացող բազմութեան մը հեծեծանքի կը փոխուէր,
 կը գողար որ չըլլայ թէ այն խաժամուծն իրեն հասնի, և զինքն
 այն թշուառութեանց ու անխախճան լացու կոծին մէջ քարշէ տա-
 նի . բայց իրեն օգնութեան հասնող ձեռքի մը և իք նոր ճգանցը
 չնորհիւ որպէս թէ՛ ուրիշ լայն ճամբայ մը հասաւ, ուսկից քայս

լեւով մէկ կողմէն կը հեռանար այն սպառնալիքէն, և միւս կող-
 մէն կը մօտենար այն լուսափայլ պատկերներուն, այն երկնային
 ներդաշնակութեանց՝ որ իր միտքը կը յափշտակէին :

Այս ախուր և քաղցր երազներն, որ Ալլոյի կրած տառապա-
 նայն ու նոր ստացած յուսոյն բանաստեղծական դաղափարներն է-
 ին, անոր քունն երկարեցին, որով մինչև արեւուն ծագիլը՝ հան-
 դիստ և հանգարտ քնացաւ :

Երբ աչքերը բացաւ, առատեան լուսոյ շառաւիղներն իր տկար
 դէմքին վրայ ծագած ըլլալով՝ իր երազներն իրականութիւն կար-
 ծեց : Բայց տակաւ առ տակաւ իր պատրանքը ցրուելով բանտին
 մէջ ըլլալն հասկցաւ, բայց բնաւ չտոկաց . երկար ժամանակ հանգ-
 չելովն ջիղերը զօրացած և կրից յուզմունքն հանդարտած էին . առ-
 ջի գիշերուան ընդունած այցելութիւնը, լսած խօսքերը, ազատու-
 ջի գիշերուան ընդունած այցելութիւնը, լսած խօսքերը, ազատու-
 ջի խոստումը միտքը բերաւ : Մտքովն Էմմայի քաղցր յիշա-
 թակը ողջունեց, առանց հօրը վրայ մտածելով վախ իմանալու .
 շատ կը փափաքէր զանոնք տեսնելու, իր սիրտն անոնց բանալու և
 ամենուն առջին զանոնք իր ցնծութեանը մասնակից ընելու . բայց
 դեռ ժամանակը չէր, տակաւին երեք օր պէտք էր որ զինքն
 ընկճող ծանրութենէն ազատէր . երեք օր, երեք դարէ աւելի
 կուղային իրեն, ո՛ր է թէ իր քունն այնքան ասուն տեւած ըլ-
 լար :

Բժիշկը զանի լաւադոյն վիճակի մէջ գտնելով, իր տուած դե-
 դին աղղեցութեանը կուտար այս փոփոխութիւնը : Ալլոյ հարկ ե-
 դածէն աւելի ժամանակ չկորսնցունելու համար՝ խորհեցաւ որ բժիշ-
 կին ձեռօք իր խնդիրը մատուցանէ երկրին գատաւորացը . ուստի
 անոր ըսաւ, թէ իր առջևն եղող վստաններուն վրայ խորհելով և
 խղճին դիմելով, մտքովն որոշել էր՝ այս երկրին անաչառ իշխանու-
 թեանը յայտնել դաղանիք մը, որ սրտին վրայ ծանրացած էր,
 և իր դատապարտութեանը պատճառ եղող դատաստանին կը վե-
 րաբերէր . թէ՛ այս սլատճառաւ կուղէր որ երեք օրուան մէջ ա-
 նոնց առջին ներկայանայ, կամ՝ թէ որ իր առողջութեան վիճակը
 չներէ տեղափոխութիւն ընելու, այն ատեն անոնք բարեհաճին բան-
 տը գալով իր խոստովանութիւններն ընդունելու . և թէ՛ կը խնդրէր

որ եթէ երկրին օրէնքն արդեւք չին գներ, պինքն չկընկալող է դարմանող հովիւն ալ ներկայ գտնուի այն հարցափորձին :

Բժիշկն Ալգոյի խնդիրքին վրայ զարմանալով, զանի պատրուակ մ'ըբաւ, որով Ալգոյի ճամբայ ելլելը յապաղեցնել տուաւ . խօսք տուաւ անոր խնդիրքը կատարել, և աւելի հանդիստ ընել տուաւ :

Տեղւոյն գատարանը երեք օրէն հազիւ կրցաւ որոշումն տալ թէ կրնար բանտարկեալին խնդիրքն ընդունիլ, և մասնաւոր յանձնաժողով մ'անուանել՝ զրկուած դատաստանական զրութիւնները քննութեան առնելու համար . և սակայն իր կարողութենէն վեր բան մ'ըբաւ չըլլալու համար՝ սահմանակից նահանգին տեղեկարբելով, փախտականին բռնուիլն ու զանի անմիջապէս իր որոշեալ տեղը փոխադրելու դժուարութիւնն իմացուց, ծանուցանելով նաև թէ՛ որոշած էր մոտիկ ընել այն վկայութիւնները, զորս՝ արգարութիւնն ու ճշմարտութիւնը ի յայտ բերելու նպատակաւ պիտի խօսէր փախտականը :

Յանցաւորին երեսը տեսնելու արդեւքն այս պարագայիս մէջ վերցուելով, ծերունի և պատկառելի քահանայն այս նոր քննութեան ներկայ գտնուելու հրաւիրուեցաւ :

Այն օրը՝ որուն այնչափ անձկութեամբ կը սպասէին, հասնելով ՝ Ալգոյ իր ուժերը ժողովեց, և բժիշկին պատուէրին հակառակ՝ փոխանակ բանտին մէջ մնալու ինքն անձամբ յանձնաժողովին առջին ներկայացաւ : Այս յառաջիկայ դործոյն վստիմութիւնը՝ այն ատիճան Ալգոյի միտքը փառաւորած էր, որ իր փրկութիւնը չափէն աւելի անդին կ'երևէր իրեն :

Ալգոյ գատարաց անջևն ելլելով, երբ տեսաւ որ հովիւն անոնց մէջ նստած էր, աժգոյն գէմքին վրայ իսկոյն բոց մը փայլիլ սկսաւ, որպէս թէ նոյն ինքն Լաման էր տեսածը, և յիրաւի մտքին մէջ երկուքն ալ մի և նոյն էին . իր նամակին մէջ գրած էր հովիւին, թէ կը յուսար օր մը զրպարտութիւնը խայտառակել և իր անմեղութիւնն ապացուցանել . պարագայից զարմանալի զուգալիսուութիւնը՝ յուսացածէն աւելի շուտ այն պատեհութիւնը կուտար իրեն . ուստի իր խոստումները կատարել կարենալուն վրայ զգացած ուրախութիւնն ու փառքը՝ որ իր սիրտը զօրացուցած էին, աչքերուն մէջ կը փայլէին :

— Տեսնո՞ր, ըսաւ Ալգոյ՝ վեհ ու ամուր ձայնով մը . ես՝ ոչ թէ իբրև դրամանեղ կամ իբրև դրամանեղներու մեղակից երկաթի անուրնեբու և զնդանի դատապարտուեցայ, այլ դատապարտուեցայ անոր համար, որ ինձ պահու դրուած աւանդն յանձնել չուզեցի, անոր համար, որ չուզեցի յայտնել այն մարդուն անունը զոր երգուած էի դազանի պահելու . իսկ հիմա՝ զիս լուծելու պահելու ստիպող պարագայները փոխուած են, և կրնամ համարձակ խօսիլ, ուստի իմ յարգանքս մատուցանելով արգարութեան և ճշմարտութեան, կը փութամ յայտնելու թէ՛ աւանդին պահուած տեղը, և թէ՛ այն անձին անունը, որուն պիտի յանձնուի :

Այսպէս խօսելէ յետոյ յանձնաժողովոյ նախագահին մտնեալով, Ալգոյ՝ իր պատրաստած գրութիւնն անոր տուաւ . դատաւորներն այդ գրութիւնն առնելով և կարգալով, չկրցան զարմանքնին բռնել : Յայտնի բան մ'է որ յանձնաժողովը կատարեալ վստահութիւն չէր կրնար ընել Ալգոյի յայտարարութեանն : Այդ յայտարարութիւնը՝ կարելի էր որ ճշմարիտըլար, բայց կարելի ալ էր որ պատրուակ մ'եղած ըլլար ժամանակ վստակելու և արդէն վճուուած բան մը տարակոյտի ենթարկելու համար . այլ սակայն նախագահը ծանոյց, որ այդ յայտարարութիւնը նկատողութեան առնելով՝ անմիջապէս Տիդիսակոն իշխանութեան պիտի հաղորդէր :

— Եւ հիմա՝ աւելցուց Ալգոյ՝ ևս քան զևս փառաւորուելով, ես թէ կորուսած ազատութիւնս ու համեստ մարդոց յարգանքը վայելելէ յառաջ՝ իմ վէրքս ու զայն ծանրացունող բարոյական պատճառները գիտի՛ր գերեզման տանին, սիլ Տեսարք, միտքերնիդ առէք որ մէկէն ՚ի մէկ դատաստան չկտրէք, և զիրաւ չհաւատարմարդու առաքինութեանը, ինչպէս նաև օրինաւոր երևոյթ ունեցող ամեն նշան անխալելի չհամարիք :

Հովիւն՝ որուն ուզողուած էին յայտնապէս այս վերջին խօսքերը, չկրնալով ինքզինքը բռնել, և աչքնները լեցուելով բանտարկեալին վիզը պլլուեցաւ, և ներում խնդրեց անոր վրայ անիրաւ դատաստան ընելուն համար, ըսելով, «Գատարանիս արգարութիւնը՝ զձեզ անմեղ հրատարակելէ յառաջ կարելի է որ այս իրողութիւնները պարզել ուզէ . իսկ ես կը յայտարարեմ, որ ձեր հոգին կարգացի »

և անոնց ճշմարտութեանը համոզուած եմ կանխապէս . ո՛հ ինչո՞ն չեմ կրնար արդեօք իմ համոզումս բոլոր ներկայ եղողներուն սրտին մէջ թափանցել, որ այս կէտիս ազատ ըլլայիք» :

— Ոչ, ըսաւ Ալզոյ . իրաւունք չունիմ օտար դատարանէ մը այդ աստիճան վտահալութիւն պահանջելու . բաւական է որ վաստակեցայ անի ձեզմէ և ձեր . . . ո՛հ Հայր . փութով դայէք և ըսէք անոր որ ես ձեր սիրոյն անարժան չեմ :

Այս խօսքերը թէպէտ անհասկանալի էին դատաւորներուն, սակայն անոնց ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը գրգռեցին : Հովիւն այս փափուկ կէտին վրայ խօսիլ հարկ չհամարելով, միայն աւելցոյց թէ՛ դատարանները սխալական են, և մարդկային օրէնքները՝ սխալ դատաստանի մը չարիքը դարմանելու անկարող և պակասաւոր : «Բայց Աստուած դատաստանները պիտի դատէ» ըսաւ :

Գատաւորներն Աւետարանի պաշտօնէին այս ծանր վճիռին առջև գլուխ ձուկեցին, իսկ Ալզոյ իր ճակատն ևս առաւել բարձրացոյց այնսիսի ցնծութեամբ մը, որ տակաւ առ տակաւ խելքը զլխէն կը տանէր : Աստուած դատաստանները պիտի դատէ, կրկնեց նա . շատ աղէկ . ըսել է որ այս վայրկեանէս զսնոնք դատելու վրայ է . ձեռքերս ու ոտքերս երկաթներուն ներքև մաշեցան ու բրտացան, կրած վիշտերէս՝ մաղերս ժամանակէն առաջ ճերմկեցան . սիրտս զղուանքով թունաւորեցաւ . տարակոյսն ամուլ ըրաւ հողիս . Աստուած . երանի՛ անոնց որ անոր կը հաւատան :

Հովիւն այս խօսքերէն և ներկայ եղողներուն վրայ ըլլալիք տպաւորութենէն ստակալով, կ'ուզէր զանի հանդարտեցնել . բայց Ալզոյ խելքը կորուսեր էր, և չէր կրնար զանի ճանչնալ :

— Ո՛վ էք դուք որ Աստուծոյ անունով կը խօսիք ինձի հետ . անոր մարդարէն, զործակալն էք . դուռնդ և պատրեալ մարդ . Մինայի կամ Թափօրի վրայ տեսար զանի . երկնից բարձրութիւններէն իջնելով անոր անունով սպառնալիք կը բերես թէ ներում . . . աղէկ . հաւտայցուր ինձի քու պաշտօնդ, ցուցնուր՝ Մովսէսի պէս հրաշքներ ընելով . տուր ինձի նորէն սրտիս երկտասարդութիւնը, հողոյս հաւատքն և մտքիս լոյսը՝ որ մարելու վրայ է . արդարութիւն ըսիւր, արդարութիւն . չես գիտեր որ այդ արդարաւոր

թիւնն այս աշխարհքէս վերցած է . ոյժն է, խարերայ դու, ոյժն է որ կը թափաւորէ աշխարհիս վրայ . . . հասա սա զեղեցիկ կինը որ քոյն է, ծիմաղաղեղ շրթունքով, զթալիք նայուածքով, կը տեսնես անի . քու աղջկանդ պէս զեղեցիկ և սուրբ է . ոչ, սխալ է, զրպարտութիւնն է ասի . չես տեսներ ձեռքը բռնած կճեայ ամանին մէջէն բուրոզ նուրբ շողին . այդ շողին խունի չէ, նայէ . այդ շողին՝ թեթև ու մահարեր թոյն մ'է որ շնչած օդերնուս, մեզ լուսաւորող լոյսին, շրթունքներնէս ելլող սիրոյ խօսքերուն մէջ կը խառնուի, բոլորն ալ թոյն է . չէ՛ կ'ըսես, կեղծաւոր . թոյն է՝ կ'ըսեմ, և ամենքնիս ալ թունաւորուած ենք . աչքիս մէջ նայէ՛ ձերունի, ճակատս նայէ՛ հոս . ուղեղիս լաւ նայէ, չես տեսներ այն աղտեղութիւնը, որ զանի կը պատէ, կը թափանցէ և կ'ըստպառէ : Ահա քանի մը ժամս մնացած է . զերեզման մը փորել տուր ինձի համար, և զրէ՛ տասպանաղիբ մը զոր կարգացողը՝ մահուանս պատճառը հասկնայ :

Այս տեղ չկցաւ խօսքը շարունակել, և գլուխը դառնալով զետիւնն ինկաւ փռուեցաւ, որուն վրայ ամենքն ահարեկ՝ ցաւիլ սկսան :

Բաւական ժամէ յետոյ հաղիւ խելքը գլուխը դալով, տեսաւ որ բանտին մէջն էր, մէկ կողմը կեցած էր հովիւր՝ որ անոր ընկերանալու արտօնութիւն առած էր, և միւս կողմը բժիշկը՝ որ ալ յոյսը կտրեր էր անոր բժշկութենէն :

ԻՊ.

ԴՅԱՐՈՋ ՄԸ

Ալզոյի խելագարինն ու անոր պատճառն եղող տարծինակ եւ զելութիւնը բոլոր երկրին մէջ իմացուելով, ամենուն սիրտը շարժեցաւ :

Ալզոյի կենաց գլխաւոր պարագայները մէկումէկու ետևէ յերևան դալով հասկցուեցաւ, որնա մենակեցողութենէ հրաժարեր էր . ուստի տեղ

ւոյն ժողովուրդը՝ որ բողոքական էր, խօսոյն հետեցուց թէ Ալգոյի գատապարտութիւնն ու խեղագարիլը՝ աւամիկ ժողովրդեան նախապաշարմանցն ու կոնքրին վրէժխնդրութեան արդիւնքն էին :

Ընթերցողը կրնայ գուշակել, թէ ամենէն աւելի ո՞վ էր Ալգոյի վիճակին վրայ դողացողը . Կամա՞ գրեթէ Ալգոյիսին պէս վիճակի մը մէջ էր . և թէպէտ հայրը՝ մարդկային նկատումներով կամ ցաւակցութեամբ արդիլած էր Ալգոյի քով երթալու . սակայն Կամա որպէս թէ մադնիսական ներդործութեամբ մը կը զգար, ինչ որ կը կրէր կամ կը մտածէր Ալգոյ իր բանախն մէջ :

Այն խեղայեղութեան տաղանպէն ՚ի վեր՝ խեղճին խեղքը զլուխը չէր եկած երբեք . ասի թէ մտաւոր բարոյական զգածում մը եղած ըլլար, և թէ բժիշկին խօսքին համաձայն՝ վէրքին յառաջ բերած ախտային հիւթոց արդիւնքն, սա յայտնի կը տեսնուէր, որ Ալգոյի առողջութեան վիճակն օր ըստ օրէ վատթարանալու վրայ էր, և վրան տիրող ծանր ու թմրեցուցիչ քնափրութիւնը՝ փոխանակ անոր զօրութիւնները կազդուրելու . կերևէր թէ տակաւ առ տակաւ անոր կեանքը կը մարէր :

Բանախն բժիշկը ուրիշներու հետ խորհրդակցութեան մասնելով, սմանք կը խրատէին որ վիրաւորեալ թեւը կտրեն . հիւանդը՝ որ իր ախտին մահացոյց նշաններուն վրայ խօսուիլն առանց յուզուելու կէտ առ կէտ մտիկ ըրած էր, այս վերջին առաջարկութեան չկրնալով գիմանալ, անդրդուելի կերպարանօք մ'իմացուց, որ ազոր չպիտի հաճի երբեք . ուստի այս վերջին փորձն առաջարկող բժիշկը խօսքը փոխելով ուրիշ գեղ մ'ընելու խորհուրդ տուաւ, որ գէ՛մ գնէ այն թոյնին, որ արդէն հիւանդին արեանը մէջ շրջան կ'ընէր և ուղեղին ամփոփութեանը կը սպառնար . բարոյական յուզմունք մը, նոր ցնծութիւն մը, ազատութիւնը յանակնկալա իմացունելը, ասոնք ամեն գեղէ աւելի ազդեցութիւն կ'ընեն, ըստ բժիշկը : Ե վերջ բանի՛ հիւանդն ինքն իրեն թողուցին :

Ալգոյ իր խոստովանութիւնն ընելէ ՚ի վեր՝ բաւական օր անցեր էր, և գրութիւնը Տիգրանայի դատաւորաց զրկուեր էր . բայց տեղական իշխանութիւնը գեւ սրտասխանին կը սպասէր, որպէս զի արտօնութիւն ունենայ բանտարկեալն ազատ թողելու :

Հովիւն որ աւելի փութով իրաց ելքին կ'ստատէր, սիրան անհանդիստ՝ դողի մէջ էր . երբ կիրակի օրն ըստ սովորութեան բեմը քարոզի ելած էր, դատաւորներէն մէկը գալով իմացուց իրեն, որ քիչ մ'առաջ Տիգրանայի նահանգէն նամակ առեր են, որուն մէջ գրուած է թէ՛ զրկած գրութիւնին տեղն հասեր է, և նշանակուած իրաց ճշմարտութիւնը ոտուղուելով փախտականին անմեղութիւնը հաստատուեր է . թէ աւանդի տէրը դատաստանի ներկայանալով, այն ստակին մասին զոհացուցիչ բացատրութիւններ տուած է, և ինդրած է որ դատապարտեալին պատիւը վերահաստատուի :

Բարի ձեռունիին զղացած ու ռախտութիւնը նկարագրելու հարկ չկայ, որովհետեւ այս լուրն արդէն իրեն համար զարմանալի չէր կրնար ըլլալ . և սակայն ուրիշ շատ պատճառներով սիրտը սաստիկ թունդ ելաւ . և այս պարագայէն ներշնչուելով խօսելիք նիւթը մէկդի թողուց, և իր քարոզին բնաբան ըրաւ Աւետարանին սա խօսքը . «Մի դատէք զի մի գատիցիք» :

— «Այս վայրկենիս՝ ըսաւ ամբիոնէն, այս վայրկենիս ինձի լուր մը բերին, որն որ մեր սիրտը կը մխիթարէ . այս լուրը սա է, որ ստուգուեր է այնպիսի մէկու մը անմեղութիւնը, որ մտակայ երկրի մը մէջ տաղտկալի դատաստանով անպատուութեան և բանախ գատապարտուած էր այնպիսի յանցանքներու համար, զորնա գործած չէր, և որոնք իրօք գործուած ալ չէին : Այս եղելութեան վրայ ուրախութիւննիս կատարեալ պիտի ըլլար, եթէ սիրտերնիս չկտրէր՝ երբ մտածենք որ ծուռ դատաստան մը կտրուեր է, և թէ՛ անմեղ և առաքինի մարդ մը զրպարտութեան զոհ եղեր, իբրև չարագործ երկաթի անուրներու մասնուեր, բանտի մէջ արգիլուեր, և մարդկային ընկերութենէն մերժուած եղունագործներու հետ ապրելու, և հալիլ ու մաշելու ենթարկուեր է՝ առանց յանցանք ունենալու : Մարդուս միտքը կը սարսափի, երբ կը խորհի թէ այն դժբաղդ անձը՝ մարդկային արդարութեան վրայէն իր յոյսն ակամայ վերցունելով, սրտին դառնութենէն կը կարծէ թէ՛ Աստուծոյ երեսէն ինկած է . և կը տարակուսի այն գերազոյն և արդար դատաւորին վրայ որ անաչառ է, և իւրաքանչիւրին՝ ըստ իւր գործոց հատուցանել խոստացած է : Այսնկատուածները մեր ուս-

բախտ թիւնը կը դառնայունեն . ուստի մեր շնորհակալութեան ա-
 աղօթքն առ Աստուած ուղղելէ յառաջ՝ պարտ անձին կ'զղամ ձեր
 ուշադրութիւնը հրաւիրել ծանր և ցաւալի մտածութիւններու . այ-
 սինքն մարդկային նախապաշարմանց խարէութեանը վրայ , և մար-
 դուս դատողութեանն համար շատ անգամ ակամայ և անխուսափե-
 լի եղող սխալանքները՝ կատարեալ եղբայրսիրութեամբ դարմանե-
 լու հարկին վրայ մտածելու : Մարդկային օրէնքը՝ քաղաքական ըն-
 կերութիւնը պաշտպանելու համար ստիպուած է խստութիւն բա-
 նեցունել յանցարարց վրայ , որոնք քաղաքացոց ընկերական կայք
 խղի կը սպառնան . ափ իմ խօսքերուս փաստ չեմ կրնար ընել ,
 այլ պարտաւոր եմ ձեզ կրկնելու , թէ Աստուած այս արկնուուշտ
 իրաւունքին սահման մը դրած է՝ իրեն սլահելով վրէժխնդրութիւնն
 ու դատաստանը , և ընդհանուր ու անխոտոր պարտաւորութիւն մը
 դնելով որ է եղբայրսիրութիւն . մի գատէք և մի դատիցիք կ'ը-
 սէ Քրիստոս . ուրիշ տեղ մ'ալ՝ սիրեցէք զմիմանս , յայտ են ա-
 մենայն օրէնք : կըլսէ» :

Այս տեղ՝ զինանական և խոհեմ հովիւն սկսաւ ընդարձակ ճա-
 ուելով խօսիլ այն սխալ գաղափարներուն վրայ , զորս մարդիկ նախ-
 նի գարուց մէջ յանցանաց և պատժոց մասին տեսնուած բարբա-
 րոտութիւններէն քաղած են : «Յիսուսի Քրիստոսի մեզ առած աս-
 տուածային օրինադիրը՝ ըստ , գեւ մուեալ դրութիւն մ'է . դա-
 տաստան կը կարեն , կը դատապարտեն , կը պատժեն այն կանոն-
 ներով , զորս ջնջեց շնորհաց և եղբայրսիրութեան օրէնքը , զոր ա-
 մենասուրբ և ամենարդար մարդն Յիսուս՝ չար ու անարդ մարդոցմէ
 դատապարտուելով կախաղանին վրայ մուռնելու ասին մեզ քարոզեց՝
 'նոյն ինքն եկեղեցին՝ որ 'ի սկզբան բաւական համարած էր բարո-
 յական պատիժները , որոց անդբունքն էր յանցարորը միւսներուն
 հարորդակցութեանն զտել , հոովմէական եկեղեցին՝ Աստուծոյ կա-
 մայը հակառակ աշխարհային իշխանութիւնը ձեռք անցունելուն պէս
 աքսոր և բանդ գործածել սկսաւ , և մարդոց խիղճն իմանալու և
 մտածութիւնները դատելու իրաւունք մը սեպհականելով , իր այս
 իրաւունքն ու իշխանութիւնն ուրացողները բնաջինջ ընելու սպառ-
 նալիօք՝ կայիկով , տանջանքով և խարոյկով տառապեցոց Եւրո-

պան բոլոր քրիստոնէայ աշխարհին առջև . վարդապետը դահիճ՝
 և քահանայն բանտապան եղաւ . այն վայրկեանէն մասնութիւնը
 սրբազործեցին , զրպարտութիւնը վարձուց արժանի համարեցան ,
 հաւատքը՝ սրոյ զըրութեամբ ընդունել տուին . որով սիրոյ կրօնքը
 ամէն տեսակ բռնութեան մեղսակից և դերութեան դպրոց մ'եղաւ :
 Այլ սակայն հողոյ պահարանը՝ սրբազան և անբռնարարելի է ,
 բռնութիւնը կրնայ մարդու մը ձեռքերը կապել , ոտքերը կոճղի
 զարնել , և որ սոսկալին է՝ տանջանքով և մէկ հարուածով կեանքը
 կտրել . բայց մտածութիւնը՝ ոչ մարդոց , և ոչ մարդոց օրէնքորու-
 թեանցը խաղալիկ կրնայ ըլլալ . մտածութիւնն ազատ է , ինչպէս
 օգը , ինչպէս այն կենսական հեղուկն որ տիեզերքը կը շարժէ և բնու-
 թիւնը կը կենդանացնէ . մտածութիւնն աստուածային բան մ'է .
 վայն անոնց , որ անոր աղատութեանն արդէք դնել կ'ուզեն , և ասի
 իմացունել կ'ուզէր երկնային վարդապետը , երբ ըսաւ . «Մի գատէք» .
 և այս՝ մարդոց արդարութեան խստութիւնը մեղմացնելու սահման-
 եալ սիրոյ կրօնքին անհրաժեշտ մէկ հետեւութիւնն էր , աղարա-
 րութիւն մ'էր՝ դատաստանաց սխալականութեանն ու յանդիմութեա-
 նը դէմ զըուշանալու համար : Դիւթապէս գործելու մէջ յան-
 ցանք չկայ . մարդուս դիտաւորութեանն ու այդ դիտաւորութիւնն յա-
 ուաջ բերող մտածութեան մէջն է յանցանքը . արդ՝ ով կրնայ ը-
 սել թէ կարող է ուրիշ մտածութիւնները ճիշդ գտել , ուրեմն
 ինչ սոսկալի պատասխանատուութիւն կայ դատաւորներուն վրայ ,
 որ դատաստան կը կարեն . օրէնարոց վրայ , որ կը հրամայեն . դա-
 տարանաց վրայ , որ կը դատապարտեն , մտածեցէք , քանի՛ ան-
 մեղներ սխալ երեւոյթներու զոհ եղած են . քանի՛ մարդկային ո-
 գիններ անիրաւ պատժոց ձեռք ապականած են . ինչ անուն տալու
 է մարդուս , երբ կը կատարածի արդարին վրայ , որ Աստուծոյ վրայ
 կատարածիլ ըսել է : Պատմութեանց մէջ կը կարդանք , որ եղած են
 դատարաններ , որոնք՝ դժբաղդ մէկու մը պատիժը կրելէ՝ յետոյ ան-
 մեղութիւնը ճանչցուած ատեն , իրենց սխալանքը խոտովանած են ,
 և առանկով եթէ ոչ անմեղ դատապարտեալին , դէթ արդարութեան՝
 փոխարինութիւն մ'ըրժած են : Մեր մէջն ալ կայ Հին աւանդու-
 թիւն մը , և սովորութիւն մը՝ որ կը ծառայէ մի և նոյն նպատակին ,

ղովին դատակնիքը ձեռք անցունելուն պէս՝ առանց յայտնելի
ճամբայ ելաւ ընկերութեամբ այն անձին, զոր արդէն երկու անգամ
պատահեցանք պատմութեանս մէջ, և գրեթէ ճիշդ վերը յիշուած
նամակին հետ մէկտեղ Ռէյցիոյ արդարութեան պաշտօնատունն հասան:

Բանտարկեալին քոյն երթալու հրաման առնելով, երկուքը մե-
կանց եռանդագին՝ անոր անկողնոյն քով վաղեցին. բայց խեղճ հի-
ւանդը կարողութիւն չունէր՝ իր այսչափ երկար ժամանակէ ետեւ տե-
սած բարեկամին հետ նմանօրինակ եռանդով խօսելու. որովհետեւ
այն ժամանակէն ՚ի վեր որ մինակ թողուցինք Ալգոն, էրբէք միտքն
աղատ եղած չունէր, էրբեմն ախոր քնափութիւն մը կը տիրէր,
և էրբեմն տարտամ խելայեղութիւն մը, որն ո՛ր իր դաղափարնե-
րուն խառնաշփոթութիւնն աւելնալու վրայ ըլլալը կը յայտնէր:

Այլ սակայն իսկոյն ճանչցաւ իր բարեկամին հետն եկող ան-
ձը, այն խորհրդակիր անձանթը, որ երկու անգամ իր աղատու-
թիւնն իմացուց իրեն. — Լոյս և սէր, ըսաւ Ալգոյ՝ կամաց ձայնով
մը. ինչ կ'ուզէք ինձմէ:

— Ձեզի այս տեղէս հանել կ'ուզենք. ալ այս անգամ դուք ա-
ղատ, կատարելագէտ աղատ էք. դատավճիռը ջնջուեցաւ:

— Շատ ուշ, շատ ուշ, ըսաւ Ալգոյ՝ թափառայած աչքերը չորս
կողմը պտտցունելով. լոյսը խաւարի փոխուեցաւ. սէրն ալ մահ գրկեց,
և շատ հեռու է այս տեղս, շատ հեռու է . . . հրեշտակայ վանքէն:

Երկու բարեկամները սարսափած և ցաւալի նախազգացմամբ
բռնուած՝ իրարու երես կը նայէին:

— Ջիս հոն չպիտի տանիք, ըսաւ խելոյեղը:
— Ո՛ր:

— Հրեշտակայ վանքը. սիրտս կը վկայէ որ այն տեղ պիտի ա-
ռողջանամ. սէրն ու մահը՝ ընտիր բժիշկներ են:

— Ե՛ս ալ բժիշկ եմ, ըսաւ անձանթը՝ Ալգոյի դաղափարներն
ուրիշ բանի վրայ դարձունել ուզելով. Էս ալ բժիշկ եմ, և յատ-
կապէս եկայ որ վէրքերնիդ նայիմ, և տեսնեմ թէ ինչ պէտք է
ընել՝ բժշկելու համար:

— Վէրքս այս տեղ է, ըսաւ Ալգոյ՝ մատուցն սիրտը ցուցնելով.
այն տեղ է վէրքս, զոր չէ թէ երկաթներն ու կրակը, այլ զբարք:

Կուրծիւնը յառաջ բերաւ. չէք դիտեր, պատիւը կրակին՝ հետ մէկտեղ
կը պտտէր, պատմութիւնը չէք կարգացեր, կրակը՝ մուխէն կը
ճանչցուի. պատիւը՝ անդամ՝ որ կորսուեցաւ, ալ չկրնար դանտիլ:

— Բայց դուք պատիւնիդ չկորուսիք, ըսաւ դերմանացին՝ ազդու
ձայնով մը. զոյսարտութիւնը միշտ յաղթող չըլլար աշխարհիս վրայ.
քու պատիւդ՝ խեղճ բարեկամ, հիմա ամեն ժամանակէ աւելի յայտ-
նի և շքեղ է. քու հաւատարմութեանդ մարտիրոսացած ես, որով-
հետեւ յանձնառու եղար անուանարկութեան և մահու գէմ՝ գնելու,
քան թէ երեւան հանելու այն առանգը, զոր հայրենիքը ձեզ յանձ-
նեց. բոլոր աշխարհք պիտի իմանայ ինչ որ դործեցիր, ինչ որ
կրեցիր. բոլոր աշխարհք համօրէն պիտի սքանչանայ քու հաւատար-
մութեանդ ու ըրած վեհանձն զոհողութեանդ վրայ:

— Խօսքերնիդ զիս կը տփտփեն, ըսաւ հիւանդը, կարծեմ հիմա
ձեզի պիտի ճանչնամ. ա՛հ, այո՛:

Այս վայրկեանիս խորունկէն խառնաշփոթ աղմկի ձայն մը զայլով,
խօսակցութիւնին ընդմիջեցաւ. անձանթը՝ բանտին երկաթապատին
առջին վաղելով տեսաւ, որ վարը հրապարակին մէջ խուռն բազ-
մութեամբ ժողովուրդը լեցուեր էր, և «Գուրս հանելու է բանտար-
կեալը, դուրս՝ անմեղը» կը սրուային. և կարծես թէ բանտին վրայ
յարձակելով բռնութեամբ զանի ազատել կ'ուզէին:

Բայց արդէն բանդարանն Ալգոյն թող տալու հրաման ընդունած
ըլլալով, բանտին դուռը բացուեցաւ. ձերոնի հովիւն երիտասար-
դական եռանդով սանդուխէն վեր ցաթկելով մէկ վայրկեանի մէջ
Ալգոյի անկողնոյն քով հասաւ. — Ազատ, ազատ, գոչեց. ժողո-
վուրդը ձեզ կ'ուզէ, ձեզ ճերմակ վարդ պատրաստած է:

— Զգուշացէք, ըսաւ բժիշկը, չափազանց յուզուե՛՛ր՝ կրնայ ըլ-
լալ որ վնասէ:

— Բայց չկրնար ըլլալ որ օդուտ ընէ, պատասխանեց հովիւր.
ո՛վ կրնայ դիտնալ, վիրաւորեալ թե՛ն է թէ սրտին ցաւն է՝ ա-
նոր հիւանդութիւնը ծանրացնողը. նախախնամութեան ապախինիք:

— Ամբը ձերն է, պատասխանեց բժիշկը. ինչ որ ալ ըլլայ,
ես անոր քովէն չպիտի զատուիմ:

Ալգոյ ազլած մնացեր էր իբրև անզգայ. բայց միտքը կամաց կա-
մաց քիչ մը խաղաղելով, ձեռքը հովիւին երկնցուց ըսելով:

— Ահա ձեզ տուած խօսքս կատարեցի . ըսէք ձեր աղջկանք , որ ես ոչ չարագործ եմ , ոչ ալ անարժան հիւր մը :

— Այո , այո , ըսաւ բարի ծերունին . ազի գու՛ք պիտի ըսէք իրեն , երբ նա իր ձեռօքը ձեզ ներկայցունէ վարդը , որ ձեր հաւատարմութեանն ու առաքինութեանը նշանակն է . երթանք :

— Զանի տեսնել , հետը խօսիլ , գոչեց ուրախութեամբ միտքն յափշտակուած . երթանք ուրեմն , երթանք : Եւ պառկած տեղէն ցամկեւով ելաւ անկողինէն : Երեք բարեկամները շատ զժուարութեամբ զանի հաղօտեցուցին , և վիրաւորեալ թեւը կատովմը կախեցին : Խորհրդակիր բժիշկը իր թիկնոցին մէջ պլլեց Ալգոն , որ անոր և հովիւին վրայ կրթնելով սանդուխէն վար իջաւ : Երբ բանդին արտաքին գուռն հասան , ժողովուրդն ընդհանուր ցնծութեան աղաղակներով ընդունեց զանի . արքե կանայք , երկրին բոլոր բնակիչները վաղեր եկեր էին՝ անմեղութիւնը ճանչցուած գատապարտեալի մը տօնախմբութիւնն ընելու այն մտանաւոր արարողութեամբ , որ վաղեմի սովորութիւն եղած է Ռէյիոյ լեռնային դաւաճներուն մէջ :

Ալգոյ ճշգիւ չէր գիտեր բանին էութիւնը . բազմութիւնը և խառնաշփոթ աղաղակները՝ առաջին անգամ վախ պատճառեցին իրեն , որովհետեւ միայն ծաղրելի տօներու և մտտի ցոյցերու համար այսպիսի բազմութիւն ժողովը տեսած էր սովորաբար : Բայց որովհետեւ հովիւն Էմմայի վրայօք խօսած էր Ալգոյի , և Ալգոյ ալ միայն անի լսեր և միայն անի հասկցեր էր , ուստի աչքովն Էմման կը վնասէր բազմութեան մէջը , բայց չկրնալով տեսնել , առաջ կը քալէր առանց ուրիշը մտիկ ընելու :

Ալգոյի և զանի բռնող բարեկամներուն առջև բազմութիւնը երկուքի ձեղքուեցաւ , որոնք մէջ տեղէն անցնելով՝ ժողովուրդն ալ ետևնուոն մինչև եկեղեցի դացին : Այս տեղ կը սպասէր ժողովրդեան արիւ ձեկ մասը , երկրին գատաւորներն և խումբ մ'օրելորդներ , որոնց մէջն էր նաև Էմմա՝ անպատմելի զցացմամբ յուզեալ , ճերմակ հազուատով և ձեռքը ճերմակ վարդ մը բռնած , զոր գեռնոր փոքուցիք էին պարտեղէն :

Էմմա՝ Ալգոյի ներս մտած ասենը տեսնելով որ իր ազատիչը երկար ու անհամար վիշտեր կրելէն և վիրաւորուելէն գեղներ էր ,

նկատ լալ , և մարածի սէս դետինն ինչալու վրայ էր . բայց իր ընկերներուն ներկայութիւնն ու իր կատարելիբ հանդիսական գործը մտքին առջև բերելով զորայաւ , և ինքզինքը բռնեց :

Նոյն միջոցին աղօթաանդուոյն մինչև ծայրը տարին Ալգոն , և հանհինօրեայ ու հանդիստ ամտի մը վրայ նստեցուցին :

Հովիւը բեմը ելաւ ուսկից կը քարօղէր սովորաբար . կրօնական լուծիւն մը տիրեց ժողովրդեան մէջ , և հովիւը՝ իր քիչ մ'առաջ կիսկատար թողած ատենաբանութեան շարունակութիւնն ընելով , սկսաւ խօսիլ այսպէս . — «Ո՛վ հաւատացեալներ , օրհնեմք ճշմարտութեան և արդարութեան Աստուածը , որ հաճեցաւ ստուծութիւնը խոյտառակել և զրպարտալին անմեղութիւնը լուսոյ սէս երևան հանել : Այս վաղեմի սովորութիւնը մեզ միջոց մը կ'ընծայէ , որով կը կարենամք օրինաց պակասութիւնը դարմանել , և սխալ դատաստանի մը զոհ եղող դժբաղլը՝ իր սրտուոյն մէջ վերահաստատանել՝ ժողովրդեան աչքին առջև : Արդ՝ ես անմեղ կը յայտարարեմ այս անձը , որ հեռաւոր երկրի մը մէջ ծնած է , և կարծես նախախնամութիւնը զանի յատկապէս այս ձորերուս մէջ զրկած է որ այս պատույ վիշտիանն ընդունի՝ իբրև նոր մկրտութիւն մը , որ ամեն արասներէ կը սրբէ և ամեն կասկածներէ կը մաքրէ զանի . Աստուած տայ որ միշտ այսպէս ուղիղ ճամբուն մէջ մնայ , և մեզի հետ օրհնէ զԱստուած , որ ճշեալները երեսէ չձգեր և կ'ազատէ արգարը՝ իր թշնամիներուն ձեռքէն :

Այս խօսքերն ըսելէ յետոյ՝ ձեռքով նշան մը տուաւ աղջկանց խմբին , որ քիչ մը հեռուն էր . Էմմա անոնց առջին անցնելով սկսաւ դողդոջուն օտքերով քայլել դէպ 'ի Ալգոյ , և առջևն հասածին պէս՝ նուիրական ամբիծ վարդը ներկայացուց անոր .

— Էմմա , Էմմա , գոչեց Ալգոյ՝ նստած տեղէն ելլելով և անոր դիմացը նետուելով :

Այս երկու գեղնած գէմքերը միևնոյն վայրկենի մէջ կենդանի կարմրութիւն մ'առին , և երկուքին ալ սրտերուն այնպիսի ուժղին սէր մը տիրեց , որ ինքզինքնին կորսնցուցին . Ալգոյ դէպ 'ի ետին ամոռին վրայ ինկաւ , և օրիորդն ալ իր ծունկերուն վրայ փռուեցաւ անզայ :

Այն սասն՝ հովին այս արարողութեան յատուկ երգն սկսաւ, և հազարաւոր յուղեալ ձայներ սկսան այն վսեմ և քաղցր եղանակն երգել. այս շքեղ երգերուն վրայ՝ աղջկան խելքը դլուխն եկաւ, բայց խեղճ Ալլոյի տարուած ամեն ջանք անօգուտ եղաւ: Կնչպէս որ բժիշկը կանխաւ ըսած էր, Ալլոյի կրած ցնցումը սաստիկ ըլլալով, փոխանակ անոր խելայեղութեանն յաղթելու, աւելի ևս գրգռած ու սաստկացուցած էր. ուստի և առջի ցնորումը նորէն տիրելով, սկսաւ ըսել. — Տիրամայր հրեշտակաց վանքին, հասնիք. ահա սէր և մահ. ինչու ինձ խաղաղութեան համբոյր չես տար. Էմման, իմ սիրելիս, այս վարդը իմ առաջատար անկողնոյս վրայ դնելու պէս՝ գերեզմանին վրայ դիր. ալ զրպարտութեան թունալի շունչը չպիտի կրնայ իմ յիշատակս թշնամանել և առունս անպատուել:

Այս խօսքերը լսողները կուլային, իսկ հեռուն եղողները երգը կը շարունակէին առանց դիտնալու, որ Ալլոյ վշտերով հայեր ու մաշեր էր, և այս տարածամ արդարութեան արդիւնքը վայելէէ հեռու՝ հողին փչելու վրայ էր,

Ալլոյի նուազեալ մարմնը խուցը փոխադրեցին, ուր հովին ու բարեկամները վազելով՝ ՚ի զուր ամէն ձեռքերնուն եկածն ըրին խելքը դլուխը բերելու համար:

Գէմքին վրայ զուարթ ու անպատմելի ուրախութիւն մը կը նշմարուէր, բայց սիրտը պաղեր ու անշարժ մնացեր էր, և Էմմայի ձեռքն անգամ՝ ալ չէր կրնար այն սրտին բարախում աղղել:

ՎԵՐՁ



2812

2013

